

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ**1. ԱՐՏՅՈՒՐ ՄԵԴՐԱԿՅԱՆ**

Ազգային անվտանգության իրավունքի և անվտանգության հարաբերակցությունը հստակեցնելու անհրաժեշտությունը իրավունքի առ ճյուղի ձևափորման համատեքստում

2

2. ՍԱՄՎԵԼ ԱՌԱԳԵԼՅԱՆ

Սահմանադրական դատարանի հավասար մատչելիությունը՝ որպես սահմանադրական արդարադատության սկզբունքներից մեկը.օրենսդրական կարգավորման հիմնախնդիրներ

11

3. ԱՐԱՄ ՎԱՐԴԵԿՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ՅՈՒՂՔԱԾՅԱՆ
Հարկային արգելանքի ինստիտուտի կիրառման որոշ իրավական խնդիրներ

17

4. ՍԻՍԱ ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ

Չենված երեխայի իրավական կարգավիճակի հիմնախնդիրները երեխայի իրավունքների համատեքստում

21

5. ՊԱՎԵԼ ԹՍԴԵՎՈՍՅԱՆ

Փոխադարձության առկայությունը՝ որպես օտարերկրյա դատական ակտերը Հայաստանի Հանրապետությունում ձևաչելու և կատարելու նախապայման

25

6. ԺԻՐԱՅՐ ՂԱՐԱԳՅՈԶՅԱՆ

Թմրամունության, թմրամիջոցների և հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառության քրեաքանական բնութագիրը

37

7. ԼՈՒԻԶԱ ԾԱՏՈՒՐՅԱՆ

Տեղեկատվության՝ որպես քաղաքացիական իրավունքի օբյեկտի (նոու-հաու-ի) իրավական կարգավորումը

41

8. ԳՈՒՐԳԵՆ ՍԱՀՈՅՅԱՆ

Ոստիկանությունում ծառայողների պատասխանատվության առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետությունում

46

9. ՎԱՀԵ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

Հանցագործ սուրյեկտիվ կողմի ֆակուլտատիվ հատկանիշները

54

10. ՀԵՅԴՐԻ ՄԱՍՈՒԴ ՄԱՍՈՒԴԻ

Քրեական պատասխանատվության տարիքը Իրանի հայամական Հանրապետության օրենքներում

65

11. ԿԱՐԻՆԵ ՀԱԿՈԲՅԱՆ

Կայուն զարգացման հայեցակարգը շրջակա միջավայրի միջազգային-իրավական պահպանության հանատեքստում

71

12. ՆԱՐԻՆԵ ԴՎՎՈՅՅԱՆ

Իրավունքի կիրառումը որպես իրավունքի իրականացման հաստուկ ընթացակարգի տեսակների և ծննդի դասակարգման հիմնախնդիրները

77

13. ՅՈԼԻՅԱ ՄԱՏՎԵԵՎԱ

Principle of legal certainty and problems of its application

83

14. ՎԱԼԻՋՋՈՆ ԱԲԴՈԽԱՄԻՏՈՎ

Особенности уголовно-правовых мер противодействия на преступления, связанные с религиозным экстремизмом в Республике Таджикистан

88

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ >>

ԱՐՏՅՈՒՐ ՄԵՂՐԱԿՅԱՆ

ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի մարդու իրավունքների եվրոպական դատարանի հետ կապերի վարչության պետ,
իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ



ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՏԱԿԵՑՆԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՆՈՐ ՃՅՈՒՂԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԱՍՏԱՔՈՒՄՈՒՄ

Երկրորդ հազարամյակի վերջին տասնամյակը հայերի համար լի էր մարտահրավերներով՝ անկախացում, սեփական պետականության կերտում, պարտադրված պատերազմում հայքանակի նվաճում և, ընդհանրապես, որակապես նոր խնդիրներ, որոնց լուծումները պայմանավորված էին մեզնից յուրաքանչյուրի հետ: Մենք մի կողմից կանգնած էինք սեփական արժեքները վերարժեքավորելու անհրաժեշտության առջև, մյուս կողմից փորձում էինք պահպանել ու պաշտպանել մեզ համար անհրաժեշտ արժեքները՝ պայմանով, որ պահպանելով մեկը՝ շվեյսենք մյուսը: Նման իրավիճակը, դժբախտաբար կամ բնականաբար, շարունակվում է նաև այսօր: Մենք բոլորս փորձում ենք վերանայել սեփական արժեքները, դրանց տալ նոր (նորացված) տեսք, բայց միաժամանակ փորձում ենք գնահատել դրանց առաջնայնությունը, ինքներս մեզ համար պարզել, թե որքանով են այդ արժեքները համադրելի ներկա իրականության պայմաններում՝ ոչ անվտանգ և «արդի» մարտահրավերներով լի աշխարհում: Մի կողմից մենք դիտարկում ենք «Եվրոպականացման» («արևմտականացման») հնարավորությունն ու անհրաժեշտությունը՝ որպես «վերադարձ դեպի մեր արմատները», մյուս կողմից ականատես ենք լինում աշխարհաքաղաքական առանցքի՝ Արևմուտքից Արևելք կամ «Ատլանտիկ օվկիանոսի Խաղաղ օվկիանոս» տեղաշարժիմ² և համադրում ենք ազգային շահերն ստեղծված իրականությունը⁴, մյուս կողմից ականատես ենք լինում համաշխարհայնացման (գլոբալիզացիայի) «ան-

կոտրում» լնիքացքիմ⁵, «գլոբալ քաղաքական զարթոնքին»⁶ և տեղեկատվական միջավայրի օրեցօր ընդարձակմանը⁷:

Այսօր մեր բառապաշտում հանդիպում են բառեր, որոնք ընդամենը մի քանի տարի առաջ անհասկանալի, տարօրինակ էին քվում. «վիրտուալ հասարակություն», «օնլայն ընկերություն» և այլն: Տեղեկատվական ազատության ներկա պայմաններում յուրաքանչյուրը որ համակարգչի ընդամենը մի քանի կոճակի սեղմանք կարող է գտնել ցամկացած տեղեկատվություն, որը նրան հետաքրքրում է: Ընդ որում այդ հետաքրքրությունը կարող է նրա մոտ առաջանալ ոչ միայն սեփական մտորումների արդյունքում, այլ նաև հազարավոր կիլոմետրեր հեռու գտնվող իր «վիրտուալ ընկերոջ» հետ «օնլայն շփումների» հետևանքով, քանի որ երկուսն էլ բնակվում են «գլոբալ գյուղում»⁸: Այստեղ նրանք հավասար են, նրանք նույնն են: Բայց նրանց հավասարությունն ու նույնությունը բացարձակ չեն: Նրանք ձևավորվել են միմյանցից տարբերվող հասարակություններում, տարբեր քաղաքակրություններում: Նրանք ապրում են պետություններում, որտեղ նույնական չեն ազատության և բարյականության չափերը, որովհետև տարբեր են նաև նրանց իրավական մշակույթները. մեկի համար բարյականը կարող է մյուսի համար լինել անբարյական, մեկի համար իրավականը և օրինականը՝ մյուսի համար հակաբավական և հակաօրինական:

Ո՞րն է դրա վտանգը. ի՞նչ է վտանգվում ստեղծված իրականությունում: Վտանգվում է, ըստ էության, անվտանգությունը, որի երաշխավորումը բարդանում է նման պայմաններում: Ընդ որում վտանգվում են անվտանգության բոլոր անկյուննե-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

րը, եթե բացակայում է կամ թերի է միասնական վերահսկման մեխանիզմը: Եվ միակ «գործիքը», որով հնարավոր է կառուցել այդպիսի մեխանիզմ ու երաշխավորել անվտանգությունը, *իրավունքն*՝ որպես յուրօրինակ կարգավորիչ (ոեգույատոր):

Իրավունքը և անվտանգությունը փոխվագացված են: Դրանք միմյանց փոխլրացնող սոցիալական երևույթներ են՝ արժեքներ, որոնց պահպանումն ու պաշտպանությունը յուրաքանչյուր անհատի, ողջ հասարակության և ընդհանրապես պետության առաջնային պարտավորություններից են, քանի որ բխում են առանձին վերցրած յուրաքանչյուրի և միասնականության մեջ բոլորի շահերից: Յուրաքանչյուր անհատի *ցանկությունն* է ապրել և արարել անվտանգ պայմաններում, յուրաքանչյուր հասարակության *ձգուումն* է ստեղծել անհրաժեշտ պայմաններ, որտեղ անհատը հնարավորություն կունենա կատարելու իր ցանկությունը, իսկ յուրաքանչյուր պետության՝ իբրև տվյալ հասարակության «պաշտոնական ներկայացուցչի»¹⁰ նպատակն է պաշտպանել հասարակության ձգուումը՝ որոշակի պայմանների ստեղծումը, որտեղ անհատը կապրի և կարարի անվտանգության մեջ: Ընդ որում այդ ցանկությունը, ձգուումը և նպատակը, նաև (ու հատկապես) այդ ցանկությանը, ձգուումնը և նպատակին հասնելը ուղիղ համեմատական են անհատի, հասարակության ու պետության պահանջմունքներին և բխում են նրանց շահերից:

«Ցանկություն», «ձգուում», «նպատակ» բառերը նույնը չեն, սակայն այդ բառերը միշտ կապացված են և փոխլրացնում են միմյանց: Այդ բառերը նաև ոչ միշտ են նույնական, բայց դրանք միշտ միասնական են: Դրանք կիրառվում են կամ կարող են կիրառվել առանձին, սակայն տրամաբանական կապով ենթադրվում ու փոխգործակցում են համակցության մեջ. չկա ձգուում առանց ցանկության, և չկա նպատակ, ու չի էլ կարող որևէ նպատակ իրագործվել առանց որոշակի ձգուում: Այնպես, ինչպես «ցանկությունը», «ձգուումը» և «նպատակը» միասնական են ու փոխկապացված, նույնպես միասնական ու փոխկապացված են «անհատը», «հասարակությունը» և «պետությունը»: Դրանք մեկ միասնություն են, շղթա, որը չի կարող կապակցվել առանց մեկը մյուսի: Այդպիսին են նաև նրանց շահերը՝ որպես «օբյեկտիվ պահանջմունքների սուբյեկտիվ արտահայտման ձև»¹¹:

Չկա պետություն և չկա պետական շահ առանց հասարակության ու հասարակական շահի, և չկա ու չի էլ կարող լինել հասարակություն ու հասարակական շահ առանց անհատի և անհատական շահի: Անհատը չի կարող իրականացնել իր ցանկությունը, եթե հասարակության մեջ չլինի համապատասխան պայմաններ (միջավայր) ստեղծելու ձգուումը, իսկ հասարակության որոշակի ձգուումն անօգուտ է, եթե պետությունը չունենա համապատասխան նպատակ: Այլ խոսքերով՝ պետության նպատակը պայմանավորված է հասարակության ձգումամբ, իսկ հասարակության ձգուումը՝ անհատի ցանկությամբ: Եվ այդ վիճակը միշտ էլ առկա է, քանի որ «սնվում» է փոխադարձարար կապակցված ու պայմանավորված պահանջմունքներով (շահերով):

Իսկ ո՞րն է «անհատի շահ—հասարակության շահ—պետության շահ» միասնության կապն իրավունքի և անվտանգության հետ: Այս հարցին պատասխանելու համար փորձենք պարզել, թե (1) ինչ է իրավունքը, և ինչ է անվտանգությունը, (2) ում են *հարկավոր* իրավունքն ու անվտանգությունը, (3) ինչպիսին է իրավունքի և անվտանգության *հարաբերակցությունները*, և ինչպիսին այն պետք է լինի¹²:

Ի՞նչ է իրավունքը: Իրավունքի տեսության գիտության մեջ «իրավունք» հասկացության շուրջ ձևավորվել են բազմաթիվ մոտեցումներ, սակայն միասնական մոտեցում առայսօր ձևավորված չէ: Գերմանական դասական փիլիսոփայության հիմնադիր Ի. Կանտի «Իրավաբանները դեռ սահմանումներ են փնտրում իրավունքի սեփական բնորոշման համար» բառերը ստվերի պես «հետևում» են իրավագիտությանը, և այսօր՝ ավելի քան 200 տարի անց, դրանք դեռ առկա են, թվում են առավել «հնչեղ»: Այնուայն հավանականությամբ այդ բառերն անփոփոխ և նույնական «հնչեղ» կմնան ևս 200 տարի, ու տարեցտարի (հավանաբար անվերջ) մենք ականատես կլինենք իրավունքի նոր՝ բազմաթեսակ և տարատեսակ, հիմնավորված կամ չիմնավորված սահմանումների (բնորոշումների):

Դժվար է պատկերացնել, որ կգտնվի իրավունքի որևէ բնորոշում, որը չի արժանանա քննադատության: Այնուամենայնիվ, մենք կփորձենք ներկայացնել իրավունքի վերաբերյալ սեփական դիքորոշումը, քանի որ խնդիրն ունի ոչ այնքան տեսական-գիտական, որքան գործնական-կիրառական նշանակություն (հատկապես՝ իրավաստեղ-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ծագործական, իրավակիրառական և իրավապահպանական տեսանկյուններից): Ցանկացած անհատի, հասարակության և ընդհանրապես յուրաքանչյուր պետության համար չափազանց կարևոր է իրավականի հստակեցումը, քույլատրելի այն սահմանի ընդգծումը, որի շրջանակում անձինք (Փիզիկական, ոչ Փիզիկական) պետք է գործեն ու համագործակցեն: Այդ հստակեցումն է, որ անհատի համար կարող է երաշխավորել նրա անվտանգ, կայուն և իրավաչափ գոյատևումը (շահերի ապահովումը) տվյալ հասարակության մեջ, հասարակության համար կարող է երաշխավորել նրա անվտանգ զարգացումը (շահերի ապահովումը) միջազգային կարգում:

Իրավունքը բազմատարը, բազմաշերտ և բազմանկյուն երևույթ է: Այն նաև, պրոֆեսոր Հ. Ստեփանյանի բնորոշմանը, «քազմաշափ երևույթ է»¹³, որի պատճառով «քաղաքակրթության ծագման և գոյության ժամանակից ի վեր մարդու փորձում է պարզել, թե ինչ է իրավունքը, որն է նրա բովանդակությունը, էությունը, իմաստը, արժեքը և բազմաթիվ այլ հարցեր: Այդ հարցերին պատասխանելու համար ստեղծվել են բազմաթիվ կոնցեպցիաներ, ուսմունքներ, տեսակետներ: Այդպիսիք տարբերվում են միմյանցից, և այդ տարբերությունը պայմանավորված է իրավարմբոնման առանձնահատկություններով»¹⁴: «Իրավարմբոնումը» (կամ «իրավահասկացողությունը») իրավունքի ըմբռնումն է, այսինքն՝ այն, թե ինչպես ենք մենք (այս կամ այն ժամանակահատվածում) ըմբռնում իրավունքի իմաստը, ինչպես ենք հասկանում, ընկալում այն, նրա բնույթը:

Գոյություն ունեն տարբեր մոտեցումներ, իրավարմբոնման բարբեր տիպեր: Որպես ընդհանուր կանոն՝ տարբերվում են իրար հակադրվող երկու խումբ տիպեր՝ իրավաբանական կամ յուրիստական (լատիներեն *jus*՝ «իրավունք», բառից) և լեզվական կամ օրենքական (լատիներեն *lex*, *legis*՝ «օրենք», բառից)¹⁵: Առաջինի հիմքում դիտարկվում է բնական իրավունքը (*jus naturalism*), որը «սննվում» է բնույթունից, այդ թվում՝ մարդու բնույթունից: Այն բնական է, բնական օրինաչափությունների արդյունք և դրւու է արտաքին որևէ միջանակությունից: Երկրորդի հիմքում դիտարկվում է պոզիտիվ իրավունքը (*positivism*), որը «սննվում» է

պետության կողմից, այսինքն՝ դրա հիմքում պետության կամայականությունն է, նրա քմահաճույքը, կամքը, իսկ առավել կոնկրետ՝ իրավական նորմը, որը սահմանվել, գործի է դրվել արտաքին միջամտության արդյունքում¹⁶: Կան նաև այլ տեսակետներ, որոնց համաձայն՝ այդ տիպերն են լեզվատականը, բնաիրավականը և լիբերտարը (կամ «ազատականը»),^{17,18} մոնիստականը և պլուրալիստականը¹⁹, նորմատիվը (կամ նորմատիվիստականը) և անալիտիկը (կամ վերլուծականը), որտեղ առաջինն էլ իր հերթին լինում է իմացերատիվ (իրամայական) և կրիտիկ (քննադատական)²⁰:

Տեսական գրականության մեջ իրավունքի բնութագրման (սահմանման) առումով գոյություն ունեն տարբեր կարծիքներ: Մի դեպքում իրավունքը «կամք է»²¹, «համընդհանուր ազատություն» (կամ «ազատության ձև»)²², մյուս դեպքում այն «նորմ է»²³, «նորմերի ամբողջություն»²⁴ («նորմերի համակցություն»)²⁵) կամ «նորմերի համակարգ»²⁶, մեկ այլ դեպքում իրավունքը «շահ է»²⁷, «շահերի բաշխում»²⁸ կամ «շահերի սահմանափակում»²⁹: Այն նաև հանդես է գալիս որպես «քնական մեխանիզմ»³⁰, «սոցիալական ինստիտուտների համակարգ»³¹ կամ պարզապես «հասարակական հարաբերությունների կարգ»³²:

Ամեն դեպքում, եթե փորձենք համախմբել իրավունքի բնորոշման (կամ իրավարմբոնման) գրեթե բոլոր և առայսօր հետազոտված տեսությունները, ապա կտեսնենք, որ իրավական միտքը (հատկապես՝ դասական արևմտյան իրավական միտքը, որը հավանաբար ընկած է նաև հայ իրավական մտքի հիմքում) իր տեսական զարգացման ընթացքում ձևակորել է իրավունքի ըմբռնման (հասկացողության) երեք հիմնական տեսական-իրավական մոտեցումներ կամ տեսություններ³³: Ընդ որում յուրաքանչյուր տեսության հիմքում մեկ հարց է՝ ո՞րն է իրավակազմավորման աղբյուրը, մարդու՝ որպես անհատի բնույթունը, հասարակությունը, թե՝ պետությունը: Այլ կերպ ասած, ըստ այդ մոտեցումների՝ իրավունքի բովանդակության հիմքում կամ անհատ է ու նրա բնույթունը, կամ հասարակությունն է, կամ էլ պետությունը:

Իրավարմբոնումը չի կարող սահմանափակվել միայն իրավունքի բովանդակությամբ. իրավարմբոնման համար կարևոր նշանակություն ունի նաև իրավունքի ձևը, դրա դրսևորումները: Իրավունքը այս տեսանկյունից արտահայտվում է երեք

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ձևով (այսինքն՝ ունի երեք դրսուրում)՝ իրավագիտակցություն, հասարակական հարաբերություն և իրավական նորմ, որը կարգավորում է այդ հասարակական հարաբերությունը³⁴: Այստեղ փաստորեն իրավագիտակցությունը բնութագրական է անհատի հետ և անբաժան է նրա իրավագիտակցությունից, հասարակական հարաբերությունը կապակցված է հասարակության հետ, որտեղ ծագում, փոփոխություն և դադարում են տվյալ հարաբերությունները, իսկ իրավանորմը նույնականացվում է պետության հետ, որի կողմից ճանաչման (ընդունման) և պաշտպանության հետևանքով այդ նորմը դառնում է պետության կամքը, ազդեցություն է գործում անհատի գիտակցության վրա և կարգավորում է համապատասխան հարաբերությունները³⁵:

Իրավաբնուման վերը նկարագրված տեսությունների հիմնական ուղղությունների բնութագրական պատկերի հիմնա վրա կարելի է արձանագրել, որ իրավունքը զարգացող (դիմամիկ) և բարդ (բազմատարր, բազմաշերտ, բազմանկյուն) երևոյթ է, իսկ դրա բովանդակության մեջ՝ շերտերի արանքում և անկյուններում (կամ գուցե դրանց հիմքում), անհատն է և նրա բնությունը, հասարակությունն է ու պետությունը: Եվ քանի որ անհատը, հասարակությունն ու պետությունը միասնական են, հետևաբար միասնական պետք է դիտարկվեն և բնութագրվեն իրավունքի բոլոր շերտերը, բոլոր անկյունները (որոնց հիմքում փաստորեն անհատական տարրն է, հասարակական տարրը, պետական տարրը): Այս առումով, գտնում ենք, որ իրավունքը սոցիալական այնպիսի երևոյթ է, որի լիարժեք և ամբողջական ընկալման համար անհրաժեշտ է այն դիտարկել (և ըմբռնել, հասկանալ) ոչ թե նրա շերտերի հիմքում գտնվող անհատի ու նրա բնության (անհատական տարրի), հասարակության (հասարակական տարրի) և պետության (պետական տարրի) տարանջատվածության անկյունից (ինչպես արվել է քննարկված երեք ուղղությունների կողմից), այլ ամբողջականության հարթության վրա՝ անհատին, հասարակությանը և պետությանն ընդունելով որպես առանձին, բայց միաժամանակ ոչ առանձնացված միասնություն:

Ի՞նչ է անվտանգությունը: Հին Հռոմի ամենահայտնի փիլիսոփա և իրավագետ Կիկերոնի գնահատմամբ՝ կենդանի բոլոր էակները բնության կողմից օժտված են այնպիսի մի շնորհը, որով նրանք ձգուում են պաշտպանվել, զերծ մնալ այն

ամենից, ինչը վնասակար է, վտանգավոր: Բոլոր էակներն ել ցանկանում են համախմբվել և սերունդ քողներ, սակայն ի տարբերություն կենդանի մյուս էակների՝ մարդու՝ իրեն բանական էակ, անտարբեր չէ այն ժամանակի նկատմամբ, որում ինքն ապրում է: Նա փորձում է հասկանալ ներկան և այն համադրելով անցյալի հետ՝ կանխորշել ապագան՝ այն ժամանակը և միջավայրը, որտեղ ապրելու է³⁶: Այս առումով մարդու համար առավելապես հետաքրքրական են նաև մյուս մարդիկ (նրանց ցանկությունները, ձգուումները, շահերը), որոնց հետ նա պետք է համախմբվի, համագրծակցի կամ ազդեցություն գործի նրանց վրա ու կառուցի այնպիսի միջավայր, որտեղ վտանգը բացակայում է:

Վտանգի հակադիր կամ փիլիսոփայական տեսանկյունից համահարաբերական կատեգորիան անվտանգությունն է: Արդի հայերենում «անվտանգություն» բառը բացարկվում է որպես «անվտանգ լինելը», այսինքն՝ «ոչ վտանգավոր, վտանգ չպարունակող, վտանգից զերծ, ապահով» վիճակում գտնվելը (լինելը)³⁷: Ուստեղենում այդ բառը (bezopasnostъ) նշանակում է «վտանգի բացակայություն» (Վ. Դալ) կամ «վիճակ, երբ որևէ մեկին վտանգ չի սպառնում» (Ս. Օժեգով)³⁸: Անգլերենում այն (security) բնորոշվում է որպես «վտանգից կամ վնասից զերծ լինելու վիճակ»³⁹:

Ինչպես նկատում ենք, անվտանգությունը նույնպես բարդ երևոյթ է, և նրա բոլոր անկյուններում, շերտերում բացառված է վտանգը, իսկ համապատասխան սուբյեկտների շահերն ել պաշտպանված են: Հիմնավորված է թվում այն տեսակետը, որ անվտանգությունը ունի նաև զարգացող (դիմամիկ) բնույթը⁴⁰:

Եթե ընդհանրացնենք, ապա կտեսնենք, որ անվտանգությունը սուբյեկտի այն վիճակն է (դիմամիկ վիճակը), երբ այս կամ այն գործոնն այլևս բացասաբար չի ազդում նրա գոյատևման վրա. վիճակ, «երբ պաշտպանական մերողների և մեխանիզմների ապահովումը հնարավորություն է տալիս հաջողությամբ դիմակայել անձի, հասարակության և պետության (ընդգծումը մերն է՝ Ա.Ս.) շահերին ուղղված ցանկացած ուսնագության»⁴¹:

Անվտանգության օրինակը, այսինքն՝ այն արժեքը, որը չպաշտպանելու պայմաններում առկա է վտանգը, անհատն է (նրա իրավունքներն ու ազատությունները), հասարակությունը (դրանում առկա նյութական և հոգևոր արժեքները) և պետու-

րյունը (անկախությունը, սահմանադրական կարգը և այլն): Անվտանգության ապահովումը բխում է երեքի պահանջմունքներից, հետևաբար երեքն էլ միաժամանակ (և առանձին վերցրած) ձգտում են անվտանգության: Ու քանի որ երեքն էլ ձգտում են անվտանգության, ուստի երեքն էլ ցանկանում են ապահովել այդ վիճակը՝ դրանով իսկ անվտանգության օրյեկտից միաժամանակ վերածվելով անվտանգության սուբյեկտի:

Ու՞մ են հարկավոր իրավունքն ու անվտանգությունը: Ինչպես արդեն նշվեց, անհատը, հասարակությունը և պետությունը միասնական են, հետևաբար իրավունքի ամբողջական ընկալման համար անհրաժեշտ է իրավունքը դիտարկել ոչ այնքան անհատական, հասարակական կամ պետական տարրերի տարանջատվածության անկյունից, որքան միասնականության մեջ՝ ամբողջականության հարբության վրա: Ասվածը չի նշանակում, որ առաջարկ է արվում հետևել բոլոր այն առաջարկություններին, որոնք վերաբերում են իրավաբնագույնան երեք հիմնական տիպերի կամ իրավունքի երեք հիմնական դպրոցների դրական արդյունքների համախմբմանը: Ամենավեճ: Նման զարդարներն ի կատար ածելու բոլոր քայլերը ամենայն հավանականությամբ եղել են ու կմնան «անպտու փորձեր»⁴²: Ասվածը պարզապես նշանակում է, որ իրավունքը, լինելով սոցիալական բարդ երևոյթ և զարգանալով տարբեր հարբություններում (շերտերում), տարբեր անկյուններում, վերոնշյալ տարբեր պարունակում է միասնականության մեջ՝ առանց մեկը մյուսից առանձնացնելու, վերադասելու կամ ենթադասելու: Իրավունքն առկա է և միշտ պետք է առկա լինի անհատական տարրի, հասարակական տարրի և պետական տարրի առկայությամբ, քանի որ այն հարկավոր է միայն երեք սուբյեկտի՝ անհատին, հասարակությանը և պետությանը, ընդ որում՝ ինչպես յուրաքանչյուրին առանձին վերցրած, այնպես էլ երեքին միասնության մեջ: Նույնը վերաբերում է նաև անվտանգությանը՝ որպես մի վիճակի, որի առկայության պայմաններում է միայն հնարավոր անհատի, հասարակության և պետության զարգացումը: Այս առումով անվտանգությունը, այնպես ինչպես իրավունքը, հարկավոր է նոյն երեք սուբյեկտներին՝ անհատին, հասարակությանը և պետությանը, քանի որ դրա բացակայությունը հակադիր է երեքի պահանջմունքներին (շահերին):

Նման մոտեցումը ոչ այլ ինչ է, եթե ոչ առկա իրականությունից բխող անհրաժեշտություն: Իրականություն, երբ ազատությունն առավել քան երեսէ պայմանավորված է անվտանգությամբ, իսկ անվտանգությունը՝ ազատությամբ, քանի որ ազատությունն այսօր վտանգված է նոր՝ հաճախ միմյանցով պայմանավորված մարտահրավերներով:

Ինչպիսի՞ն է և ինչպիսի՞ն պետք է լինի իրավունքի և անվտանգության հարաբերակցությունը: Գտնում ենք՝ վերը նշված մոտեցման համատեքստում, որը կարելի է պայմանականորեն անվանել սեկուրիտար մոտեցում (լատիներեն *securitas*՝ «անվտանգություն», բառից), իրավունքը մեծապես փոխկապակցված է անվտանգության հետ, քանի որ իրավունքը պայմանավորված է անվտանգության անհրաժեշտությամբ, իսկ անվտանգությունը՝ իրավունքի ուժով: Ավելին, իրավունքը և անվտանգությունը ոչ միայն սերտորեն փոխկապակցված են, այլև նոյնական են, քանի որ երկուսն էլ 1) սոցիալական երևոյթներ են, 2) բարդ են իրենց բռվանդակությամբ. բազմատարք են, բազմաշերտ ու բազմանկյուն, 3) անընդհատ զարգացող են և կրում են դիմամիկ բնույթ, 4) պաշտպանում են անհատի, հասարակության և պետության շահերը, 5) երաշխավորում են անհատի, հասարակության և պետության զարգացումը (ընդ որում, եթե անվտանգությունն ապահովում է զարգացումը, ապա իրավունքը կարգավորում է այդ զարգացումը):

Այս առումով իրավունքի և անվտանգության որպես փոխկապակցված երևոյթների հարաբերակցությունը ոչ միայն սերտ է, այլ նաև ամուր է, քանի որ երկուսն էլ ծառայում են միևնույն սուբյեկտների՝ անհատի, հասարակության ու պետության շահերին և բխում են այդ շահերից:

Ամփոփելով ասվածը, միաժամանակ ձևակերպելով վերը բարձրացված հիմնական հարցի պատասխանը՝ կարելի է փաստել, որ «անհատի շահ—հասարակության շահ—պետության շահ» եռամիասնության կապը «իրավունք—անվտանգություն» երկմիասնության հետ ուղղակի է, և այդ կապով էլ պայմանավորված է անհատի, հասարակության ու պետության զարգացումը:

Մեր մոտեցմամբ հայաստանյան պայմաններում (անցումային շրջանում) նշված միասնությունների կապը պետք է լինի առավել քան սերտ և առավել, քան երեսէ՝ ամուր: Այդ ամրությունը կա-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

րող է երաշխավորել այն վիճակը, որի պայմաններում հնարավոր կլինի դիմակայել կոնկրետ մարտահրավերների և չեզոքացնել կամ նվազագույնի հասցնել ազգային անվտանգության դեմ ուղղված ցանկացած սպառնալիք: Գտնում ենք, որ նշված միասնությունների կապը կմնա սերտ և կարող է առավելապես ամուր լինել իրավունքի նոր ճյուղի՝ ազգային անվտանգության իրավունքի ձևավորման ու կայացման պայմաններում:

Կան բազմաթիվ իրավունքներ: Ընդհանրության մեջ, սակայն, դրանք երկու բնույթի են՝ «սնող» և «սնվող»: «Սնող» իրավունքներից են, օրինակ, սահմանադրական իրավունքը, միջազգային իրավունքը, «սնվող» իրավունքներից են զինվորական իրավունքը, տեղեկատվական իրավունքը և այլն: «Սնող» և «սնվող» իրավունքների արանքում այսօր ըստ էության չկա որևէ «այլ» («կապակցող») իրավունք, ինչը, մեր գնահատմամբ, չի ապահովում իրավունքի և անվտանգության անհրաժեշտ միասնականության շարունակականությունը՝ դրանով իսկ իրավական կարգավորման մեխանիզմը դարձնելով թերի, իսկ դրա գործունեությունը՝ վտանգներով լի ներկա իրականությանը ոչ համահուն: Այնպես, ինչպես խողովակից վերցրած ջուրը բնակչությանը մատակարարելուց առաջ ենթակա է ֆիլտրացման (քանի որ առանց դրա այն չի կարող համարվել բնակչության օգտագործման համար անվտանգ՝ բացարձակ առումով), այդպես էլ «սնող» և «սնվող» իրավունքների միջև անհրաժեշտ է «ֆիլտր» («զտող») իրավունքի առկայությունը, որով կերաշխավորվի համապատասխան հարաբերությունների «գրյուրեղացումը»: Որպես «սնող» և «սնվող» իրավունքների միջև «ֆիլտր» իրավունք՝ հայ իրավունքի համակարգում կարող է հանդես գալ ազգային անվտանգության իրավունքը, որով նաև կհստակեցվի անհատի, հասարակության և պետության՝ որպես անվտանգության օրյեկտների

ու (միաժամանակ) ապահովման սուբյեկտների անվտանգ ազատության և համագործակցության չափը, և երկրորդ՝ «գրյուրեղացվի» հասարակական հարաբերությունների այն ամբողջությունը, որը ենթակա է կարգավորման «սնվող» իրավունքի կողմից (ինչն էլ, բնականաբար, կապահովի այդ հարաբերության կարգավորման արդյունավետությունը):

Փորձենք հիմնավորել ասվածը կոնկրետ օրինակով. ՀՀ սահմանադրական իրավունքը («սնող») հոչակում է, որ յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք՝ ներառյալ տեղեկություններ և գաղափարներ փնտրելու, ստանալու ազատությունը (այդ նորմն իր արտացոլումն է գտել ՀՀ Սահմանադրության (փոփոխություններով) 27-րդ հոդվածում): ՀՀ տեղեկատվական իրավունքը («սնվող») սահմանադրամիավական նորմի հիման վրա ապահովում է հոչակված ազատության իրականացումը և կարգավորում է համապատասխան հարաբերությունը՝ «գաշտը», որը, սակայն, «անմշակ է»: Ըստ էության ստացվում է, որ մշակման հիմնական հոգար բողնված է ՀՀ տեղեկատվական իրավունքի վրա: Առկա իրականությունում, որը լի է վտանգներով, առկա մեխանիզմն ընդունելի չէ, քանի որ արդյունավետ չէ: Անվտանգության ապահովման տեսանկյունից «սնող» և «սնվող» նորմերի միջև «ֆիլտր» իրավունքի՝ ՀՀ ազգային անվտանգության իրավունքի առկայությունը, կարծում ենք, կարող է թերևացնել ՀՀ տեղեկատվական իրավունքի «հոգար» և ապահովել «գաշտի» արդյունավետ «մշակումը» (այսինքն՝ խոսքի ազատության իրավունքի իրականացման հետ կապված հարաբերությունների արդյունավետ կարգավորումը), ինչն էլ առավելապես բխում է անհատի, հասարակության և պետության շահերից (ազգային շահերից):

¹ Shougarian Rouben, *From the Near Abroad to the New Neighborhood... The South Caucasus on the Way to Europe. A few Connotations of the Black Sea Context*, p. 2 (German Marshall Fund of the US, A New Transatlantic Strategy for the Black Sea region, 2004), <http://www.mfa.am/old/news/inthenews/04shugarian.pdf> (28.05.2012).

² Stéphane Zakaria Fareed, *The Post-American World (with a new preface)*, W. W. Norton & Co., N.Y., 2009, p. 2, Kissinger Henry, *The Intellectual Underpinnings of the Trilateral Partnership in the 21st Century//Seeking Opportunities in Crisis: trilateral cooperation in meeting global challenges*, p. 98, http://www.trilateral.org/download/doc/seeking_opportunities2.pdf (28.05.2012).

³ Stéphane Huntington Samuel, *The Clash of Civilization? Foreign Affairs*. Summer 1993, p. 23, http://www.hks.harvard.edu/fs/pnorris/Acrobat/Huntington_Clash.pdf (28.05.2012).

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

⁴ «ՀՀ Սահմանադրության (փոփոխություններով) 11-րդ հոդված (ընդունվել է 1995թ. հուլիսի 5-ին, փոփոխությունները կատարվել են 2005թ. նոյեմբերի 27-ին, սկզբնադրյուրը՝ ՀՀՊՏ 2005.12.05):

⁵ Գլոբալացիայի քաղաքական զարգացման (Էվոլյուցիայի) մասին տես՝ *Kissinger Henry, Does America Need a Foreign Policy?: toward a diplomacy for the twenty-first century*. Simon & Schuster, Inc., Free Press, London, 2002, pp. 227233:

⁶ Stéphane Brzezinski Zbigniew, *Out of Control: global turmoil on the eve of the 21st century*, Charles Scribner's Sons, New York, 1993, pp. 48, 49, նոյեմբերի 16-ին հնարքը՝ *The Global Political Awakening*. The New York Times, published: December 16, 2008, http://www.nytimes.com/2008/12/16/opinion/16iht-YEbrzezinski.1.18730411.html?_r=1 (28.05.2012), նոյեմբերի 16-ին հնարքը՝ *Strategic Vision: America and the Crisis of Global Power*, Basic Books, New York, 2012, pp. 26-36:

⁷ Stéphane Brzezinski Zbigniew, *Out of Control: global turmoil on the eve of the 21st century*, Charles Scribner's Sons, New York, 1993, pp. 48, 49, նոյեմբերի 16-ին հնարքը՝ *The Global Political Awakening*. The New York Times, published: December 16, 2008, http://www.nytimes.com/2008/12/16/opinion/16iht-YEbrzezinski.1.18730411.html?_r=1 (28.05.2012), նոյեմբերի 16-ին հնարքը՝ *Strategic Vision: America and the Crisis of Global Power*, Basic Books, New York, 2012, pp. 26-36:

⁸ Stéphane Brzezinski Zbigniew, *Out of Control: global turmoil on the eve of the 21st century*, Charles Scribner's Sons, New York, 1993, pp. 48, 49, նոյեմբերի 16-ին հնարքը՝ *The Global Political Awakening*. The New York Times, published: December 16, 2008, http://www.nytimes.com/2008/12/16/opinion/16iht-YEbrzezinski.1.18730411.html?_r=1 (28.05.2012), նոյեմբերի 16-ին հնարքը՝ *Strategic Vision: America and the Crisis of Global Power*, Basic Books, New York, 2012, pp. 26-36:

⁹ «Գլոբալ գյուղ» (*global village*) տերմինն առաջին անգամ օգտագործել է 20-րդ դարի կանադացի փիլիսոփա, սոցիոլոգ Հերբերտ Մարշալ Մարշալ Լյուիսը, ով 1962թ. լուս տեսած իր «Գուտենբերգի գալակտիկան» գրքում (*McLuhan Marshall, The Gutenberg Galaxy: the making of typographic man*, University of Toronto Press, Canada, 1962) փորձում է կանխատեսել, թե ինչպիսին է լինելու դարավերջի աշխարհը և եզրահանգում է, որ ամբողջ աշխարհը, շնորհիվ էլեկտրոնային տեխնոլոգիաների, լինելու է «ստղմված» և նմանվելու է փոքրիկ գյուղի:

¹⁰ Իրավունքի կարգավորիչ բնույթի և իրավական կարգավորման մեխանիզմի մասին տես՝ **Սաֆարյան Գ.Հ.** Իրավական կարգավորման մեխանիզմը /Ապիյան Ն.Ա. և ուղիղ. Իրավունքի տեսության հիմնահարցեր (ուսումնական ձեռնարկ) / Ն.Ա. Ապիյան, Ս.Ն. Ապիյան, Գ.Հ. Սաֆարյան.—Եր.: Երևանի համալս. հրատ., 2003, էջ 187-218:

¹¹ Марченко М.Н. Проблемы общей теории государства и права: учеб.: в 2 т. Т. 1. Государство. 2-е изд., перераб. и доп.—М.: Изд-во Проспект, 2008, С. 394.

¹² Stéphane Brzezinski Zbigniew, *Out of Control: global turmoil on the eve of the 21st century*, Charles Scribner's Sons, New York, 1993, 9, Родачин В.М. Безопасность как социальное явление//Журнал “Право и безопасность”, Номер - 4 (13) Декабрь 2004г., http://dpr.ru/pravo/pravo_10_5.htm (28.05.2012):

¹³ Stéphane Brzezinski Zbigniew, *Out of Control: global turmoil on the eve of the 21st century*, Charles Scribner's Sons, New York, 1993, 9, Ռուսական կարգավորման մեխանիզմը /Ապիյան Ն.Ա. և ուղիղ. Իրավունքի տեսության հիմնահարցեր (ուսումնական ձեռնարկ) / Ն.Ա. Ապիյան, Ս.Ն. Ապիյան, Գ.Հ. Սաֆարյան.—Եր.: Երևանի համալս. հրատ., 2003, էջ 187-218:

¹⁴ Սաֆարյան Գ.Հ. Իրավունքի տեսության հիմնահարցերը. Քենոնմենոլոգիական մոտեցում.—Եր.: Սիվա-Պրես, 2006, էջ 27 և 31:

¹⁵ Սաֆարյան Գ.Հ. Պետության և իրավունքի տեսություն-2: Դասախոսություն: ԵՊՀ—Եր.: Հեղինակային հրատ., 2011, էջ 32, Проблемы общей теории права и государства: Учебник для вузов / Под общ. ред. академика РАН, д.ю.н., проф. В.С. Нерсесянца.—М.: Норма, 2006, С. 136-137, McLeod Ian, Legal Theory: Fifth edition. Palgrave Macmillan Law Masters (Series editor: Marise Cremona). Palgrave Macmillan, printed and bound in Great Britain, 2010, p. 6.

¹⁶ Այստեղից էլ «պողիսիվ իրավունքը» կոչվում է նաև «դրական իրավունք» («դրական»՝ ոչ թե «ոդրական» բացասական», այլ «դիր», «դմել» («կանոն դմել (սահմանել)» իմաստով):

¹⁷ Ներեսյանց Վ.Ս. Իրավունքի և պետության տեսություն.—Եր.: Նախի, 2001, էջ 30, Нерсесянц В.С. Философия права: учебник. 2-е изд., перераб. и доп.—М.: Норма, 2009, с. 20: Հայտնի է նաև հետևյալ մոտեցումը. այդ տիպերը երկուս են՝ լեզվատական (կամ պողիսիվ լեզվատական) և իրավաբանական (կամ հակալեզվատական), սակայն երկրորդն իր մեջ անպայմանորեն բռվանդակում է բնական-իրավական և լիրերտար-իրավաբանական ենթատիպերը (Нерсесянц В.С. Общая теория права и государства: учебник.—М.: Норма: Инфра-М, 2010, С. 28, 33):

¹⁸ Լիրերտար-իրավաբանական տեսության հիմնադիր, հայագիտ ակադեմիկոս Վ.Ս. Ներեսյանցի խոսքերով՝ տեսությունն անվանվել է ոչ թե «լիրերտար» (կամ ազատական), այլ «լիրերտար» («լիբերտարная»), որպեսզի տարբերակվի «ազատական» («լիբերալ»)՝ ոչ միանշանակ լընդունված կամ «ոչ միշտ հաճելի» բառից, իսկ «յուրիստական» («юридическая») բառի կիրառման նպատակն է այն տարբերակել «իրավական» («քնական իրավական»), «պողիսիվ իրավական») հասկացողությունից և շեշտը դմել լատիներեն *jus* («իրավունք»՝ մաքուր, չղասակարգված առումով) բառի վրա: Stéphane Brzezinski Zbigniew, *Out of Control: global turmoil on the eve of the 21st century*, Charles Scribner's Sons, New York, 1993, 9, Այստեղից էլ «պողիսիվ իրավունքը» կոչվում է նաև «դրական իրավունք» («դրական»՝ ոչ թե «ոդրական» բացասական», այլ «դիր», «դմել» («կանոն դմել (սահմանել)» իմաստով):

¹⁹ Վենգրով Ա.Բ. Теория государства и права: учеб. [для юрид. вузов]. 6-е изд., стер.—М.: Изд-во “Омега Л”, 2009, С.372.

²⁰ Stéphane Brzezinski Zbigniew, *Out of Control: global turmoil on the eve of the 21st century*, Charles Scribner's Sons, New York, 1993, 9, Այստեղից էլ «պողիսիվ իրավունքը» կոչվում է նաև «դրական իրավունք» («դրական»՝ ոչ թե «ոդրական» բացասական», այլ «դիր», «դմել» («կանոն դմել (սահմանել)» իմաստով):

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

- ²¹ Обсуждение доклада Лапаевой В.В. “Типы правопонимания в современной российской теории права” на Ученом Совете ИГП РАН, 09.12.2011, <http://www.igpran.ru/news/2936/> (28.05.2012).
- ²² Տե՛ս Ներսեսյան Վ.Ս. Փիլոսոփիա պարագաներ: Եղանակակից համակարգը. Երևան, 2009 թ.
- ²³ Kelsen Hans, *Pure Theory of Law*, Published in 1967 by The Regents of the University of California; reprinted by permission of the University of California Press (in *Readings in Jurisprudence and Legal Philosophy*), p. 518.
- ²⁴ Վաշինգտոն Ա.Յ. Վարչական պարագաներ: Եղանակակից համակարգը. Երևան, 2009 թ.
- ²⁵ Վաղարշյան Ա. Պետության և իրավունքի տեսություն-2: Դասախոսություն: ԵՊՀ—Եր.: Հեղինակային իրատ., 2011, էջ 24:
- ²⁶ Алексеев С.С. Общая теория права: учеб., 2-е изд., перераб. и доп.—М.: Проспект, 2009, С. 79.
- ²⁷ Храпанюк В.Н. Теория государства и права: Понятие и сущность права. Современное правопонимание, http://www.gumer.info/bibliotek_Buks/Pravo/Hrop/08.php (28.05.2012).
- ²⁸ Венгеров А.Б. Теория государства и права: учеб. [для юрид. вузов]. 6-е изд., стер.—М.: Изд-во “Омега Л”, 2009, 367.
- ²⁹ Лекции по общей теории права. Коркунова Н.М. КНИГА 1: ПОНЯТИЕ ПРАВА.—СПб.: По изданию 1914г., С. 58, <http://allpravo.ru/library/doc108p0/instrum109/item260.html> (28.05.2012).
- ³⁰ Табарин И.В. Современная теория права: новый научный курс: Научная монография.—М.: Изд. Автора, 2008, С. 80.
- ³¹ Четвернин В.А., Яковлев А.В. Институциональная теория права: НУЛ теоретических исследований права и государства ГУ-ВШЭ, 2009. Т. Научные исследования. N Выпуск 4, Аннотация, <http://teoria.prava.hse.ru/files/institution.pdf> (28.05.2012).
- ³² Проблемы теории права и государства: Вопросы и ответы. Современное правопонимание: основные концепции, <http://www.bibliotekar.ru/teoria-gosudarstva-i-prava-4/62.htm> (28.05.2012).
- ³³ Մանրամասն տես՝ Պոլյակ Ա.Վ. Օբщая теория права: Проблемы интерпретации в контексте коммуникативного подхода. СПб, 2004, С. 82:
- ³⁴ Տե՛ս Լիվшиց Բ.Յ. Տեօրիա պարագաներ. Մ., 2001, ս. 14 (հեղումն ըստ Հ. Ստեփանյանի նշվ. աշխ., էջ 35):
- ³⁵ Նոյւին պատկերը կտեսնենք, եթե միավորենք իրավունքի ուսմունքները (դպրոցները): Ըստ ծագման՝ այդ ուսմունքները նորից երեքն են՝ բնական-իրավական, սոցիոլոգիական և էտատիստական: Առաջին ուսմունքի համաձայն՝ իրավունքի ծագման հիմքում ընկած է բնությունը, այդ թվում՝ (ու հատկապես) *անհատի* բնությունը: Երկրորդ ուսմունքի համաձայն՝ իրավունքի ծագման հիմքում ընկած է *հասարակությունը*: Իսկ երրորդի համաձայն՝ հիմքում պետությունն է: Իրավաբանական գրականության մեջ առանձնացվում է նաև իրավունքի հոգերանական ուսմունքը (Պոլյակ Ա.Վ. Օբщая теория права: Проблемы интерпретации в контексте коммуникативного подхода. СПб, 2004, С. 195, Խաչատրյան Ս.Մ. Պետության և իրավունքի տեսություն. հարցեր և պատասխաններ (2-րդ բարեփոխված իրատարակություն).—Եր.: «Կափա» հրատ., 2012, էջ 66, և այլն): Վերջինս, սակայն, իմնավորված չի թվում, հատկապես, որ դրա ծագման հիմքում դիտվում է մարդու (անհատի) հոգեկան աշխարհը: Անհատի հոգեկան աշխարհը նրա բնության անբաժան մասն է, ինտևարար իրավունքի հոգերանական ուսմունքը, կարծում ենք, ածանցված է իրավունքի բնական-իրավական ուսմունքից և չի կարող կազմել ինքնուրույն դպրոց:
- ³⁶ Տե՛ս Цицерон Марк Туллий, Об обязанностях. [октябрь-декабрь 44г. до н.э.], IV (11). Философские трактаты, <http://ancientrome.ru/antlitr/cicero/phil/officiis1.htm> (28.05.2012):
- ³⁷ Աղայան Է. Բ. Արդի հայերենի բացատրական բառարան: Ա-Զ (Պարունակում է 135600 բառ և 11000 դարձվածքանական միավոր).—Եր.: «Հայաստան» հրատ., 1976, էջ 81:
- «Անվտանգություն» հասկացության, իմաստի տեսական հիմքերի մասին տես նաև՝ Տեր Ակոպ Ա.Ա. Безопасность человека (теоретические основы социально-правовой концепции). М.: Изд-во МНЭПУ, 1998, С. 9-19, Սեղմակյան Ա.Ա. Զինվորական հանցագործությունները՝ որպես ուսմունքական անվտանգության դեմ ուղղված հանցագործություններ. քրեաֆիլավական և քրեաբանական հետազոտություն. —Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2010, էջ 35, 36, 62-65:
- ³⁸ Տե՛ս Դալ Վ.И. “Толковый словарь живого великорусского языка”. В 4 т. / Под ред. проф. И.А. Бодуэна де Куртене.—М.: Цитадель, 1998, Т. I, с. 107, Ожегов С.И. “Словарь русского языка”. В 4 т., 2-е изд.—М.: Русский язык, 1981, Т. I, С. 74:
- ³⁹ Oxford Dictionaries: the world's most trusted dictionaries, <http://oxforddictionaries.com/definition/security> (28.05.2012).
- ⁴⁰ Նման տեսակեսն է արտահայտում Ազգային և միջազգային անվտանգության հիմնադրամի (ՈՒ) նախագահ Լ. Շերշներ (տես՝ Ռեշեն Լ.Ի. “О роли общественной системы безопасности//Современные проблемы национально-

государственной и международной безопасности". Сб. материалов конф.—М.: 1992, С. 94 (հղումն ըստ՝ Логунов А.Б. "Региональная и национальная безопасность". Учебное пособие.—М.: Вузовский учебник, 2009, С. 7, 8):

⁴¹ Перечень терминов, используемых в нормативных правовых актах союзного государства в области обороны, военной службы и социальной защиты военнослужащих (от МО РБ и МО РФ), с. 3//«Военное право» ЭПИ, выпуск 3, 2004г.

⁴² Տես՝ նույն սեղում, էջ 48-59:

РЕЗЮМЕ

Право национальной безопасности?: необходимость определения соотношения права и безопасности в контексте создания новой отрасли права.

Автором анализируется соотношение права и безопасности и дается ответ на следующие вопросы: 1) что есть право и что такое безопасность?; 2) кто нуждается в праве и безопасности?; 3) каково соотношение права и безопасности и каким оно должно быть? В статье излагается мнение о том, что право и безопасность не только взаимосвязаны, но и идентичны, поскольку являются сложными социальными явлениями, служащие интересам, и исходящие от интересов трех субъектов — личности, общества и государства (национальные интересы).

Авторский подход, который условно называется “секьюритарный”, заключается в том, что в Республике Армения, в переходный период связь единиц “право-безопасность” и “личность-общество-государство” может стать более тесной при наличии новой отрасли права - права национальной безопасности. Новое право как право-“фильтр” определит меру свободы личности, общества и государства и отношения между ними, а также обеспечит “кристальность” общественных отношений в области национальной безопасности.

SUMMARY

National Security Law?: the necessity to outline the interrelation of law and security in the context of forming a new branch of law.

The author analyses the interrelation of law and security and answers the following questions: (1) what is law and what is security?; (2) who needs law and security?; (3) what is the interconnection between law and security and how it should be? It is highlighted that law and security are not only interconnected but also identical as both law and security are used for, and are stemmed from, the interests of individual, society, and state (national interests).

The bottom-line of the author’s approach, which he calls “securitar,” stands as follows: in times of transition, the ties between unities of “law-security” and “individual-society-state” would remain associated and might develop in the presence of a new branch of Armenian law — National Security Law. This new law, as a “filter” one, would frame the limits of freedom and cooperation of individual, society, and state as well as “crystallize” the relevant national security relations.

ՍԱՄՎԵԼ ԱՌԱՋԵԼՅԱՆ

Հայ-ռուսական (սլավոնական) համալսարանի իրավունքի
և քաղաքականության ինստիտուտի սահմանադրական և
մունիցիպալ իրավունքի ամբիոնի հայցորդ

**ՍԱՀՍԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՀԱՎԱՍԱՐ
ՍԱՏԶԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ՍԱՀՍԱՆԱԴՐԱԿԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՍԿՂԲՈՒՆՔՆԵՐԻՑ ՄԵԿԸ.
ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ**

Սահմանադրական արդարադատության առավել ընդհանուր և հիմնարար նշանակություն ունեցող սկզբունքներն ամրագրված են ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածում, համաձայն որի՝ «Յուրաքանչյուր որ ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանամբ, անկախ և անկողնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք»: Սիածամանակ անհրաժշտ է նշել, որ համանման սկզբունքներ է ամրագրում նաև Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին նվորապական կոնվենցիայի¹ 6-րդ հոդվածը: Այս հոդվածների բովանդակությունից բխում է, որ երաշխավորման ներքանական առաջին սկզբունքն արդարադատության մատչելիության սկզբունքն է: Վերջինս հաճախ ՀՀ Սահմանադրական դատարանի և Մարդու իրավունքների նվորապական դատարանի կողմից դիտարկվում է որպես արդարադատության մատչելիության իրավունք՝ արդար դատարնենության իրավունքի տարր: Սահմանադրական արդարադատության մատրելիության սկզբունքն ուղղակիորեն նախատեսված չէ՝ ոչ ՀՀ Սահմանադրությամբ, ոչ՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքով³, սակայն սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներում անդրադարձել է այս սկզբունքի երաշխավորմանը: Զանի որ սահմանադրական դատարանը մասնագիտացված դատարան է, և ոչ բոլոր գործերն են ներքանական դատարանի քննությանը, ապա առաջ է գալիս օրենսդրական մակարդակում, ինչպես նաև իրավակիրառական մակարդակում սահմանադրական արդարադատության մատչելիության

սկզբունքի արդյունավետ իրացման անհրաժեշտություն:

ՄԻԵԴ-Ը իր բազմաթիվ որոշումներում կրկնել է, որ 6-րդ հոդվածի 1-ին պարագաֆը յուրաքանչյուրի համար երաշխավորում է իր քաղաքացիական իրավունքների և պարտականությունների առնչությամբ դատարան դիմում ներկայացնելու իրավունքը: Այս կերպ ձևավորվում է «դատարանի իրավունքը», որտեղ մատչելիության իրավունքը, այսինքն՝ քաղաքացիական գործերով դատավարություն նախաձեռնելու իրավունքը տարրերից մեկն է: Իր որոշումներից մեկում ՄԻԵԴ-Ը նշել է, որ 6-րդ հոդվածի երաշխիքները ներառում են դատարանի առջև բարձրացված հարցի վերաբերյալ վերջնական որոշում ստանալու իրավունքը՝ ներառյալ նաև սահմանադրական բողոքի ընդունելիության և (կամ) հանգամանքների վերաբերյալ որոշումը⁵: Սահմանադրական դատարանում անհատական (ֆիզիկական, ինչպես նաև իրավաբնական անձի) դիմումի ընդունելիության չափանիշները նախառաջ նախատեսված են ՀՀ Սահմանադրությամբ, որի 101-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ «Սահմանադրությամբ և սահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանված կարգով սահմանադրական դատարան կարող է դիմել յուրաքանչյուր որ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները, և վիճակում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականությունը⁶»:

Սիածամանակ ՀՀ Սահմանադրությունը ՀՀ Ազգային ժողովին լիազորում է օրենքով սահմանել դատարան դիմելու կարգը: Անհրաժշտ է նշել, որ Սահմանադրությունն այս իրավունքը երաշխավորում է յուրաքանչյուրի համար՝ անկախ նրանից, թե այլ սուբյեկտներ նույն հարցով անհատական

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

սահմանադրական դիմում ներկայացրել են իրենց իրավունքի պաշտպանության նախատակով, թե՝ ոչ։ Այս հարցի շրջանակներում Օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ կետը սահմանում է, որ «սահմանադրական դատարանը գործի քննությունն ամբողջությամբ կամ մասամբ մերժելու մասին որոշում է ընդունում, եթե օրենքի 68-75-րդ և 77-րդ հոդվածներում նշված գործերով ներկայացված որևէ դիմումում առաջադրված հարցի վերաբերյալ առկա է սահմանադրական դատարանի որոշումը»։ Այս նորմում նշված հոդվածները նվիրված են (ի թիվս այլ հարցերի) սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող այլ սուբյեկտների ներառյալ ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից օրենքների դրույթների վիճարկմանը սահմանադրական դատարանում։ Ստացվում էր մի իրավիճակ, երբ ֆիզիկական կամ իրավաբանական անձի նկատմամբ կիրառվում է օրենքի դրույթ, սակայն տվյալ ֆիզիկական կամ իրավաբանական անձը չէր կարողանում օգտվել սահմանադրական արդարադատության իրավունքից, քանի որ օրենքի այդ դրույթն այլ սուբյեկտի դիմումի հիման վրա արդեն ճանաչվել է ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր, այսինքն՝ առաջադրված հարցի վերաբերյալ առկա է սահմանադրական դատարանի որոշում։ Այն հանգամանքը, որ սահմանադրական դատարանը այլ դիմումի հիման վրա կրկին քննության առարկա չի դարձնում այն հարցը, որն արդեն բարձրացվել է դատարանի առջև, միանգամայն իրավաչափ է, սակայն սա միևնույն ժամանակ կարող է արգելափակել այլ սուբյեկտներին՝ օգտվելու սահմանադրական արդարադատության միջոցով իրենց իրավունքները պաշտպանելու հնարավորությունից։ Այդ հարցին անդրադարձել է ՀՀ սահմանադրական դատարանն իր 15 ապրիլի 2008 թվականի ՍԴՈ-751 որոշմամբ⁸։ Այս որոշման 4-րդ կետում սահմանադրական դատարանն արձանագրել է, որ «այս կամ այն վիճարկվող ակտը կամ դրա դրույթը Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելու վերաբերյալ իր որոշման իրավական հետևանքները կապվում են ոչ միայն տվյալ ակտի, այլ նաև դրա հիման վրա կայացված դատական կամ վարչական ակտերի իրավական հետևանքների, այդ ակտերի հիման վրա մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների և ազատությունների ապահովման ու պաշտպանության հետ՝ որպես անմիջական գործող իրավունք»։ Նոյն որոշման 8-րդ կետում, վերլուծելով իրավակիրառական պրակտիկայի և Օրենքի 69-րդ հոդ-

վածի 12-րդ մասի, ինչպես նաև 32-րդ հոդվածի 3-րդ և 5-րդ մասերը, սահմանադրական դատարանը եկել է այն եզրահանգման, որ «այն անձինք, որոնց համար դեռևս չի լրացել սահմանադրական դատարան դիմելու համար օրենքով սահմանված վեցամյա ժամկետը, գրկում են սահմանադրական դատարան դիմելու միջոցով իրենց սահմանադրական իրավունքների դատական պաշտպանությունն իրականացնելու հնարավորությունից»⁹։ Իսկ նման իրավիճակի ձևադրման պատճառ է դարձել այն փաստը, որ իրավակիրառական պրակտիկան «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 12-րդ մասում օգտագործված «դիմող» եզրույթի բովանդակությանը տվել է սահմանափակ մեկնաբանություն։

Վերլուծելով օրենսդրությունը և իրավակիրառական պրակտիկան՝ սահմանադրական դատարանն իր ՍԴՈ-751 որոշման եզրափակիչ մասի 2-րդ կետում «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 12-րդ մասի դրույթները ճանաչել են «Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 19-րդ հոդվածի պահանջներին հակասող և անվավեր այն մասով, որով սահմանափակվում է նոր հանգամանքների հիմքով այն անձանց իրավունքների վերականգնման հնարավորությունը, որոնց վերաբերյալ վերջնական դատական ակտի կայացման և տվյալ անձի նկատմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականության հարցի վերաբերյալ այլ դիմումի (դիմուների) հիման վրա սահմանադրական դատարանում գործի դատաքննություն սկսելու օրվա կամ այդ հարցի վերաբերյալ սահմանադրական դատարանի որոշման ընդունման օրվա միջն ընկած ժամանակահատվածը չի գերազանցում վեց ամիսը¹⁰»։ Այս որոշման ողջ նպատակը սահմանադրական արդարադատության նատչելիության ապահովումն էր։ Եթե նույնիսկ անձի կողմից տրված դիմումը ենթակա չէ քննության դիմունվ բարձրացվող հարցի վերաբերյալ սահմանադրական դատարանի ընդունած որոշման առկայության հիմնափորմամբ, ապա դա դեռ չի նշանակում, որ անձը չվետը է օգտվի այդ որոշման իրավական հետևանքներից։

ՀՀ Ազգային Ժողովի 26.10.2011 թվականի ՀՕ268Ն ՀՀ օրենքով փոփոխություններ կատարվեցին Օրենքի 69-րդ հոդվածում, որի 13-րդ մասը շարադրվեց հետևյալ խմբագրությամբ. «Սույն հոդվածի 12-րդ մասը տարածվում է նաև այն անձանց վրա, որոնք սահմանադրական դատարանի տվյալ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

որոշումը հրապարակելու օրվա դրույյամբ դեռևս պահպանել էին նույն հարցով սահմանադրական դատարան դիմելու իրենց իրավունքը, սակայն չէին դիմել սահմանադրական դատարան»: Նշված հոդվածի 12-րդ մասում նույնպես որոշակի փոփոխություններ և լրացումներ են կատարվել, համաձայն որոնց «դիմողի նկատմամբ կիրառված օրենքի դրույքը Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչվելու դեպքում, ինչպես նաև այն դեպքում, եթե սահմանադրական դատարանը, որոշման եզրափակիչ մասում բացահայտելով օրենքի դրույքի սահմանադրահրավական բովանդակությունը, այն ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող և միաժամանակ գտել է, որ այդ դրույքը նրա նկատմամբ կիրառվել է այլ մեկնարանությամբ, դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով ենթակա է վերանայման՝ օրենքով սահմանված կարգով»: Այս նորմերի համադրված վերլուծությունը ցույց է տալիս, որ եթե ֆիզիկական կամ իրավաբնական անձը դեռ պահպանում է սահմանադրական դատարան դիմելու իրավունքը, սակայն Օրենքի 32-րդ հոդվածի հիման վրա նրա՝ դիմումում բարձրացված սահմանադրահրավական վեճը չի կարող սահմանադրական դատարանում քննության առարկա դառնալ, այնուամենայնիվ, չի գրկվում սահմանադրական արդարադատության մատչելիության իրավունքից, քանի որ նաև նրա նկատմամբ են կիրառելի սահմանադրական դատարանի որոշման իրավական հետևանքները:

Օրենքում կատարված այս փոփոխություններն էականորեն կնպաստեն սահմանադրական արդարադատության մատչելիության սկզբունքի երաշխավորմանը, սակայն կարծում ենք, որ հարցը դեռ ամբողջությամբ իր լուծումը չի ստացել, և գործնականում որոշակի խնդիր կարող է, այնուամենայնիվ, առաջանալ: Այսպես՝ կարծում ենք, որ այստեղ երկակի իրավիճակ է ձևավորվում, այսինքն՝ կոնկրետ գործի նկատմամբ, որի շրջանակներում դիմում է ներկայացվել սահմանադրական դատարան, սահմանադրական դատարանն արտահայտում է իր իրավական դիրքորոշումը և նույնիսկ կարող է ընգծել, որ օրենքի դրույքը կիրառվել է իր մեկնարանություններից տարբերվող մեկնարանությամբ, մինչդեռ մնացած գործերով, որտեղ անձը դեռ պահպանել էր սահմանադրական դատարան դիմելու իրավունքը, գնահատական տալու հայեցողությունը տրվել է նոր հանգամանքի հիմքով դատական ակտը վերանայելու իրավասու-

թյուն ունեցող դատարանին: Օրենքի 69-րդ հոդվածի 13-րդ մասը հղում է կատարում նույն հոդվածի 12-րդ մասի վրա՝ սահմանելով, որ 12-րդ մասը տարածվում է նաև **այն անձանց վրա**, որոնք սահմանադրական դատարանի տվյալ որոշումը հրապարակելու օրվա դրույյամբ դեռևս պահպանել էին նույն հարցով սահմանադրական դատարան դիմելու իրենց իրավունքը, սակայն չէին դիմել սահմանադրական դատարան: Այսինքն՝ նաև սահմանադրական դատարան դիմելու իրավունքը դեռ պահպանած անձանց համար այդ որոշումը **կարող է լինել** նոր հանգամանք: Սակայն մենք կարծում ենք, որ խոսքն ընդամենը հնարավորության մասին է, քանի որ որպեսզի սահմանադրական դատարանի որոշումը՝ որպես նոր հանգամանք, դառնա դատական ակտը վերանայելու պարտադիր հիմքը սահմանադրահրավական բովանդակությունը, այն ճանաչի Սահմանադրությանը համապատասխանող և միաժամանակ գտնի, որ այդ դրույքը **նրա նկատմամբ կիրառվել է այլ մեկնարանությամբ**: Նշված նորմերի վերլուծությունը բույց է տալիս առանձնացնել երկու պայման, որոնք բավարարելու դեպքում միայն դատական ակտը ենթակա կլինի վերանայման:

- Եթե ֆիզիկական կամ իրավաբնական անձը սահմանադրական դատարանի տվյալ որոշումը իրապարակելու օրվա դրույյամբ դեռևս պահպանել էր նույն հարցով սահմանադրական դատարան դիմելու իրավունքը,

- Եթե սահմանադրական դատարանը, որոշման եզրափակիչ մասում բացահայտելով օրենքի դրույքի սահմանադրահրավական բովանդակությունը, այն ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող և միաժամանակ գտել է, որ այդ դրույքը **նրա նկատմամբ կիրառվել է այլ մեկնարանությամբ**:

Վերջին հաշվով Օրենքում կատարված փոփոխությունների համատեքստում սահմանադրական արդարադատության մատչելիության սկզբունքի իրացումը կերաշխավորվի միայն դատարանների կողմից նշված հայեցողությունը բարեխիղճ իրականացնելու և օրենքի դրույքը սահմա-

նադրական դատարանի իրավական դիրքորոշում-ներին համահունչ մեկնարանելու արդյունքում: Սակայն գտնում ենք, որ այս հարցում դատարան-ները չեն կարող որևէ հայեցողություն ունենալ: Օրենքով սահմանադրական դատարանին է վերապահված բացահայտել վիճարկվող նորմի սահմանադրախրավական բովանդակությունը և զնահատել դրա կիրառման իրավաչափությունը կոնկրետ սուրյեկտի նկատմամբ, ուստի սահմանադրական դատարանը պետք է օժտված լինի լիազորությամբ՝ զնահատելու բոլոր այն դեպքերում, երբ ֆիզիկական կամ իրավաբանական անձինք դեռ պահպանել են սահմանադրական դատարան դիմելու իրավունքը: Հետևաբար գտնում ենք, որ Օրենքում պետք է լրացումներ կատարվեն, որոնցով կամրագրվի, որ սահմանադրական դատարան դիմելու իրավունքը ունեցող անձանց անհատական դիմումի հիմնան վրա դատական կազմը կամ սահմանադրական դատարանը՝ ամբողջ կազմով, մերժելով գործը քննության ընդունել, միաժամանակ կարող է զնահատել նորմի կիրառման իրավաչափությունը և գտնել, որ դրույքը նրա նկատմամբ կիրառվել է այլ մեկնարանությամբ, ինչը նոր միայն կիանիսանան նոր հանգամանք դատական ակտը վերանայելու համար: Հակառակ պարագայում, եթե սահմանադրական դատարանն իր որոշումներից որևէ մեկում չանդրադառնա կոնկրետ սուրյեկտների նկատմամբ նորմի կիրառման պրակտիկային, երբեք սահմանադրական դատարանի որոշումը չի հանդիսանա նոր հանգամանք այն ֆիզիկական և իրավաբանական անձանց համար, ովքեր սահմանադրական դատարանի տվյալ որոշումը հրապարակելու օրվա դրույթյամբ դեռևս պահպանել էին նոյն հարցով սահմանադրական դատարան դիմելու իրենց իրավունքը, սակայն չեն դիմել սահմանադրական դատարան:

Հաջորդ խնդիրը վերաբերում է հետևյալ իրավիճակին. Օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ և 5-րդ կետերի հիման վրա սահմանադրական դատարանն ամբողջությամբ կամ մասամբ մերժում է գործի քննությունը՝ անկախ այն հանգամանքից, թե սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող որ սուրյեկտի՝ դիմումի հիմնան վրա է նախկինում դատարանը կայացրել որոշում կամ իրականացնում գործի դատարանություն: Օրենքի 69-րդ հոդվածի իրավակարգավորումները՝ ներառյալ փոփոխությունները, վերաբերում են անհատական դիմումների քննությանը: Նշված հոդվածի 13-րդ կետի բովանդակության վերլուծությունը ցույց է

տալիս, որ այն նոյն հոդվածի 12-րդ մասը տարածվում է իրավաբանական և ֆիզիկական անձանց վրա, իսկ 12-րդ մասը, կիրառելով «Սույն հոդվածում նշված գործերով» բառակապակցությունը, շեշտադրում է, որ այդ մասում նշված իրավական հետևանքները կարող են վրա հասնել միայն անհատական դիմումների հիման վրա կայացվող որոշման արդյունքում: Ստացվում է, որ օրենսդրի կողմից սահմանվել է այնպիսի իրավակարգավորում, որով լուծվել է անհատական դիմումով այլ անձանց՝ սահմանադրական արդարադատության միջոցով սահմանադրական իրավունքների դատական պաշտպանության իրավունքի իրացմանը չխոչընդոտելու հարցը: Միաժամանակ բաց է մնում այն հարցը, թե ինչպես է հնարավոր երաշխավորել սահմանադրական արդարադատության մատչելիությունը, եթե դիմուի նկատմամբ կիրառված օրենքի դրույքը նախկինում սահմանադրական դատարանում վիճարկվել է ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին, 3-րդ, 4-րդ, 8-րդ կետերում նախատեսված անձանց և մարմինների կողմից: Նշված անձանց և մարմինների դիմումների հիման վրա գործերի քննության առանձնահատկություններն ամրագրված են Օրենքի 68-րդ հոդվածում¹², որտեղ ամրագրված չեն սահմանադրական դատարանի որոշումների այնպիսի իրավական հետևանքներ, ինչպիսիք որ առկա են Օրենքի 69-րդ հոդվածի 12-րդ և 13-րդ մասերում:

ՀՀ սահմանադրական դատարանն իր ՍՊՌ-751 որոշման 5-րդ կետում¹³, անդրադառնալով կոնկրետ և վերացական վերահսկողության առանձնահատկություններին, նշել է, որ «Եթե նախմանական և հետազա վերացական սահմանադրական վերահսկողության դեպքում առաջին պլան է մղվում Սահմանադրության գերակայության երաշխավորումը՝ իրավական համակարգում օրենքների և այլ նորմատիվ ակտերի՝ Սահմանադրությանը համապատասխանությունն ապահովելու ճանապարհով, ապա անհատական դիմումների հիման վրա իրականացվող կոնկրետ վերահսկողության նպատակը Սահմանադրության դրույքների ամփական գործողության երաշխավորումն է, մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների ապահովումն ու պաշտպանությունը¹⁴»: Թեև սահմանադրական դատարանը հստակ տարածատում է կոնկրետ և վերացական վերահսկողության նպատակները, դրանք, մեր կարծիքով, չեն կարող հիմք հանդիսանալ սահմանադրական արդարադատության մատչելիությունը սահմանափա-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Կելու համար, հետևաբար վերացական վերահսկողության նպատակները չեն կարող բացառել կոնկրետ վերահսկողության նպատակները:

Այս տեսանկյունից ուշագրավ է նաև իրավիճակը՝ կապված զլսավոր դատախազի և դատարանների՝ դիմումների հիման վրա գործերի քննության հետ: Օրենքի 71-րդ հոդվածը կարգավորում է դատարանների և զլսավոր դատախազի դիմումների հիման վրա նորմատիվ իրավական ակտերի՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերի քննության հետ կապված իրավահարաբերությունները՝ հոդվածի վերնագրում փակագծերում ամրագրելով «իրավական նորմերի կոնկրետ վերահսկողություն»: Ժեւայս դիմումները քննվում են կոնկրետ վերահսկողության շրջանակներում, դրանց արդյունքում սահմանադրական դատարանի կայացրած որոշման իրավական հետևանքները որոշվում են Օրենքի 68-րդ հոդվածի պահանջներին համապատասխան, քանի որ նշված 71-րդ հոդվածի 10-րդ մասը հղում է կատարում 68-րդ հոդվածի 7-17-րդ մասերի վրա: Իսկ վերջիններս, ի թիվս այլ հարցերի, կարգավորում են նաև սահմանադրական դատարանի որոշումների իրավական հետևանքները: Կարծում ենք, որ սահմանադրական արդարադատության մատչելիության սկզբունքը պահանջում է, որ այս գործերի քննության արդյունքում կայացված որոշումների իրավական հետևանքները կարգավորվեն նաև Օրենքի 69-րդ հոդվածի 12-րդ և 13-րդ մասերում ամրագրված նորմերով:

Վերլուծելով վերոնշյալ բոլոր նորմերը, ինչպես նաև դրանց հետ համակարգային փոխկապվածության մեջ գտնվող այլ նորմերը՝ կարծում ենք՝ պետք է հստակ շեշտադրել այն միտքը, որ սահմանադրական վերահսկողության ինչպիսի ձև էլ ամրագրվի օրենսդրության մեջ, այն շպետը է խոշնդրության սահմանադրական արդարադատության մատչելիության սկզբունքի լիարժեք երաշխավորման համար: Գործնականում հնարավոր են իրավիճակներ, երբ իրավունքի մի սուբյեկտի կողմից սահմանադրական դատարան դիմելն արդեն արգելափակի իրավաբանական կամ ֆիզիկական անձանց կողմից սահմանադրական արդարադատության իրավունքն արդյունավետորեն իրացնելու հնարավորությունը: Դատարանների կողմից կամ Մարդու իրավունքների պաշտպանի կողմից սահմանադրական դատարան դիմում ներկայացնելու և դրա հիման վրա որոշում ընդունելու փաստը չի կարող արգելել ֆիզիկական և իրավա-

բանական անձանց օգտվել սահմանադրական դատարան դիմելու միջոցով իրենց հիմնարար իրավունքները և ազատությունները պաշտպանելու հնարավորությունից: Կարծում ենք, որ օրենսդրի պետք է այս տրամաբանության հիման վրա սահմանի սահմանադրական դատարանի մատչելիության, սահմանադրական դատարանի որոշումների իրավական հետևանքների հետ կապված իրավահարաբերությունները կարգավորող նորմեր:

Ամփոփելով վերոշարադրյալ՝ գտնում ենք,
որ

1. Սահմանադրական արդարադատության մատչելիության սկզբունքն իր մեջ ներառում է անձի իրավունքը «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով դիմել սահմանադրական դատարան, որի հիման վրա կիրականացվի գործի քննություն, և ստանալ իր գործի վերաբերյալ սահմանադրական դատարանի որոշումը: Խնդրությունը առարկա հարցի վերաբերյալ, մասնավորապես, սահմանադրական դատարան դիմելու իրավունքի մաս է կազմում, ի թիվս այլ իրավունքների, անձի իրավունքը ստանալ սահմանադրական դատարանի որոշում, որով վերջինս, որոշման եզրափակիչ մասում բացահայտելով օրենքի դրույթի սահմանադրաբիրավական բովանդակությունը, այն կճանաչի Սահմանադրությանը համապատասխանող և միաժամանակ կգտնի, որ այդ դրույթը նրա նկատմամբ կիրառվել է այլ մեկնարանությամբ, ինչն էլ իր եերթին կհանգեցնի դիմունի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտի՝ օրենքով սահմանված կարգով վերանայմանը՝ նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով: Այս մոտեցումը, կարծում ենք, համահունչ է նաև ՀՀ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշմանը, ըստ որի «Կոնկրետ վերահսկողության դեպքում առաջին պահին առաջին դատարանը կատարելու համար անհատական շահերի պաշտպանության խնդիրը»¹⁵,

2. Սահմանադրական դատարանի մատչելիությունը պետք է երաշխավորվի յուրաքանչյուրի համար՝ անկախ նրանից, թե այլ սուբյեկտներ կոնկրետ սահմանադրաբիրավական վեճի առնչությամբ նախկինում սահմանադրական դատարան դիմել են, թե ոչ, որպեսզի հնարավոր դառնա անհատական շահերի արդյունավետ պաշտպանությունը,

3. Օրենքում պետք է լրացրումներ կատարվի, որոնք սահմանադրական դատարանին հնարավորություն կտան, մերժելով անհատական դիմումի

հիման վրա գործը քննության ընդունումը, միաժամանակ իր դիրքորոշումն արտահայտել կոնկրետ գործի շրջանակներում օրենքի վիճարկվող դրույթն այլ մեկնաբանությամբ կիրառելու փաստի վերա-

բերյալ, որը նույնական նոր հանգամանք կհանդիսանա դատական ակտը վերահսկելու համար:

¹ Այսուհետ՝ ՄԻԵԿ:

² Տե՛ս Հայաստանի Հանրապետության սահմանադրության մեկնաբանություններ / ընդհանուր խմբագրությամբ՝ Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի.-Երևան, «Բրավունք», 2010, էջ 222: Այսուհետ՝ ՀՀ ՍԴ և ՄԻԵԿ:

³ Այսուհետ՝ Օրենք: Օրենքը հասանելի է ՀՀ սահմանադրական դատարանի պաշտոնական կայքէջում՝ http://www.concourt.am/armenian/law_cc/index.htm:

⁴ Տե՛ս Marini v. ALBANIA, judgment of 18 December 2007, §112, Golder v. the United Kingdom, judgment of 21 February 1975, §§ 35-36, Acts of ECHR are available at HUDOC Search Portal, <http://cmiskp.echr.coe.int/tkp197/search.asp?skin=hudoc-en>:

⁵ Տե՛ս Marini v. ALBANIA, judgment of 18 December 2007, §113. , Acts of ECHR are available at HUDOC Search Portal, <http://cmiskp.echr.coe.int/tkp197/search.asp?skin=hudoc-en>.

⁶ «Յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով», «դատարանի վերջնական ակտ», «ապառել են դատական պաշտպանության բոլոր միջոցները», «Վիրառված օրենքի դրույթ» բառակապակցությունները սույն աշխատանքի քննարկման առարկա չեն, ուստի դրանց բովանդակության վերլուծության այս աշխատանքում չենք անդրադանա:

⁷ Օրենքի իմաստով նշանակություն չունի այն հանգամանքը՝ արդյոք կոնկրետ վերահսկողության, թե վերացական վերահսկողության շրջանակներում է օրենքի դրույթը վիճարկվել:

⁸ Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի տեղեկագիր, 1(50)2009, էջ 51:

⁹ Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի տեղեկագիր, 1(50)2009, էջ 56:

¹⁰ Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի տեղեկագիր, 1(50)2009, էջ 61-62:

¹¹ ՀՀ սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող սուբյեկտներն ամրագրված են ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածում:

¹² Իրավական նորմերի սահմանադրականության վերացական վերահսկողություն՝ ըստ Օրենքի 68-րդ հոդվածի վերանագրի:

¹³ Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի տեղեկագիր, 1(50)2009, էջ 53:

¹⁴ Կոնկրետ և վերացական վերահսկողության առանձնահատկություններին, քննորոշ գծերին նվիրված են բազմաթիվ գիտական աշխատանքներ, որոնցից կարելի է նշել հետևյալը՝ Հարությունյան Գ.Գ. Սահմանադրական վերահսկողություն, «Նժար» հրատ., Երևան-2002, էջ 58-61:

¹⁵ ՀՀ սահմանադրական դատարանի տեղեկագիր, 1(50)2009, էջ 54:

РЕЗЮМЕ

Равный доступ к Конституционному Суду как один из принципов конституционного правосудия: проблемы законодательного регулирования

В статье рассматриваются актуальные вопросы доступа к Конституционному Суду как одного из неотъемлемых принципов конституционного правосудия, полноценная реализация которого является необходимым условием эффективной защиты конституционных прав и свобод человека. Автор исследует законодательные нормы, направленные на обеспечение реализации указанного принципа. В результате системного анализа нормативной базы автор приходит к выводу о необходимости внесения в действующее законодательство поправок и дополнений, которые обеспечили бы равные для всех возможности доступа к конституционному правосудию независимо от того, какой субъект и когда обращается в Конституционный Суд.

SUMMARY

Equal Access to the Constitutional Court as One of the Principles of Constitutional Justice: Problems of Legislative Regulation

In this article, the Author discusses the current issues of the access to the Constitutional Court as one of the constituting principles of constitutional justice, proper implementation of which is essential for the effective protection of constitutional rights and freedoms. The Author examines the legislative rules aiming at ensuring the implementation of this principle. On the basis of system analysis of national legislation, the Author concludes that it is necessary to amend and supplement the legislation in force with the rules providing equal opportunities of the access to constitutional justice for everybody, regardless of the status of an applicant and the time of his or her applying to the Constitutional Court.

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՄՎԱՐԴԵՎԱՆՅԱՆ

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի հրավական վերլուծության վարչության պետ,
Հայ-ռուսական (պավոնական) համալսարանի իրավունքի և քաղաքականության ինստիտուտի քրեական և քրեական դատավարության իրավունքի ամբիոնի ասպիրանտ

ՍԱՍՎԵԼ ՅՈՒԶԲԱԾՅԱՆ

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի հրավական վերլուծության վարչության մասնագետ,
Հայ-ռուսական (պավոնական) համալսարանի իրավունքի և քաղաքականության ինստիտուտի քրեական և քրեական դատավարության իրավունքի ամբիոնի ասպիրանտ

ՀԱՐԿԱՅԻՆ ԱՐԳԵԼԱՆՔԻ ԻՆՍԻՏՈՒՏԻ ԿԻՐԱՌՈՒՄՆ ՈՐՈՇ ԻՐԱՎԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Հարկային արգելանքը դասվում է խնդիրներ պարունակող և միանցանակ չընկալվող ինստիտուտների քվին: Որոշ հեղինակներ գտնում են, որ հարկային արգելանքը ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից իրենց հարկային պարտավորությունների կատարման հանդեպ պետության վերահսկողությունն է, որի միջոցով իրականացվում է պետության տնտեսական անվտանգության ապահովում¹: Իրավագետ Էրիկ Յանսենը հարկային իրավահարաբերություններին վերաբերող իր աշխատությունում նշել էր, որ հարկային պարտավորությունների կատարումն ապահովելու համար անձանց գույքի վրա արգելադրումը ըստ չի հանդիսանում մարդու իրավունքների խախտում²: Միաժամանակ այլ հեղինակներ գտնում են, որ հարկային արգելանքի ինստիտուտը ուղղակիրեն առնչվում է անձանց սեփականության իրավունքի հետ, ուստի դրա կիրառումը պետք է լինի հստակ կանոնակարգված, քանի համատարած շարաշահումները կիանցեցնեն իրավական երաշխիքների ուժնահարման³:

Աշխատանքում ուսումնասիրվել է ներպետական ու միջազգային փորձը և ներկայացվել Հայաստանի Հանրապետության «Հարկերի մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք) նախատեսված հարկային արգելանքի ինստիտուտի վերաբերյալ որոշ իրավական խնդիրներ:

Օրենքը կարգավորում է հարկային իրավահարաբերությունները: Օրենքի 30.2 հոդվածի 1-ին պարբերությամբ նշվում է, որ գույքի արգելանքը հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտ-

ների գծով պարտավորության կատարումն ապահովելու նպատակով հարկ վճարողի գույքային իրավունքների սահմանափակման միջոցով հարկային մարմնի կողմից իրականացվող գործողություն է: Արգելադրումն իրականացվում է բանկային հաշիվների արգելադրման, ինչպես նաև գույքի տնօրինման, տիրապետման կամ օգտագործման իրավունքի սահմանափակման միջոցով՝ հարկային պարտավորությունների չափով:

Այսպես, հարկային արգելանքը ուղղակիրեն վերաբերում է անձանց սեփականության իրավունքի սահմանափակմանը: Դեռևս 1948 թվականի Մարդու իրավունքների համընդիանուր հոչակագրի 17-րդ հոդվածով սահմանվել է, որ ամեն որ ունի սեփականություն ունենալու իրավունք՝ ինչպես միայնակ, այնպես էլ որիշների հետ միասին: Նույն հոդվածը հստակ նախատեսել էր նաև, որ ոչ որ չի կարող կանայականորեն զրկվել իր սեփականությունից⁴:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (այսուհետ՝ Սահմանադրություն) 31-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ ոչ որի չի կարելի զրկել սեփականությունից, բացառությամբ դատական կարգով՝ օրենքով, նախատեսված դեպքերի: Այսինքն՝ Սահմանադրության համապատասխան դրույթը նախատեսված է, որ անձին «զրկել» սեփականությունից հնարավոր է միայն դատական կարգով, այն էլ օրենքով նախատեսված դեպքերում: Սեփականությունից «զրկել» եզրույթը որևէ այլ իրավական ակտում, բացի բարձրարգույն իրավաբանական ուժ ունեցող իրա-

վական ակտից, չի հանդիպում, որի արդյունքում այն մեկնաբանելու դժվարություններ են առաջանում: Սահմանադրության մեկնաբանությունների համաձայն՝ սեփականությունից «զրկելուն» շատ ավելի լայն մեկնաբանություն է տրվում. այստեղ այն ենթադրում է կոնկրետ օրյեկտի նկատմամբ սեփականության իրավունքի ոչ միայն դադարում, այլև այնպիսի սահմանափակում, որի արդյունքում սեփականատերը գրկում է իրեն պատկանող օրյեկտն իր հայեցողությամբ տիրապետելու, ըստ նշանակության օգտագործելու և այն տնօրինելու հնարավորությունից: Եվ եթե նույնիսկ այդպիսի սահմանափակումը կատարվում է որևէ ընդհանուր, հանրային նպատակից ելնելով, դա ևս դիտարկվում է որպես սեփականությունից գրկում՝ սահմանադրաբական առումով, և Սահմանադրության նշված դրույթին համապատասխան՝ կարող է կատարվել միայն դատարանի որոշման հիման վրա⁵: Ռուսաստանի Դաշնության Սահմանադրության գրեթե նույնաբռնվանդակ դրույթի վերաբերյալ նույնպես նման մեկնաբանություններ են տրվել⁶: Ռուսի վերոնշյալ մեկնաբանություններից կարելի է եզրակցնել, որ սեփականությունից գրկելը, որն իր մեջ ներառում է նաև սեփականության իրավունքի սահմանափակումը, կարող է իրականացվել միայն դատական կարգով և (կամ) հստակ դատական վերահսկողության առկայության պարագայում: Սակայն Օրենքի 30.2 հոդվածը նախատեսում է անձի սեփականության իրավունքի սահմանափակում կամ գրկում՝ հարկային մարմնի կողմից անձի գույքի վրա արգելանք դնելու միջոցով: Համաձայն ՌԴ Հարկային օրենսգրքի 48-րդ և 77-րդ հոդվածների՝ հարկային մարմինն իրավասու չէ որոշում ընդունել անձի գույքի վրա արգելանք դնելու մասին: Այսինքն, ՌԴ համապատասխան օրենսդրության համաձայն՝ հարկային մարմինը առհասարակ օժտված չէ նման լիազորությամբ:

Օրենքի 30.2 հոդվածի 2-րդ պարբերությունը սահմանում է, որ հարկային մարմնի կողմից վերահսկող եկամուտների գծով չկատարված պարտավորության չափը հինգ հարյուր հազար կամ ավելի դրամ կազմելու դեպքում հարկային մարմնի դեկավարն առհասարակ օրենքով սահմանված կարգով իրավունք ունի հարկ վճարողի գույքի վրա արգելանք դնելու մասին հանձնարարագիր իրավարակել: Այսինքն, կարելի է եզրակացնել, որ օրենսդրը նշյալ որոշում կայացնելը նախատեսել է որպես հարկա-

յին մարմնի իրավունք: Այսինքն, հստակ չափորոշիչների բացակայության, ինչպես նաև վարչական մարմնի ցանկության և (կամ) գնահատման հիման վրա անձի սեփականության իրավունքը սահմանափակող (զրկող) որոշումները խթանում են այնպիսի իրավահակի առաջացում, եթե հնարավոր են չարաշահումներ և խտրական վերաբերմունքի դրսերումներ անձանց նկատմամբ:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ ՄԻԵԴ) նախադեպային իրավունքից բխում է, որ որևէ նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության (res judicata) սկզբունքին, այսինքն՝ համապատասխան նորմը ձևակերպված չէ բավարար հստակությամբ: Ուստի հստակ չափորոշիչների բացակայությունը չի համապատասխանում ՄԻԵԴ-ի նախադեպային որոշումներում արտահայտած իրավական դիրքորոշմանը^{7,8}:

Ցանկանում ենք անդրադառնալ նաև Օրենքի 30.2 հոդվածի 13-րդ մասում անրագրված գույքի արգելադրման որոշման ժամկետներին: Համաձայն վերոնշյալ դրույթի՝ գույքի արգելադրման մասին որոշման ժամկետն է 1 ամիսը: Միաժամանակ պարզ չէ, թե ինչ նպատակ է հետապնդվում, եթե նախատեսվում է վարչական մարմնի կողմից առանց դատարանի որոշման և (կամ) հաստաման կայացրած որոշման տևողությունը՝ 1 ամիս:

Սեփականության իրավունքի սահմանափակման վերաբերյալ մեր կողմից ուսումնասիրվել են նաև ՄԻԵԴ-ի որոշ նախադեպային որոշումներ: Այսպես, Պետրոս Պապամիխալոպուսն ընդունման Հունաստանի (24.06.1993) գործով նշել է, որ սեփականությունից «զրկել» է համարվում նաև այնպիսի փաստացի խոչընդոտներ ստեղծելը, որոնք սեփականատիրոջ համար անհնարին են դարձնում իր սեփականությունից օգտվելը: Ավելին, ՄԻԵԴ-ի որոշումներից մի քանիսը սահմանում են, որ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք, և անձանց գույքի արգելադրումը մշտապես պետք է լինի իրավաչափ և չհանգեցնի անձանց իրավունքների խախտմանը⁹:

Ուսւ իրավագետ Արշրան իր աշխատությունում փորձել է համեմատականներ անցկացնել և ընդհանուր եզրեր գտնել հարկային ծառայության կողմից գույքի վրա արգելադրում դնելու և

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

քրեական դատավարության օրենսգրքի շրջանակ-ներում գույքի վրա կալանք դնելու նորմերի միջև¹։ Մեր դիրքորոշումը տարբերվում է հեղինակի տեսակետից, քանի որ նշված ինստիտուտները էականորեն տարբերվում են միմյանցից։ Այնուամենայնիվ, ցանկանում ենք նշել, որ ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգրքի 13-րդ հոդվածի 1-ին մասը նախատեսում է, որ քրեական դատավարության լճացքում անձանց բանկային ավանդների և այլ գույքի վրա կալանք կարող է դրվել հետաքննության մարմնի՝ քննիչի, դատախազի, դատարանի որոշմամբ։ Միաժամանակ, ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի պաշտոնական նախագծի 17-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է քրեական վարույթի լճացքում անձանց ֆինանսական միջոցների և այլ գույքի վրա արգելանք դնելը միայն դատարանի որոշմամբ՝ բացառությամբ նշված օրենսգրքով նախատեսված անհետաձգելի դեպքերի։ Իսկ նոյն օրենսգրքի նախագծի 106-րդ հոդվածի 2-րդ կետը սահմանում է, որ գույքի վրա կալանք դնելը կիրառվում է դատարանի որոշման հիման վրա։ Անհետաձգելի դեպքերում, եթե հարկադրանքի այս միջոցի անհապաղ չկիրառում կարող է հանգեցնել գույքի կորստի,

վնասման կամ ոչնչացման, գույքի վրա կալանք դնելը կարող է կիրառվել դատախազի որոշմամբ։ Այս դեպքում անհապաղ, սակայն ոչ ուշ, քան 24 ժամվա լճացքում պեսք է համապատասխան որոշումը և այն իմմնավորող նյութերը ներկայացվի դատարանի հաստատմանը։ Գտնում ենք, որ նախագծով առաջարկվող մոտեցումը հարկավոր է կիրառել նաև հարկային օրենսդրությունում։

Ելնելով վերոգրյալից՝ գտնում ենք, որ Օրենքով ամրագրված հարկային մարմինների կողմից իրականացվող արգելադրումը նախատեսող նորմը չի համապատասխանում միջազգային պայմանագրային և նախադեպային իրավունքի նորմերին, ինչպես նաև խոչընդոտում է ներպետական իրավական համակարգը միատեսակ կիրառելուն, և հստակ չափորոշիչների բացակայության պարագայում առաջանում է խտրական կամ ոչ իրավաչափ գործողությունների լուրջ ռիսկ։ Ուստի, անհրաժեշտ է կատարել համապատասխան փոփոխություններ՝ նշված խնդիրները վերացնելու և իրավական երաշխիքները պաշտպանելու նպատակով։

¹ Տե՛ս Առըսովա Հ.Գ. “Правовые основы налогообложения и налогового планирования хозяйствующих субъектов”; учеб. пособие. – М.: Проспект, 2009. С. 55-58.

² Տե՛ս Erik M. Jansen, The Taxing Power: A Reference Guide to the United States Constitution (Westport, CT: Praeger Publishers 2005), 18-25.

³ Տե՛ս Jay K. Rosengard, Property Tax Reform in Developing Countries (Kluwer Academic Publishers 1998), 108-110; Карасева М.В., Щекин Д.М. “Налоговое право стран Восточной Европы. Общая часть: Беларусь, Польша, Россия, Словакия, Украина, Чехия”. М.: “Волтерс Клювер”, 2009. С. 155-171.

⁴ Տե՛ս Մարդու իրավունքների համընդհանուր հոչակագիր (հայերեն քարզմանությունը՝ ՍԱԿ-ի հանրային տեղեկատվության վարչության երևանյան գրասենյակ), 10 դեկտեմբեր 1948, էջ 2:

⁵ Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ (լոնդիանուր խմբագրությամբ՝ Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի). Եր.: «Իրավունք», 2010, էջ 366:

⁶ Տե՛ս <http://constitution.garant.ru/science-work/comment/5697462/chapter/2/#2000>.

⁷ Տե՛ս Վիլյդհաբեր Լ. “Прецедент в Европейском Суде по правам человека”// Государство и право. 2001. N 12 . С. 5-12:

⁸ Տե՛ս Case of Marckx v. Belgium (1979) no. 6833/74; Case of Amann v. Switzerland (2000) no. 27798/95.

⁹ Տե՛ս Case of Papadopoulos v. Cyprus (2000) no. 39972/98.

¹⁰ Տե՛ս Case of Gasus dosier- und fördertechnik GmbH v. The Netherlands [2000] no. 39972/98; Case of Sporrong and Lönnroth v. Sweden (1984) no. 7151/75.

¹¹ Տե՛ս Արշբա Գ.Վ. “Наложение ареста на имущество в уголовном судопроизводстве”, Дис. ... канд. юрид. наук: 12.00.09. : Омск, 2004. С. 72-74.

РЕЗЮМЕ

Некоторые правовые проблемы применения института налогового ареста

В статье представлены внутригосударственные правила применения института налогового ареста. Авторами проводится сравнительно-правовой анализ. В работе интерпретируется позиция Европейского суда по правам человека, касательно применения института налогового ареста, а также поднимаются проблемы связанные с внутригосударственным законодательством. Авторы делают предложения по соответствованию института налогового ареста принципам международного права, а именно принципу правовой определенности, а также требованиям Конституции РА.

SUMMARY

Certain issues regarding the practice of arrest on property in tax related cases

The authors present the national regulations regarding arrest on property in tax related cases. Comparative legal analysis is present in the article. In the article the position of the European Court of Human Rights regarding the arrest on property in tax related cases is presented and issues connected with the national legislation are raised. The authors make recommendations as a result of which the national regulations regarding arrest on property in tax relates cases will be in conformity with the international principles specifically the principal of legal certainty as well as with the demands of the Constitution of RA.

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ**ՍԻՍԱ ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ**

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի հայցորդ

ԶԾՆՎԱԾ ԵՐԵԽԱՅԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՐԵԽԱՅԻ ԻՐԱՎՈՒՔՆԵՐԻ ՀԱՍՏԱՔՍՈՒՄ



Իրավունքի տարբեր ճյուղերում, մասնավորապես սահմանադրական իրավունքում և կայուն զարգացման հայեցակարգի՝ որպես մարդկության բարեկեցության ուղղված նորագույն զաղափարախոսության, շրջանակներում երեխայի իրավունքների կարևորությունը բույլ է տալիս տեսական հարբության վրա ուսումնասիրել այն որպես իրավական կատեգորիա: Երեխայի իրավունքների առնչությամբ լիովին ընդունելի են Ս. Ս. Ալեքսեևի խոսքերն այն մասին, որ միայն որպես իրավական կատեգորիա դիտարկելու դեպքում իրավաբանական գիտելիքները կարելի են բարձրացնել այն մակարդակի վրա, որը համապատասխանում է ներկա ժամանակաշրջանի պահանջներին, որի միջոցով էլ դրանք առավելացնեն կծառայեցվեն պրակտիկային և կարևորագույն կենսական խնդիրների լուծմանը¹:

Սակայն երեխայի իրավունքները որպես իրավական կատեգորիա ուսումնասիրելու համար անհրաժեշտ է առաջին հերթին պարզել, թե որ պահից է երեխան ընկնում իրավական նորմերի գործողության տակ, որ պահից են պաշտպանվում երեխայի իրավունքները՝ դեռևս պտղի կարգավիճակում, թե՝² ծննդյան պահից ի վեր: Այստեղ հարկ է նշել, որ «Երեխայի իրավունքների մասին» 1989թ. կոնվենցիայի դրույթները չեզոք են կյանքի սկզբի հարցի վերաբերյալ: Վերջինիս նախարանի շորորը կետը պարունակում է «Երեխայի իրավունքների մասին» 1959թ. հոչակագրից դրույթ այն մասին, որ երեխան, ելնելով իր մտավոր և ֆիզիկական անհասունության հաճամանքից, ունի հասուլ պաշտպանության և խնամքի, այդ թվում նաև իրավական պաշտպանության կարիք ինչպես մինչև ծնունդը, այնպես էլ ծննդյան պահից ի վեր: Սակայն երեխայի՝ մինչև ծնվելը պաշտպանության անհրաժեշտության ընդունումը չի բարձրացնում այս հարցը օրենսդրական կարգավորման մակարդակի, առավել ևս երբ կոնվենցիայի վավերացման

դեպքում մասնակից պետություններին կոնվենցիայի դրույթների մեկնաբանության իրավունք չի վերապահում²: Սակայն սա արգելվ չի հանդիսանում որոշ պետությունների համար իրենց ազգային օրենսդրություններում ամրագրել նորմեր դեռևս շնչված երեխանների իրավունքների մասին: Այսպես, Արգենտինայի Քաղաքացիական օրենսգիրքը պարունակում է դրույթ այն մասին, որ մարդու կյանքը սկսվում է մոր արգանդում սաղմնավորվելու պահից, և անհատը կարող է որոշ իրավունքներ ձեռք բերել դեռևս մինչև ծնվելը, ասես նա արդեն ծնված է:

Հետաքրքրական է այն, որ դեռևս շնչված երեխայի իրավական պաշտպանության հարցերը վերհանված են եղել դեռևս շատ ավելի վաղ շրջանում, քան երեխայի իրավունքների մասին վերոհիշյալ հոչակագրերում: Այսպես, միջին ասորական օրենքներում (մ.թ.ա. XV – XI դդ.) «Ա» աղյուսակների 50-րդ պարագագում նշված է. «Եթե մարդը հարվածի կնոջը և պատճառի նրան վիժում, ապա նա պետք է պատասխանատվություն կրի պտղի համար այնպես, ինչպես կյանքին պատճառված վիճակ համար»³: «Մարդկանց կարգավիճակի մասին» Հուստինիանոսյան Դիգեստների 5-րդ Տիտղոսի 7-րդ պարագագում նշված է. «Ով գտնվում է արգանդի մեջ, պաշտպանվում է այնպես, ինչպես որ կգտնվեր մարդկանց մեջ, քանզի հարցը վերաբերում է հենց պտղի շահերին»⁴:

Վերոհիշյալ նորմերի վերլուծությունից երևում է, որ դեռևս ինն դարերում մարդկային էմբրիոնը գտնվել է իրավական պաշտպանության ներքո որպես ինքնուրույն առանձնացված սուբյեկտ: Նրա կյանքը նույնիսկ դեռևս արտաքին աշխարհում չգտնվելու պարագայում արդեն իսկ պաշտպանվում էր օրենքով:

Անհրաժեշտ է անդրադառնալ այս հարցի ներպետական օրենսդրական կարգավորմանը: Համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդ-

վածի՝ ակնհայտ հղի կնոջ սպանությունը դիտարկվում է որպես որակյալ հատկանիշ (ծանրացուցիչ հանգամանք) և նախատեսվում է 12-20 տարվա ազատազրկում կամ ցմահ ազատազրկում: Չնայած պատժատեսակի և պատժաչափի խստությանը՝ այնուամենայնիվ պատասխանատվությունը նախատեսվում է ոչ թե երկու անձանց, այլ մեկ անձի սպանության համար, քանի օրենսդիրը և դատական պրակտիկան մոր օրգանիզմում գտնվող երեխային չեն դիտարկում որպես իրավունքի առանձին «կենդանի» սուբյեկտ:

Սպանության օբյեկտ է համարվում մարդու կյանքը, որը պետք է դիտվի ոչ միայն որպես ֆիզիոլոգիական գործընթաց, այլ նաև որպես անձի՝ հասարակության մեջ գոյություն ունենալու օրենքով պաշտպանվող հնարավորություն: Որպես ֆիզիոլոգիական գործընթաց՝ մարդու կյանքը ունի սկիզբ և ավարտ: Կյանքի սկիզբ է համարվում ֆիզիոլոգիական ծննդաբերության սկիզբը: Երեխայի կյանքը օրենքով պաշտպանվում է ծննդաբերության ժամանակ (Քրեական օրենսգրքի 106-րդ հոդված): Միևնույն ժամանակ մոր օրգանիզմում գտնվող պտղի նկատմամբ ուտնագործունը որակվում է ոչ թե որպես սպանություն, այլ առաջ է բերում քրեական պատասխանատվություն՝ ապօրինի արորտ կատարելու կամ կնոջ առողջությանը ծանր վնաս պատճառելու համար:

Դեռևս չծնված երեխայի նկատմամբ այլ մոտեցումներ են պարունակում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի համապատասխան նորմերը: Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1190-րդ հոդվածի՝ «Ըստ կտակի և ըստ օրենքի ժառանգներ կարող են լինել ժառանգության բացման օրը կենդանի, ինչպես նաև ժառանգատուի կենդանության ժամանակ սաղմնավորված և ժառանգությունը բացվելուց հետո կենդանի ծնված երեխաները»:⁷ Այսպիսով, օրենքը պաշտպանում է սաղմնավորված, բայց դեռևս չծնված երեխայի իրավունքները:

Վերոհիշյալ հարցի առնչությամբ կարևոր է նաև հղության արհեստական ընդհատման (արորտի) իրավաբանական գնահատականը: Ստալինյան ժամանակաշրջանում արորտի արգելումը հիմնավորվում էր միայն անօրինական վիրահատությունների ընդլայնման և պրակտիկայում դրանց արդյունքում կանանց մահացության դեպքի ավելացման պատճառաբանություններով:

«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածը սահմանում է. «Յուրաքանչյուր ոք իրավունք ունի

անցանկակի հղությունից և հղության արհեստական ընդհատումից խուսափելու նպատակով օգտվել ընտանիքի պլանավորման արդյունավետ և անվճա միջոցներից, որանց վերաբերյալ ստանալ անհրաժեշտ տեղեկություններ: Հղության ընդհատումը իրականացվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով»⁸:

«Մարդու վերաբերադրողական առողջության և վերաբերադրողական իրավունքների մասին» ՀՀ օրենքի՝ հղության արհեստական ընդհատմանը (արորտին) վերաբերող 10-րդ հոդվածը նախատեսում է, որ յուրաքանչյուր կին ունի հղության արհեստական ընդհատման իրավունք: Հղության արհեստական ընդհատումը մինչև տասներկու շաբաթական հղության ժամկետը կատարվում է կանոց դիմումի համաձայն: Հղության արհեստական ընդհատումը մինչև քսաներկու շաբաթական հղության ժամկետը կատարվելու կամ արդարացնելու ժամկետը կատարվելու քժշկացիալական ցուցումների (քժշկական ցուցումներ, օրինակ՝ ինֆեկցիոն և պարազիտարիվանություններ, չարորակ նորագոյացություններ, հոգեկան խանգարումներ, սրտանորային համակարգի հիվանդություններ և այլն, սոցիալական ցուցումներ, օրինակ՝ հղության ընթացքում ամուսնու մահը, հղության՝ բռնաբարության արդյունք հանդիսանալը և այլն) դեպքում կնոջ համաձայնությամբ: Հղության արհեստական ընդհատումը անշափական դիմումով կատարվում է նրա ծնողների կամ այլ օրինական ներկայացուցիչների համաձայնությամբ, իսկ որպես անհնարինության դեպքում՝ քժշկական հանձնաժողովի արձանագրության հիման վրա»⁹:

Ակնհայտ է, որ հղության արհեստական ընդհատում օրենքով բույլատրելիս օրենսդիրը կարևորում է ոչ թե մարդկային էմբրիոնի կյանքի իրավունքը, այլ մոր առողջության բժշկական չափանիշները:

Ժամանակակից աշխարհում գերակշռում է մոր օրգանիզմում գտնվող երեխային որպես ոչ կենդանի էակ դիտարկելու մոտեցումը (Բելառուս, մեծ Բրիտանիա, Իռլանդիա և այլն)¹⁰, թեպետ այս հարցում մշտապես կատարվում են փոփոխություններ: Օրինակ՝ ԱՄՆ-ի Դաշնային Խորհրդատվական հանձնաժողովի կանոնադրության մեջ մարդկային էմբրիոնը դիտարկվում է որպես «մարդկային սուբյեկտ»: Այսպիսով, երեխայի իրավունքները՝ որպես իրավական կատեգորիա, ծագում են երեխայի ծննդյան պահից: Այս առումով իրավաբանորեն կարևորվում է որոշակիացնել, թե

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

որն է համարվում ծննդի պահ, «առավել ևս՝ երեխայի կենդանի ծնվելը» և համապատասխանաբար իրավական նորմերի գործողության սկիզբը:

ՀՀ Կառավարության 2005թ. հունիսի 16-ի

N 949-Ն որոշման մեջ տրված են պերինատալ մահացության, կենդանածնության և մեռելածնության սահմանումները, որոնք համապատասխանեցված են Առողջապահության Համաշխարհային կազմակերպության կողմից ընդունված մոր և մանկան ծառայության ոլորտի բժշկադեմոգրաֆիկ իիմնական հասկացություններին: Այսպես՝ պերինատալ մահացությունը պտղի մահն է մինչև ծննդաբերելը, ծննդաբերության ժամանակ կամ ծնունդից հետո՝ վաղ նեռնատալ (մինչև 7 լրիվ օրը):

Կենդանածնություն է համարվում մոր օրգանիզմից բեղմնափորման արգասիքի լրիվ արտադրումը կամ դուրսբերումն անկախ հոլիության ժամկետից, որից հետո պտուղը շնչում կամ ցուցաբերում է կյանքի որեւէ այլ նշան, ինչպիսիք են սրտխփողը, պորտալարի անորազարկը կամ կամային մկանների ակնհայտ շարժումները, անկախ նրանից, թե արդյոք կտրված է պորտալարը, և (կամ) անջատված է ընկերքը: Այսպիսի ծննդի յուրաքանչյուր արգասիք համարվում է կենդանածին: ՔԱՅԱ-ի մարմիններում գրանցման ենթակա են 500գ¹² և ավելի քաշով կենդանածնության բոլոր դեպքերը:

Թեպետ դեռևս շնչված երեխայի իրավունքների ճանաչումը և նրա՝ որպես իրավահարաբերության սուբյեկտի, հնարավոր ընկալումը համապատասխանում են կայուն զարգացման հայեցակարգի սկզբունքներին, այնուամենայնիվ նրանց իրավական պաշտպանության սկզբնական էտապի հարցը դեռևս մնում է անորոշ: Հնարավոր է հետագայում գիտատեխնիկական առաջընթացը, ներառյալ բժշկությունը, ինչպես նաև հոգեբանական ու մարդասիրական միտումները կփոխեն օրենսդրի մոտեցումը դեռևս շնչված երեխայի նկատմամբ:

Այսպիսով, իրավունքը երեխայի՝ որպես իրավահարաբերության սուբյեկտի նկատմամբ սկսում է գործել միայն նրա կենդանի ծնվելու դեպքում

(ըստ բժշկական շափորոշիչների), ինչպես որ ամրագրված է օրենսդրության մեջ: Միայն այդ պահից է սկիզբ առնում երեխայի իրավունքների գործածությունը:

Այդ իրավունքները կիրառվում է միայն այն անձանց նկատմամբ, ովքեր ծնվում են կենդանի և շարունակում են ապրել: Որոշ իրավական ակտերում սաղմնափորված, բայց դեռևս չծնված երեխաների մասին հիշատակումը չի առաջացնում նրանց որպես իրավունքի սուբյեկտներ դիտարկելու հետևանքներ, այլ նպատակ է հետապնդում ոչ թե նրանց որպես այդպիսիք պաշտպանության տակ առնելու, այլ նրանց համար ծնունդից հետո լրացուցիչ երաշխիքներ ստեղծելու:

Թեպետ երեխայի իրավունքների մասին 1989թ. կոնվենցիան անդամ-պետություններին իր դրույթների մեկնաբանման իրավունք չի վերապահում, այնուամենայնիվ, ելնելով երեխայի իրավունքների սահմանադրամիրավական ապահովման կայունության և մարդասիրական նկատառումներից, անհրաժեշտ է օրենսդրական մակարդակով երեխային ճանաչել որպես իրավահարաբերության սուբյեկտ և նրան վերցնել իրավական պաշտպանության տակ արդեն իսկ սաղմնափորման պահից: Դա կարող է նվազագույնին հասցնել այն բոլոր հակասությունները, որոնք ի հայտ են գալիս իրավունքի տարբեր ճյուղերում ծնված և դեռևս շնչված երեխաների մասնակցությամբ իրավահարաբերությունների կարգավորման ժամանակ (օր՝ քաղաքացիական իրավունքում, ըստ կտակի և ըստ օրենքի, ժառանգ լինելու հնարավորություն օրենսդիրը տալիս է դեռևս սաղմանավորված երեխային, մինչդեռ քրեական իրավունքում հյի կնոջ սպանությունը որակվում է որպես որակյալ հատկանիշ՝ անտեսելով պտղի կյանքի իրավունքը): Սա կիրանի ապագա սերունդների նկատմամբ հասարակության վերաբերմունքի առանձնահատուկ մողելի ձևավորումը՝ հանգեցնելով այն երեխաների նկատմամբ պետության իրավական քաղաքականության մակարդակի:

¹ St'u Алексеев С.С. “Юридические конструкции - ключевое звено права”. М. Статут. 2001. С. 15.

² St'u Legislative History of the Convention on the rights of the child (1978-1989). United National Centre for Human Rights. New York. United Nations. 1995. էջ 22:

³ St'u Семигин Г.Ю. “Среднеассирийские законы (XV – XI века до н.э.). Античный мир и восточные цивилизации”. М. Мысль. 1998. С. 385.

⁴ St'u Скрипилев Е.С. “Дигесты Юстиниана” (пер. И.С. Петерского). М. Наука. 1984, С. 35.

- ⁵ Տե՛ս ՀՀ Քրեական օրենսգիրը, 2003թ. էջ 58:
- ⁶ Տե՛ս Առաքելյան Ս., Գարուզյան Ա., Խաչիկյան Հ., Ղազինյան Գ. և այլն: ՀՀ Քրեական իրավունք (հատուկ մաս), ԵՊՀ հրատ., Երևան, 2009, էջ 111:
- ⁷ Տե՛ս ՀՀ Քաղաքացիական օրենսգիրը, 1998թ. էջ 408:
- ⁸ Տե՛ս ՀՀ օրենքը «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին», 1996թ. էջ 4:
- ⁹ Տե՛ս ՀՀ օրենքը «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին», 2002թ. էջ 6:
- ¹⁰ Տե՛ս Միկитովա Ե.Н. “Ребенок как специальный субъект правовых отношений” // Право и жизнь. 2001. N43. С. 3-7.
- ¹¹ Տե՛ս Մиклашевская А. “Американским эмбрионам дали статус человека, но пока не уравняли с ним в правах” //Коммерсант. 2002. N 21. С. 7-12.
- ¹² Տե՛ս ՀՀ Կառավարության N 949-Ն որոշումը «Մանկական մահացության ու ծնունդների գրանցման և դասակարգման հիմնախնդիրների հետ կապված իրավիճակը բարելավելու մասին», 2005թ. էջ 3:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Առաքելյան Ս., Գարուզյան Ա., Խաչիկյան Հ., Ղազինյան Գ. և այլն: ՀՀ Քրեական իրավունք (հատուկ մաս), ԵՊՀ հրատ., Երևան, 2009, 966 էջ:
2. ՀՀ օրենքը «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին», 1996թ.:.
3. ՀՀ օրենքը «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին», 2002թ.:.
4. ՀՀ Քրեական օրենսգիրը, 2003թ. էջ 58:
5. ՀՀ Քաղաքացիական օրենսգիրը, 1998թ.:.
6. ՀՀ Կառավարության N 949-Ն որոշումը «Մանկական մահացության ու ծնունդների գրանցման և դասակարգման հիմնախնդիրների հետ կապված իրավիճակը բարելավելու մասին», 2005թ.:.
7. Алексеев С.С. “Юридические конструкции - ключевое звено права”. М. Статут. 2001. С. 397.
8. Миклашевская А. “Американским эмбрионам дали статус человека, но пока не уравняли с ним в правах” //Коммерсант. 2002. N 21. С. 7-12:
9. Микитова Е.Н. “Ребенок как специальный субъект правовых отношений” // Право и жизнь. 2001. N 43. С. 3-7:
10. Скрипилев Е.С. “Дигесты Юстиниана” (пер. И.С. Петерского). М. Наука. 1984, С. 48.
11. Семигин Г.Ю. “Среднеассирийские законы (XV – XI века до н.э.). Античный мир и восточные цивилизации”. М. Мысль. 1998. С. 399.
12. Legislative History of the Convention on the rights of the child (1978-1989). United National Centre for Human Rights. New York. United Nations. 1995. 498 էջ:

РЕЗЮМЕ

Проблемы правового статуса неродившегося ребенка в контексте прав ребенка

Необходимость особой защиты детей привело к тому, что в 20-ом веке их права были закреплены в отдельных документах, касающихся прав человека, что и в какой-то степени способствовало развитию особого правового положения детей в обществе. Придание значения правам ребенка в разных сферах общественной жизни и разработка механизмов их защиты в разных отраслях права позволяет исследовать его в рамках правовой категории. Однако необходимо определить тот временной этап, начиная с которого ребенок подпадает под защиту юридических норм и становится самостоятельным субъектом правоотношений. В данной статье представлены меры законодательного регулирования, касающиеся этого вопроса и представлены рекомендации, направленные на защиту детей на более ранних этапах зарождения жизни.

SUMMARY

The problem of legal status of unborn child's in the context of child's rights

The need in the specific protection of children's rights led to their rights being fixed in separate individual documents of human rights which to some extent contributed to the development of the special legal status of children.

Giving an air of importance to the children's rights in different areas of social life and making out structural instruments for their protection enables to finalize and to investigate it as a legal construction.

However, it is necessary to determine the temporal phase, in which the child falls under the protection of the law and becomes a legal entity of its own. This article presents the legal regulations related to this question and also suggestions aimed at the protection of children at an earlier stage of their lives.

ՊԱՎԵԼ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քաղաքացիական դատավարության ամբիոնի ասպիրանտ

**ՓՈԽԱԴԱՐՁՈՒԹՅԱՆ ԱՌԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ՝
ՈՐՊԵՍ ՕՏԱՐԵԿՐՅԱ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ
ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՆԱԽԱՊԱՅՄԱՆ**

Դատական ակտերը, որպես կանոն, տարածքային գործողության բնույթ ունեն: Պետությունների ինքնիշխանության սկզբունքից ելնելով, որն ամրագրված է ՄԱԿ-ի կանոնադրության 2-րդ հոդվածում, յուրաքանչյուր պետություն պետք է հարգի մյուս պետությունների՝ սեփական տարածքում դատական իշխանություն իրականացնելու իրավունքը: Նշված սկզբունքի վերլուծությունից պարզ է դառնում, որ մի պետության տարածքում ընդունված դատական ակտը չի կարող անմիջական իրավական ուժ ունենալ մեկ այլ պետության տարածքում: Սակայն ներկայումս ընթացող համընդհանուր միասնականացման շրջանակներում և միջազգային համագործակցության պայմաններում քիչ չեն դեպքերը, երբ մի պետության դատարանի կայացրած ակտը պետք է ճանաչվի, իսկ հաճախ նաև կատարվի մեկ այլ պետության տարածքում: Օտարերկրյա դատական ակտերի ճանաչման և կատարման անքույլատրելիության դեպքում ամբողջությամբ չի կարող իրականացվել նաև միջազգային մասնավոր իրավունքի կարևորագույն նպատակներից մեկը՝ օտարերկրյա իրավական համակարգերով երաշխավորված իրավունքների պաշտպանությունը: Որպեսզի մեկ պետության դատական մարմնի կողմից ընդունած դատական ակտը ձեռք բերի իրավական ուժ մեկ այլ պետության տարածքում, հարկավոր է, որ վերջինս այդ կապակցությամբ որևէ ձևով տա իր համաձայնությունը: Օտարերկրյա դատական ակտերի ճանաչման և կատարման բույլատրելիության հարցը յուրաքանչյուր երկրում կարգավորվում է այդ երկրի ազգային օրենսդրությամբ, այդ բվում՝ նրա մասնակցությամբ գործող միջազգային բազմակողմ և երկկողմ պայմանագրերով:

ՀՀ-ում օտարերկրյա դատարանների կողմից կայացված դատական ակտերի ճանաչմանը և

կատարմանը վերաբերող իրավահարաբերությունները կարգավորվում են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 247⁶ և 247⁷ հոդվածներով: Մասնավորապես, ՀՀ ՔԴՕ 247⁶ հոդվածի 1-ին մասի առաջին պարբերության համաձայն «Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան օտարերկրյա պետությունների դատարանների քաղաքացիական գործերով կայացրած վճռները, որոշումները ենթակա են ճանաչման Հայաստանի Հանրապետության տարածքում»: ՀՀ ՔԴՕ 247⁷ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ «Օտարերկրյա պետության դատարանի դատական ակտը ճանաչելու վերաբերյալ որոշում կայացնելիս Հայաստանի Հանրապետության իրավասու դատարանը պարզում է միայն, թե որքանով է օտարերկրյա պետության դատարանի դատական ակտը համապատասխանում այն պահանջներին, որոնք սահմանված են Հայաստանի Հանրապետության համապատասխան միջազգային պայմանագրով: Համապատասխան միջազգային պայմանագրի պահանջները պահպանած լինելու և ճանաչումը մերժելու՝ տվյալ միջազգային պայմանագրով նախատեսված հիմքերի բացակայության դեպքում Հայաստանի Հանրապետության իրավասու դատարանը որոշում է կայացնում օտարերկրյա պետության դատարանի դատական ակտը Հայաստանի Հանրապետությունում ճանաչելու մասին»: Նշված հոդվածների վերլուծությունից պարզ է դառնում, որ ՀՀ-ում օտարերկրյա դատական ակտերի ճանաչումը և կատարմանը բույլատրում է միայն, եթե համապատասխան միջազգային պայմանագրով նախատեսված է այդպիսի ճանաչման և կատարման հնարավորությունը: Այդ պայմանագրի համապատասխան հոդվածներով էլ պետք է առաջնորդվեն ՀՀ դատարանները օտարերկրյա դատարանների դատական ակ-

տերը ճանաչելիս և կատարման բույլատրելիս: Համապատասխան միջազգային պայմանագրի առկայությունը՝ որպես օտարերկրյա դատական ակտերի ճանաչման պարտադիր նախապայման, հետխորհրդային պետություններից որդեգրել են նաև ՌԴ-ն¹, Ռուսականը², Տաջիկանը³, սակայն հետխորհրդային պետությունների մեծ մասը՝ Վրաստանը, Բելոռուսը, Ուկրաինան, Ղրղզստանը⁴, Մոլդովան⁵ հրաժարվել են միջազգային պայմանագրի առկայության՝ որպես օտարերկրյա դատական ակտերի ճանաչման պարտադիր պահանջից՝ իրենց օրենսդրություններում ամրագրելով միջազգային պրակտիկայում լայն տարածում ստացած փոխադարձության սկզբունքը:

Ներկայումս գրականության մեջ բազմաթիվ տեսաբանների կողմից արտահայտվում է տեսակետ առ այն, որ ԱՊՀ այն պետություններում, որոնց օրենսդրություններում օտարերկրյա դատական ակտերի ճանաչման համար պարտադիր պայման է հանդիսանում այդպիսի ճանաչումը և կատարումը բույլատրող համապատասխան պայմանագրի առկայությունը, այդպիսի պահանջը պետք է փոխարինվի փախադարձության վերաբերյալ պահանջով, որը ենթադրում է, որ օտարերկրյա պետության դատական ակտը կարող է ճանաչվել և կատարվել հայցվող պետությունում, եթե օտարերկրյա տվյալ պետությունը համապատասխանաբար ճանաչում և կատարում է հայցվող պետության դատարանների դատական ակտերը՝ անկախ այդ պետությունների միջև համապատասխան միջազգային պայմանագրի առկայությունից⁶: Անգամ բելոռուսական իրավաբանական գրականությունում, չնայած այն հանգամանքին, որ Բելոռուսը արդեն իսկ մասնակիորեն հրաժարվել է միջազգային պայմանագրի առկայության պահանջից, նշվում է, որ Բելոռուսիայում միջազգային պայմանագրի բացակայության պայմաններում օտարերկրյա դատական ակտերի կատարման անհնարինության փաստը հանգեցնում է բելոռուսական կողմերի շահերի խախտման, քանի որ բելոռուսական դատարանների որոշումների կատարումն էլ այն պետություններում, որոնք, ինչպես Գերմանիան, պահանջում են փոխադարձության առկայություն, նույնպես դառնում է անհնար⁷: Մ.Մ. Բոգուլավսկին նշում է, որ նման նկատառումներն անհանգստացնում են նաև ԱՊՀ մյուս պետությունների օրենսդիրներին⁸: Ցավոք, ՀՀ իրավաբանա-

կան գրականության մեջ օտարերկրյա դատական ակտերի ճանաչմանը և կատարմանը՝ փոխադարձության սկզբունքի հիման վրա, անդրադարձ չկա: Միայն, մինչև ՀՀ ՔԴՕ-ն ընդունելը, ԵՊՀ քաղաքացիական ամրիոնի հեղինակային կոլեկտիվը առաջարկել էր ՀՀ ՔԴՕ-ում ներառել հոդված, որի համաձայն Հայաստանի Հանրապետությունում օտարերկրյա դատարանների վճիռները պետք է ճանաչվեն և կատարվեն, եթե դա նախատեսված է ՀՀ օրենքներով, միջազգային պայմանագրերով կամ փոխադարձության սկզբունքով, որը, սակայն, ՀՀ ՔԴՕ-ում չներառվեց:

Պարզելու համար, թե արդյո՞ք նպատակահարմար է ՀՀ ՔԴՕ-ում ամրագրել դատական ակտերի ճանաչման փոխադարձության սկզբունքը, անհրաժշտ է անդրադառնալ այս սկզբունքի բովանդակությանը, որա դրական և բացասական կողմերին, ինչպես նաև այն հարցին, թե փոխադարձությունը ՀՀ ՔԴՕ-ում ներառելու հարցին դրական պատասխան տալու դեպքում ինչ մեկնաբանությամբ պետք է այս սկզբունքը ներառվի այն-տեղ:

Օտարերկրյա դատական ակտերի ճանաչումը և կատարումը՝ փոխադարձության հիման վրա, ենթադրում է, որ հայցվող պետությունը օտարերկրյա պետության դատական ակտի ճանաչումը և կատարումը կապում է համապատասխան օտարերկրյա պետությունում սեփական դատական ակտերի ճանաչման և կատարման հնարավորության կամ փաստի հետ: Այս բնորոշումից արդեն իսկ բխում է, որ փոխադարձությունը միանշանակ չի ընկալվում, և տարբեր պետություններ, ամրագրելով փոխադարձության սկզբունքը, որա առկայությունը կապում են տարբեր հանգամանքների հետ:

Այսպես, մի շարք պետություններում, որոնք ամրագրել են փոխադարձության սկզբունքը իրենց օրենսդրություններում, փոխադարձությունը համարվում է առկա, եթե օտարերկրյա պետության դատական պրակտիկայում առկա են հայցվող պետության դատարանների դատական ակտերի ճանաչման և կատարման դեպքեր: Այսինքն՝ այս պետությունների դատարանները օտարերկրյա դատական ակտերի ճանաչման և կատարման միջնորդության բնույթյան յուրաքանչյուր դեպքում պետք է պարզեն՝ գոյություն ունե՞ն արդյոք համապատասխան օտարերկրյա պետությունում սեփա-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

կան դատարանների դատական ակտերի ճանաչման և կատարման դեպքեր: Այսպիսի պետությունների թվին են դասվում, օրինակ, Պերուն⁹, Չինաստանը: Չինաստանում օտարերկրյա դատական ակտը կարող է ճանաչվել միայն այն դեպքում, եթե չինական դատարանների համանման դատական ակտերը կատարվել են համապատասխան օտարերկրյա պետությունում կամ գրյություն ունեն Չինաստանի Ժողովրդական դատարանին ներկայացված ապացույցներ առ այն, որ չինական դատարանի դատական ակտը կճանաչվի այդ պետությունում¹⁰: Պետք է նշել նաև, որ չնայած այն հանգամանքին, որ ՌԴ-ում օտարերկրյա դատական ակտի ճանաչման և կատարման համար միջազգային պայմանագրի առկայությունը պարտադիր պայման է, այնուամենայնիվ, ոռուսական դատական պրակտիկայում առկա են այնպիսի պետությունների դատական ակտերի ճանաչման և կատարման միջնորդության քննության դեպքեր, որոնց հետ ՌԴ-ն իրավական օգնության մասին միջազգային պայմանագրի չի կնքել, և ՌԴ դատարանները, առաջնորդվելով փոխադարձության սկզբունքով, ճանաչել են այդպիսի օտարեկրյա դատական ակտերը¹¹: Սակայն փոխադարձության սկզբունքի կիրառման եզակի դեպքերում ՌԴ դատարանները առաջնորդվել են փոխադարձության սկզբունքի պահպանության վերոնշյալ մեկնաբանությամբ, և որոշ դեպքերում մերժել են օտարերկրյա դատական ակտերի ճանաչումն ու կատարումն այն պատճառաբանությամբ, որ համապատասխան օտարերկրյա պետությունում ոռուսական դատարանների դատական ակտերի ճանաչման դեպքեր չեն գրանցվել¹²:

Իրենց օրենսդրություններում փոխադարձությունը որպես օտարերկրյա դատական ակտերի ճանաչման նախապայման ամրագրած պետությունների մյուս խմբի համար էլ օտարերկրյա պետությունում իրենց դատարանների դատական ակտերի ճանաչման և կատարման դեպքեր չհայտնաբերելով դեռևս հիմք չէ այդ պետության դատարանների դատական ակտերի ճանաչումը և կատարումը մերժելու համար: Փոխադարձության հնարավորությունը այս դեպքում գնահատվում է օտարերկրյա պետության օրենսդրության ուսումնասիրության արդյունքում: Փոխադարձության սկզբունքի առկայությունը նման կերպ են պարզում¹³, Գերմանիայի դատարան-

ները: Այսպես Գերմանիայում փոխադարձության բացակայությունը համարվում է օտարերկրյա դատական ակտերի ճանաչումը և կատարումը մերժելու ինքնուրույն հիմք: Մերժման նման հիմքի բացակայությունը պարզելու համար գերմանական դատարանները օտարերկրյա դատական ակտերի ճանաչման և կատարման միջնորդության քննության յուրաքանչյուր դեպքում ուսումնասիրության են հայցող պետության դատական պրակտիկան՝ պարզելու համար՝ արդյո՞ք այդ պետությունում գրանցվել են գերմանական դատարանների դատական ակտերի ճանաչման և կատարման դեպքեր: Օտարերկրյա պետությունում Գերմանիայի դատական մարմինների որոշումների ճանաչման պրակտիկայի բացակայությունը, սակայն, դեռևս այդ պետության դատարանների դատական ակտերի մերժման անվերապահ հիմք չի հանդիսանում, և գերմանական դատարանները ուսումնասիրության են հայցող պետության օրենսդրությունը՝ պարզելու համար՝ արդյո՞ք այն հնարավորություն տալիս է ճանաչելու և կատարելու գերմանական դատարանների դատական ակտերը: Ընդ որում ուսումնասիրության արդյունքում գերմանական դատարանը համեմատում է գերմանական օրենսդրությունը օտարերկրյա պետության օրենսդրության հետ, և եթե վերջինիս նորմերը համադրելի են Գերմանիայի քաղաքացիական դատավարության օրենսգրքի 328-րդ հոդվածի հետ, որը հենց սահմանում է փոխադարձության սկզբունքը, ապա դա գերմանական տեսակետից ենթադրում է փոխադարձության առկայության երաշխիք՝ «առաջին քայլը» կատարելու պատրաստակամության տեսանկյունից¹⁴:

Փոխադարձությունը որպես օտարերկրյա դատական ակտերի ճանաչման նախապայման ամրագրած պետությունների երրորդ խումբն է (Ուկրաինա¹⁵, Մակեդոնիա¹⁶) փոխադարձության առկայությունը պարզելիս առաջնորդվում է դրա առկայության կանխավարկածով, ըստ որի՝ փոխադարձության առկայությունը ենթադրվում է, եթե չի ապացուցվել հակառակը: Սա օտարերկրյա դատական ակտերի ճանաչման և կատարման ոլորտում փոխադարձության առկայության պահանջի ամենաեղանակավոր դրսւորումն է, որն առավել տարածված է փոխադարձության սկզբունքը որպես օտարերկրյա դատական ակտերի ճանաչման և կատարման նախապայման իրենց օրենսդրություննե-

րում ամրագրած պետություններում:

Բացի այդ, գոյություն ունի փոխադարձության երկու տեսակ՝ լրիվ և մասնակի: Առաջինի դեպքում պետությունը մերժում է օտարերկրյա պետության դատարանի դատական ակտի ճանաչումը, եթե վերջինիս դատական պրակտիկայում գոյություն ունեն իր դատարանի՝ ցանկացած գործով կայացրած դատական ակտերի ճանաչման և կատարման մերժման դեպքեր: Այսպես, եթե այն պետությունում, որտեղ կայացվել է օտարերկրյա դատական ակտը, նախկինում մերժվել են, օրինակ, ալիմենտի բոնագանձման հետ կապված գործով հայցվող պետության դատարանի դատական ակտի ճանաչումը և կատարումը, ապա վերջինս կմերժի տվյալ օտարերկրյա պետության դատարանի կողմից կայացված ցանկացած դատական ակտ՝ լինի դա ալիմենտի բոնագանձման, որդեգրման, փոխառության պայմանագրից բխող պարտավորությունների կատարման, թե այլ գործերի վերաբերյալ: Մասնակի փոխադարձության առկայության դեպքում հայցվող պետության դատարանը կմերժի օտարերկրյա դատական ակտի ճանաչումը, եթե օտարերկրյա պետությունը մերժել է իր դատարանների՝ համանման գործով կայացրած դատական ակտի ճանաչումը և կատարումը: Այսինքն՝ եթե օտարերկրյա պետությունը մերժել է հայցվող պետության դատարանի ալիմենտի բոնագանձման վերաբերյալ գործով դատական ակտի ճանաչումը և կատարումը, ապա դա հիմք է հայցվող պետության համար՝ մերժելու միայն համանման՝ ալիմենտի բոնագանձման վերաբերյալ գործերով օտարերկրյա պետության դատարանների դատական ակտերի ճանաչումը և կատարումը: Համենատական իրավունքում լայնորեն ամրագրված կանոնի համաձայն՝ լրիվ փոխադարձության պահանջ, այսինքն՝ պահանջ, որպեսզի ազգային դատարանների բոլոր տեսակի դատական ակտերը ճանաչվեն և կատարվեն արտերկրում, չի պահանջվում¹⁷: Որպես կանոն՝ փոխադարձության սկզբունքը ամրագրած պետությունների համար բավարար է լինում միայն փոխադարձության մասնակի պահպանում:

Խոսելով փոխադարձության սկզբունքի դրական և բացասական կողմերի մասին՝ առաջին հերթին պետք է նշել, որ ի տարրերություն համապատասխան միջազգային պայմանագրի առկայության պահանջից տնտեսական հարաբերությունների բնագավառում, քանի որ մի շարք պետություններ, և առաջին հերթին Գերմանիան, իրաժարվում էին ճանաչել Բելոռուսի դատարանների դատական ակտերը փոխադարձության բացակայության պատճառով¹⁸:

Գրականության մեջ փոխադարձությունը նաև հիմնավորվում է այն գաղափարով, որ պետությունների փակական օգնության բնագավառում, քանի որ, ինչպես ցույց է տալիս միջազգային պայմանագրի առկայությունը որպես օտարերկրյա դատական ակտերի ճանաչման և կատարման նախապայման իրենց օրենսդրություններում ամրագրած պետությունների փորձը, նման պայմանագրեր կնքվում են սահմանափակ քանակով պետությունների հետ, ինչը հանգեցնում է պետությունների, այսպես կոչված, իրավական մեկուսացման: Բացի այդ, ի տարրերություն փոխադարձության սկզբունքի, որի առկայության դեպքում օտարերկրյա դատական ակտերի ճանաչման և կատարման պայմանները ամրագրվում են ներքին ճյուղային օրենսդրությամբ, և այդ պայմանները պետության օրենսդիր մարմնի կողմից կարող են ցանկացած պահի փոփոխվել միջազգային մասնավոր իրավունքի զարգացմանը զուգընթաց, միջազգային պայմանագրի՝ որպես օտարերկրյա դատական ակտերի ճանաչման նախապայմանի առկայության դեպքում, այս ինստիտուտը կարգավորվում է համապատասխան միջազգային պայմանագրով, իսկ համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելը այդպիսի պայմանագրերում անհամեմատ ավելի բարդ է, և բյուրեղացնում է այս ինստիտուտը կարգավորող օրենսդրությունը, դանդաղեցնում դրա զարգացումը:

Գրականության մեջ ի պաշտպանություն փոխադարձության սկզբունքի անհրաժեշտության՝ նշվում է, որ փոխադարձության սկզբունքի ամրագրումը պետությունը հնարավորություն է տալիս ստիպել այլ պետություններին հարգալից վերաբերմունք դրսուրել իր դատարանների դատական ակտերի նկատմամբ և ճանաչել դրանք: Որպես օրինակ բերվում է Բելոռուսը, որը ստիպված եղավ վերանայել իր օրենսդրությունը և հրաժարվել դատական ակտերի ճանաչման և կատարման համար պարտադիր պայման համարվող միջազգային պայմանագրի առկայության պահանջից տնտեսական հարաբերությունների բնագավառում, քանի որ մի շարք պետություններ, և առաջին հերթին Գերմանիան, իրաժարվում էին ճանաչել Բելոռուսի դատարանների դատական ակտերը փոխադարձության պատճառով¹⁸:

Գրականության մեջ փոխադարձությունը նաև հիմնավորվում է այն գաղափարով, որ պետու-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

թյունը պետք է ազատ լինի էկզեկվատորան մերժելու հնարավորության մեջ այն պետությունների նկատմամբ, ովքեր իրենց հերթին մերժում են նրան¹⁹:

Փոխադարձության սկզբունքի կիրառմանը կողմ արտահայտվող տեսաբան գիտնականները գտնում են նաև, որ փոխադարձության սկզբունքը լավագույնս պաշտպանում է մարդու իրավունքները և օրինական շահերը օտարերկրյա դատական ակտերի ճանաչման և կատարման ոլորտում: Այսպես, S. Ն. Նեշատաևան նշում է, որ օտարերկրյա դատական ակտերով սահմանված քաղաքացիական իրավունքների ճանաչման ոլորտում փոխադարձության բացակայությունը կարող է հանգեցնել պետության կողմից մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում իր պարտավորությունների խախտմանը²⁰: Այս կարծիքի հետ չափազանց դժվար է համաձայնել: Այո՛, օտարերկրյա դատական ակտերը չճանաչելը և կատարման չբույլատրելը առաջին հերթին խախտում է այն անձանց (ֆիզիկական և իրավաբանական) իրավունքներն ու օրինական շահերը, ում նյութական իրավունքների և պարտականությունների վերաբերյալ կայացվել է օտարերկրյա դատական ակտը, իսկ այդ անձինք որևէ մեղք չունեն, որ դատական ակտը կայացնող դատարանի պետության և հայցվող պետության միջև առկա չէ միմյանց դատական ակտերի ճանաչման և կատարման հնարավորություն նախատեսող համապատասխան միջազգային պայմանագիր: Միջազգային պայմանագրի առկայության պահանջի համեմատ փոխադարձության պահանջը զգալիորեն ազատականացնում է օտարերկրյա դատական ակտերի ճանաչման և կատարման ոլորտը, սակայն փոխադարձության սկզբունքի կիրառմամբ էլ խնդիրը չի վերանում: Փոխադարձության դեպքում էլ պետությունը մերժում է օտարերկրյա դատական ակտի ճանաչումը և կատարումը, եթե ակտը կայացնող դատարանի պետությունում չեն ճանաչվում իր դատարանների դատական ակտերի ճանաչման և կատարման հնարավորություն: Այս դեպքում ևս օտարերկրյա դատական ակտի ճանաչումից առաջին հերթին տուժում են մասնավոր անձինք, ովքեր որևէ կապ չունեն պետությունների միջև փոխադարձության սկզբունքի բացակայության հետ:

գամանքը հենց հանդիսանում է փոխադարձության սկզբունքի «ամենաքույլ կողմը», և հենց այս միտքն է ընկած տարբեր պետությունների ներկայացնող բոլոր այն տեսաբան-գիտնականների իիմնավորումներում, ովքեր դեմ են արտահայտվում փոխադարձության սկզբունքի կիրառմանը օտարերկրյա դատական ակտերի ճանաչման և կատարման ոլորտում: Այսպես, գերմանացի իրավագետ Խ. Շակը, խոսելով փոխադարձության մասին, նշում է, որ եթե նույնիսկ փոխադարձության պահանջը չի հակառակ միջազգային իրավունքին, այնուամենայնիվ անարդար է օտարերկրյա քաղաքացիներին դնել դատավարական առումով ոչ շահեկան վիճակում, քանի որ նրանք հազիվ թե կարողանան ազդել օտարերկրյա պետության վարքագծի վրա²¹:

Փոխադարձությանը դեմ արտահայտվող հեղինակների մյուս փաստարկը փոխադարձության առկայության հաստատման բարդությունն է և օտարերկրյա պետությունների դատարանների հետ փոխադարձ վատահության մթնոլորտի ձևավորումը, եթե փոխադարձություն պահանջող երկու պետություններից յուրաքանչյուրը կարող է սպասել մյուսի կողմից առաջին քայլին, որն էլ իր հերթին կարող է բերել այսպես կոչված «փակ շրջանի»²²: Այս նկատառմանը կարելի է համաձայնել միայն մասամբ, քանի որ, իմշապես արդեն նշվել է, փոխադարձության մեկնաբանությունը տարբեր պետություններում տարբեր է, և «փակ շրջանը» պետություններին սպասում է միայն այն ժամանակ, եթե նրանք որդեգրում են փոխադարձության առկայության մեկնաբանման այն տարբերակը, ըստ որի՝ փոխադարձությունը առկա է, եթե դատական ակտը կայացրած պետության դատական պրակտիկայում գոյություն ունեն ճանաչող պետության դատարանների դատական ակտերի ճանաչման դեպքեր: Սակայն, եթե պետությունը առաջնորդվում է փոխադարձության կանխավարկածով, ըստ որի՝ փոխադարձությունը առկա է, քանի դեռ չի ապացուցվել հակառակը՝ չեն հայտնաբերվել ճանաչող պետության դատարանների դատական ակտերի՝ հայցող պետությունում ճանաչումը և կատարումը մերժելու դեպքեր, «փակ շրջանի» առաջացման վտանգը վերանում է:

Չնայած փոխադարձության սկզբունքի միշտ բերություններին՝ գտնում ենք, որ ՀՀ օրենսդրության մեջ դրա ամրագրումը, առավել քան նպատակահարմար է հետևյալ նկատառումներով:

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Ակնհայտ է, որ ի տարրերություն ՀՀ ներպետական օրենսդրությունում ներկայումս ամրագրված օտարերկրյա դատական ակտերի ճանաչման և կատարման հնարավորություն նախատեսող միջազգային պայամանագրի առկայության պահանջի՝ ՀՀ օրենսդրությունում օտարերկրյա դատական ակտերի ճանաչման և կատարման ոլորտում փոխադարձության սկզբունքի ամրագրումը կրերի այս ոլորտի անհամեմատ ազատականացման, ինչն անհրաժեշտ է ՀՀ-ն իրավական մեկուսացումից դուրս բերելու համար. ինչպես արդեն նշել ենք, Հայաստանի Հանրապետությունը մինչ այժմ դատական ակտերի ճանաչման և կատարման հնարավորություն և կարգ նախատեսող իրավական համագործակցության մասին միջազգային պայմանագրեր կնքել է ընդամենը տասնութ պետությունների հետ, որոնցից տասնմեկը Մինսկի և Քիշնևյան կոնվենցիաների մասնակից պետություններն են (նրանցից Աղրբեջանի հետ ՀՀ-ն չունի դիվանագիտական հարաբերություններ), ևս յոթը արաբական և արևելյան Եվրոպայի պետություններն են: Ակնհայտ է, որ ներկայում ՀՀ քաղաքացիական և առավել ևս առևտրային շրջանառությունը չի սահմանափակվում հիշյալ երկրների աշխարհագրությամբ: Միայն այն հաճամանքը, որ ՀՀ-ն չունի դատական ակտերի փոխադարձ ճանաչում և կատարում նախատեսող իրավական օգնության պայմանագրեր այնպիսի պետությունների հետ, ինչպիսիք են Ֆրանսիան, արևմտյան Եվրոպայի մյուս պետությունները, ԱՄՆ-ը, Լատինական Ամերիկայի պետությունները և այլն, որտեղ բնակվում են ՀՀ քաղմարիկ քաղաքացիներ, և որոնց հետ ՀՀ քաղաքացիական և առևտրային շրջանառությունը գտնվում է քավականին քարձր մակարդակի վրա, արդեն իսկ քավարար փաստարկ է այս ոլորտում միջազգային պայմանագրի պարտադիր պահանջից իրաժարվելու համար: Բացի այդ՝ փոխադարձության սկզբունքի ամրագրումը, հետևաբար և այս բնագավառում ՀՀ օրենսդրության ազատականացումը կմեծացնի ՀՀ տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ վստահությունը, կամրապնդի վերջիններիս դիրքերը համաշխարհային տնտեսությունում, կյարանի ՀՀ տնտեսության զարգացմանը (օտարերկրյա սուբյեկտները, մտնելով տնտեսական համագործակցության մեջ ՀՀ տնտեսվարող սուբյեկտների հետ, վստահ կլինեն, որ ցանկացած խնդրի

առաջացման դեպքում նրանց իրավունքները և օրինական շահերը՝ այդ բվում և օտարերկրյա դատական ակտով ամրագրված, առավելագույնս պաշտպանված կլինեն ՀՀ-ում):

Հարց կարող է ծագել՝ ինչո՞ւ փոխադարձություն: Ավելի նպատակահարմար չէ՝ արդյոք իրաժարվել և՛ համապատասխան միջազգային պայմանագրի առկայության պահանջից, և՛ հաշվի առնելով փոխադարձության սկզբունքի կիրառման հետ կապված դժվարությունները և դրա թերությունները՝ նաև փոխադարձությունից, իսկ օտարերկրյա դատական ակտերը ճանաչել առանց նման նախապայմանների՝ միակ նախապայման սահմանելով օտարերկրյա դատական ակտի՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանվելիք պահանջներին բավարարելը: Կարծում ենք՝ ոչ: Այնպիսի պետությունում, ինչպիսին Հայաստանի Հանրապետությունն է, որտեղ անկախության առաջին տարիներից, իսկ մինչ այդ նաև Կայսերական Ռուսաստանի, ապա նաև ԽՍՀՄ կազմում, օտարերկրյա դատական ակտերի ճանաչման և կատարման իմաստի առաջնային կարգավորող օրենսդրությունը կրել է բավականին փակ բնույթ՝ բույլատերով միայն այն պետությունների դատական ակտերի ճանաչումը և կատարումը, որոնց հետ Կայսերական Ռուսաստանը, ԽՍՀՄ-ը ապա նաև ՀՀ-ն ունեցել են համապատասխան միջազգային պայմանագրեր, որտեղ դեռևս ներպետական դատարանների մեջ մասը ամբողջությամբ չի ընկալում այս ինստիտուտի էռությունը՝ շտարբերելով այն դատական հանձնարարությունների ինստիտուտից²³, որի օրենսդրության մեջ դեռևս առկա են այնպիսի օրենսդրական բացեր, ինչպիսին է ՀՀ դատարանների՝ բացառիկ միջազգային իրավասությանը պատկանող գործերի շրջանակի վերաբերյալ նորմերի բացակայությունը, ամբողջությամբ հրաժարվել օտարերկրյա դատական ակտերի ճանաչման պայմաններից, կարծում ենք, ոչ միայն նպատակահարմար չէ, այլ նաև ոչ իրատեսական: Ինչպես իրավացիորեն նշում է Ա. Ի. Մուրանովը, միջազգային պայմանագրի անհրաժեշտության սկզբունքից հրաժարումը պետք է ինչ-որ կերպ փոխհատուցվի: Փոխադարձության սկզբունքը դրա համար առավել քան լավ տարրերակ է²⁴: Միևնույն ժամանակ մենք գտնում ենք, որ ՀՀ-ում փոխադարձության սկզբունքը պետք է ամրագրվի այն մեկնաբանմամբ, ըստ որի փոխադարձությունն առկա է, եթե չի ապացուցվել հակառակը

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

(փոխադարձության առկայության կանխավարկած): Սա, ինչպես արդեն նշվել է, փոխադարձության մեկնաբանման ամենամեղմ տարրերակն է, որը գորեք չեղոքացնում է փոխադարձության սկզբունքի՝ գրականության մեջ բարձրածայնվող բոլոր բերությունները: Առաջին հերթին վերանում է փոխադարձության առկայության պարզման հետ կապված հնարավոր բարդությունների առաջացման վտանգը, քանի որ հստակորեն սահմանվում է, որ փոխադարձության բացակայության ապացույց կարող է հանդիսանալ միայն օտարերկրյա պետությունում ՀՀ դատարանի դատական ակտի ճանաչման և կատարման մերժման դեպքերի հայտանքներում: Ընդ որում ՀՀ դատարանների դատական ակտերի ճանաչումը և կատարումը մերժելու պատճառը պետք է հանդիսացած լինի ոչ թե դատական ակտի՝ ճանաչող պետության օրենսդրության պահանջներին չհամապատասխանելը, այլ դատական ակտը ՀՀ դատարանների կողմից կայացված լինելու հանգամանքը՝ ճանաչող պետության և ՀՀ միջև միջազգային պայմանագրի, դիվանագիտական հարաբերությունների բացակայության կամ այլ պատճառներով:

Միևնույն ժամանակ փոխադարձության սկզբունքի վերոնշյալ մեկնաբանմամբ ամրագրումը նաև պատասխանում է այն հարցին, թե ՀՀ-ում որ մարմնի վրա պետք է դրվի օտարերկրյա պետությունում փախադարձության առկայությունը պարզելու պարտավորությունը: Նման հարց կարող է ծագել այն պատճառով, որ փոխադարձության սկզբունքը ամրագրած պետություններում փոխադարձության առկայությունը պարզելու լիազորությունը դրված է տարրեր մարմինների վրա: Այսպես, Գերմանիայում փոխադարձության առկայության գնահատմամբ ավանդաբար զբաղվում են դատական մարմինները²⁵, իսկ, օրինակ, Հունգարիայում, ինչպես նաև Չեխոսլովակիայի նախկին Հանրապետությունում, փոխադարձությունը հաստատվում էր արդարադատության նախարարության կողմից²⁶: Քանի որ, մեր կարծիքով, ՀՀ-ում պետք է գործի փոխադարձության առկայության կանխավարկածի սկզբունքը, փոխադարձության բացակայությունը պետք է ապացուցվի դատարանում, և դա պետք է ապացուիցի դատավարության այն կողմը, ով ճգոտում է հասնել ՀՀ դատարանում օտարերկրյա դատական ակտի ճանաչման և կատարման մերժմանը: Դա ամբողջությամբ կհամա-

պատասխանի նաև ՀՀ-ում գործող մրցակցային դատավարության պահանջին, որտեղ յուրաքանչյուր կողմ իրավունք ունի ներկայացնելու իր ապացույցները: Միևնույն ժամանակ կարծում ենք, որ նպատակահարմար կլինի ՀՀ արդարադատության նախարարության համապատասխան ստորաբաժնմանը²⁷ վերապահել գործառույթ՝ վարելու այն պետությունների ցանկը, որոնք չեն պահպանում Հայաստանի Հանրապետության հետ օստարերկրյա դատական ակտերի ճանաչման և կատարման ոլորտում փոխադարձության սկզբունքը, և որոնց դատարանների դատական արակտիկայում առկա են ՀՀ դատարանների դատական ակտերի ճանաչման և կատարման միջնորդության մերժման դեպքեր, որը հնարավորություն կտա ներպետական դատարաններին օտարերկրյա պետության դատարանների դատական ակտերի ճանաչման և կատարման միջնորդությունը քննելիս անհրաժեշտության դեպքում՝ կողմից միջնորդությամբ կամ սեփական նախաձեռնությամբ, հարցում կատարել ՀՀ արդարադատության նախարարությանը՝ տվյալ պետությունում ՀՀ դատարանների դատական ակտերի նկատմամբ փոխադարձության սկզբունքի պահպանության հարցը պարզելու համար:

Կարծում ենք նաև, որ ՀՀ-ում փոխադարձության ամրագրումից հետո ներպետական դատարանները պետք է առաջնորդվեն մասնակի փոխադարձության պահպանման պահանջով: Այսինքն՝ ՀՀ դատարանները իրավունք կունենան մերժել օտարերկրյա դատական ակտի ճանաչումը և կատարումը, եթե գործով ապացուցվում է, որ օտարերկրյա պետության դատական պրակտիկայում առկա են ՀՀ դատարանների համանման գործերով կայացված դատական ակտերի ճանաչման և կատարման մերժման դեպքեր:

Միևնույն ժամանակ մենք ամբողջովին համաձայն ենք Դ.Վ. Լիտվինսկու հետ, ով նշում է, որ պետությունների միջև այս կամ այն հարցում դիվանագիտական հարաբերությունների բացակայությունը չի գրկում այդ պետությունների քաղաքացիներին Մարդու իրավունքների և իիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայով ամրագրված այնպիսի իրավունքների պաշտպանությունից, ինչպիսին է, առաջին հերթին, Կոնվենցիայի 8-րդ հոդվածով նախատեսված անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունքը, որը կարող է խախտվել ան-

ձանց իրավական վիճակ սահմանող դատական ակտերը շճանաչելով: Այդպիսի դատական ակտեր կարող են լինել ամուսնալուծության վերաբերյալ վճիռները, որոնց շճանաչումը անձանց զրկում է կրկին ամուսնալու հնարավորությունից, անձի անվան փոփոխության վերաբերյալ դատական ակտերը և այլն²⁸: Այդ իսկ պատճառով գտնում ենք, որ Հայաստանի Հանրապետությունում օտարերկրյա քաղաքացիների իրավական վիճակի (անձին մահացած հայտարարելու, կամ անհայտ բացակայող ճանաչելու, անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչելու, օտարերկրյա քաղաքացու որդեգրման, հայրության ճանաչման և այլն), ինչպես նաև ամուսնալուծությունների կամ ամուսնությունը անվավեր ճանաչելու վերաբերյալ դատական ակտերը պետք է ճանաչվեն անկախ միջազգային պայմանագրի և փոխադարձության առկայությունից:

Անհրաժեշտ է նշել, որ ՀՀ դատական պրակտիկայում առկա են օտարերկրյա դատական ակտերի ճանաչման և կատարման դեպքեր միջազգային պայմանագրի բացակայության պայմաններում: Ընդ որում օտարերկրյա դատական ակտերը ճանաչելու և կատարման թույլատրելու որոշումների հիմքում դրվել է հենց փոխադարձության սկզբունքը: Այսպես, ՀՀ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ասյանի դատարանը, քննության առնելով ԱՍՆ Կալիֆորնիա նահանգի Լոս Անջելես տեղամասի Վերին դատարանի կողմից ըստ հայցի Ա. Գ.-ի ընդդեմ Հ.Դ.-ի ամուսնալուծության և ընդհանուր համատեղ սեփականության բաժանման պահանջմերի մասին գործով 26.04.2011թ. կայացված վճիռը ՀՀ-ում գտնվող գույքի նկատմամբ Հ.Դ.-ի իրավունքի ճանաչման մասով ճանաչելու և կատարումը թույլատերու մասին միջնորդությունը (դատական ակտում նշված է դատական հանձնարարություն, սակայն մենք արդեն նշել ենք, որ օտարերկրյա դատական ակտերի ճանաչումը և կատարումը որևէ դեպքում չի կարող դիտվել որպես դատական հանձնարարության կատարում), որոշել է բավարարել այն: Չնայած ՀՀ-ի և ԱՍՆ-ի միջև գոյություն չունի դատական ակտի ճանաչման վերաբերյալ պայմանագրի, դատարանը, առաջնորդվելով «ՀՀ կառավարության և ԱՍՆ-ի կառավարության միջև ներդրումների խրախուսման մասին» պայմանագրով, որի 6-րդ հոդվածը

կարգավորում է փոխադարձության ձգտող երկու կառավարությունների հարաբերությունները և սկզբունքները, գտել է, որ փոխադարձության սկզբունքը իրավունքի անալոգիայի ուժով ենթակա է պարտադիր կիրառման դատական ակտերի ճանաչման հարաբերությունների նկատմամբ: Բացի այդ՝ ԱՍՆ-ի դատարանի վճիռի ճանաչման միջնորդությունը քննելիս դատարանը օրենքի անալոգիայի ուժով առաջնորդվել է: «Օտարերկրյա արքիտրաֆային որոշումների ճանաչման և կատարման մասին» 1958թ. Նյու-Յորքի կոնվենցիայով և ի վերջո դրսևորելով բարի կամք՝ «bona fide», որոշել է բավարարել այն³⁰: ՀՀ ընդհանուր իրավասության դատարանի որոշումը համարելով դրական քայլ օտարերկրյա դատական ակտերի ճանաչման և կատարման ոլորտում՝ այնուամենայնիվ պետք է նշենք, որ դատարանի հիմնավորումները միջազգային պայմանագրի բացակայության պայմաններում ԱՍՆ-ի դատական ակտը ճանաչելու վերաբերյալ մեղմ ասած, վիճելի են: Եթե անգամ ընդունենք, որ դատարանը ճիշտ է վարվել իրավական համագործակցության հետ որևէ առնչություն չունեցող ներդրումների մասին պայմանագրում ամրագրաված դրույթը՝ ԱՍՆ և ՀՀ կառավարությունների՝ փոխադարձության ձգտելու մասին իրավական համագործակցության բնագավառում ընդհանուր սկզբունք ճանաչելով և այդ սկզբունքը՝ իրավունքի անալոգիայի ուժով շնայած այս դեպքում ևս կարծում ենք, որ նման քայլի իրավացիության դեմ հակափաստարկներն ավելի շատ են), ապա Նյու-Յորքի կոնվենցիայի դրույթները կիրառելը օրենքի անալոգիայի ուժով՝ ԱՍՆ դատարանի դատական ակտի ճանաչման և կատարման հարաբերությունները կարգավորելու համար որևէ բացատրություն ունենալ չի կարող: Օրենքի անալոգիան կամ համանմանությունը չկարգավորված հարաբերությունների նկատմամբ նաև նախօրինակ (ընդգծումը հեղինակի կողմից - Պ.Ձ.) հարաբերությունները կարգավորող օրենքի նորմի կիրառումն է³¹: Նյույորքյան կոնվենցիան կարգավորում է միայն արքիտրաֆային դատարանների դատական ակտերի ճանաչման և կատարման հետ կապված իրավահարարերությունները, իսկ արքիտրաֆային կարգով իրավունքների պաշտպանության դատական ձևի մեջ չմտնող, դրանից տարբերվող սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության դատական ձևի մեջ չմտնող, դրանից տարբերվող սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության ինք-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

նուրույն ձև է³²: Հետևաբար նյույորքյան կոնվենցիան չի կարգավորում օտարերկրյա դատական ակտերի ճանաչման և կատարման իրավահարարերություններին համանման իրավահարարերություններ, և օրենքի անալոգիայի ուժով այս Կոնվենցիան կիրառելը օտարերկրյա դատական ակտերի ճանաչմանը և կատարմանը վերաբերող իրավահարարերությունները կարգավորելու համար անթույլատրելի է:

Միջազգային պայմանագրի բացակայության պայմաններում օտարերկրյա դատական ակտի ճանաչման և կատարման թույլատրելու վերաբերյալ վերոնշյալ որոշումը, որտեղ օրենքի անալոգիայի ուժով կիրառվել է փոխադարձությունը, միակը չէ ՀՀ դատական պրակտիկայում: Նույն հիմնավորումներով ՀՀ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը ճանաչել է նաև Ֆրանսիայի Սեն Նազերի Բարձրագույն ատյանի դատարանի 28.03.2011թ. վճիռը: Այս պետության հետ ՀՀ-ն ևս չունի դատական ակտերի ճանաչման վերաբերյալ միջազգային պայմանագիր, և դատարանը կրկին իրավունքի անալոգիայի ուժով կիրառել է փոխադարձություն նախատեսող՝ 31.05.1995թ. «Հայաստանի Հանրապետության և Ֆրանսիայի Հանրապետության միջև համաձայնության, բարեկամության և համագործակցության մասին» պայմանագրով և նյույորքյան կոնվենցիան՝ օրենքի անալոգիայի ուժով՝³³: Հետագայում ՀՀ դատական պրակտիկայում նմանօրինակ, մեղմ ասած, ոչ միանշանակ դատական որոշումներից խուսափելու համար ևս անհրաժեշտ է փոխադարձության սկզբունքն օրենսդրորեն ամրագրել ՀՀ-ում:

Այսպիսով, կարծում ենք, նպատակահարմար է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում օտարերկրյա դատական ակտերի ճանաչման և կատարման ինստիտուտը կարգավորող նորմերում ամրագրել փոխադարձության սկզբունքը: Ընդ որում, մեր կողմից առաջարկվող մեկնարանությամբ փոխադարձության սկզբունքի ամրագրումը ՀՀ օրենսդրությունում գրեթե ամրողությամբ ազտականացնում է օտարերկրյա դատական ակտերի ճանաչման և կատարման ինստիտուտը Հայաստանի Հանրապետությունում: Սինեույն ժամանակ օտարերկրյա դատական ակտերի ճանաչման և կա-

տարման ոլորտում առանց օրենսդրական փոփոխությունների՝ մասնավորապես օտարերկրյա դատական ակտերի ճանաչման և կատարման ինստիտուտի մանրամասն կարգավորման, դրա ազտականացումը հղի կարող է լինել բազմաթիվ խնդիրներով և փոանգներով: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է ՀՀ օրենսդրությունում օտարերկրյա դատական ակտերի ճանաչման և կատարման ոլորտում փոխադարձության սկզբունքի ամրագրման հետ միաժամանակ հստակորեն ամրագրել այն պահանջները, որոնց պետք է համապատասխան օտարերկրյա դատական ակտը, օտարերկրյա դատական ակտերի ճանաչումը և կատարումը մերժելու հիմքերի սպառիչ ցանկը, այն գործերի շրջանակը, որոնք քննելու և լուծելու բացարիկ իրավասությունը պատկանում է ՀՀ դատարաններին և այլն:

Փոխադարձության սկզբունքի ամրագրման հետ միաժամանակ միջազգային պայմանագրի առկայության պահանջից, կարծում ենք, նույնական պետք չէ իրավաբարվել: Ինչպես իրավացիորեն նշվում է գրականության մեջ, փոխադարձության առկայության ամենավստահելի ապացույցը միջազգային պայմանագրի առկայությունն է³⁴: Հետևաբար Հայաստանի Հանրապետությունը պետք է շարունակի իրավական օգնության մասին միջազգային երկկողմ պայմանագրեր կնքելու, ինչպես նաև բազմակողմ կոնվենցիաներին միանալու ուղղությամբ աշխատանքները:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարող ենք նշել, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում միջազգային պայմանագրի առկայության իմպերատիվ պահանջը պետք է փոխարինվի և լրացվի փոխադարձության առկայութան պահանջով: Իր հերթին փոխադարձության պահանջն է օրենսդրություն պետք է ստանա «ամենամեղմ» ձևակերպումը, ըստ որի փոխադարձությունն առկա է, եթե չի ապացուցվել հակառակը: Բացի այդ՝ ՀՀ-ում պետք է կիրառվի մասմակի փոխադարձության սկզբունքը, ըստ որի՝ օտարերկրյա դատական ակտը ճանաչելու համար բավարար է, որ համանման գործով ՀՀ դատարանի դատական ակտի ճանաչումը և կատարումը մերժելու դեպք հայցող պետության դատական պրակտիկայում առկա չլինի: Բացի այդ՝ անձի իրավական վիճակի վերաբերյալ գործերով փոխադարձության առկայություն ևս չպետք է պահանջվի:

- ¹ Տե՛ս ՈՒ 14.11.2002թ. քաղաքացիական դատավարության օրենսգրքի 409-րդ հոդվածի 1-ին կետ:
<http://www.consultant.ru/popular/gpkrf/>
- ² Տե՛ս Ուօքրենստանի Հանրապետության 30.08.1997թ. քաղաքացիական դատավարության օրենսգրքի 391-րդ հոդվածը: http://fmc.uz/legisl.php?id=k_grajd_pr_42
- ³ Տե՛ս Տաջիկստանի Հանրապետության 05.01.2008թ. քաղաքացիական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածը: http://base.spinform.ru/show_doc.fwx?rgn=21129
- ⁴ Տե՛ս Ղրղզստանի Հանրապետության 24.11.1999թ. քաղաքացիական դատավարության օրենսգրքի 380-րդ հոդվածի 1-ին կետը: http://online.adviser.kg/Document/?link_id=1000870519
- ⁵ Տե՛ս Մոլդովայի Հանրապետության 30.05.2003թ. քաղաքացիական դատավարության օրենսգրքի 467-րդ հոդվածի 1-ին կետը: http://base.spinform.ru/show_doc.fwx?rgn=3837
- ⁶ Տե՛ս Կузнецов Е.Н. Исполнительное производство Франции: Диссертация на соискание ученой степени кандидата юридических наук, Екатеринбург, 2004, С. 23-24.
- ⁷ Տե՛ս Տոլочко О. Рассмотрение судами гражданских дел с иностранным элементом // Судовы веснік, Минск, 1998, N 3.
- ⁸ Տե՛ս СНГ: реформа гражданского процессуального права. Материалы международной конференции, под ред. Богуславского М.М. и Трунка А. (Հոդվածի հեղինակն է Ս.Ս. Բոգուսլավսկին). Москва, «Городец», 2002, С. 174.
- ⁹ Տե՛ս Լитвинский Д.В. Вопросы признания и исполнения решений судов иностранных государств (на основе анализа права Франции и России): Дисс. ... канд. юрид. наук, Санкт-Петербург, 2003, С. 186.
- ¹⁰ Տե՛ս Enforcement of Foreign Judgements Worldwide, Editors C. Platto, W.G. Horton, London, Boston, Graham & Trotman, 1993, էջ 3:
- ¹¹ ՈՒ դատական պրակտիկայում փոխադարձության հիման վրա օտարերկրյա դատական ակտերի ճանաչման առաջին որոշումը կայացվել է Մոսկվյան շրջանի Ֆեդերատիվ արքիտրաֆային դատարանի կողմից 02.03.2006թ., որտեղ դատարանը հանգել էր եզրակացության, որ Անգլիայի և Ուելսի պետական դատարանի որոշումը անհրաժեշտ է ճանաչել և կատարնան բույլատրել՝ անկախ միջազգային պայմանագրի առկայության հանգամանքից: Տե՛ս Վանеев А., Решения иностранных судов в России: Признание и приведение в исполнение. Корпоративный Юрист, N 3, 2007, С. 40.
- ¹² Տե՛ս Зайцев Р. В. Признание и приведение в исполнение в России иностранных судебных актов. Москва, “Волтерс Клювер”, 2007, С. 147.
- ¹³ Տե՛ս Միջազգային մասնավոր իրավունքի մասին Թուրքիայի օրենքի 38-րդ հոդվածը: Հյումն լուս՝ Международное частное право, учебник, 3-е изд-е, отв. Ред. Марышева Н.И. “Волтерс Клювер”, Москва, 2011, С. 820:
- ¹⁴ Տե՛ս Конев Д. В. Признание и приведение в исполнение иностранных судебных актов по гражданским и торговым делам в Федеративной Республике Германия: сравнительно-правовой анализ. Дисс. ... канд. юрид. наук, Екатеринбург – 2008, С. 169.
- ¹⁵ Տե՛ս Ուկրաինայի 18.03.2004թ. քաղաքացիական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածը:
<http://meget.kiev.ua/kodeks/gpk/glava-8-1/>
- ¹⁶ Տե՛ս Бенdevskij T. Международное частное право: Учебник/ Перевод с македонского Клейн С.Ю. Отв. ред. Суханов Е.А. Москва, Статут, 2005, С. 392.
- ¹⁷ Տե՛ս Լитвинский Д.В. Вопросы признания и исполнения решений судов иностранных государств (на основе анализа права Франции и России): Дисс. ... канд. юрид. наук, Санкт-Петербург, 2003, С. 193.
- ¹⁸ Տե՛ս Լитвинский Д.В. Вопросы признания и исполнения решений судов иностранных государств (на основе анализа права Франции и России): Дисс. ... канд. юрид. наук, Санкт-Петербург, 2003, С. 186.
- ¹⁹ Տե՛ս Juliet de la Morandiere. Travaux de la Commission de reforme du Code civil (annee 1949-1950), էջ 771: Հյումն լուս՝ Լитвинский Д.В. Вопросы признания и исполнения решений судов иностранных государств (на основе анализа права Франции и России): Дисс. ... канд. юрид. наук, Санкт-Петербург, 2003, С. 198.
- ²⁰ Տե՛ս Нешатаева Т.Н. Суд и общепризнанные принципы и нормы международного частного права. /Нешатаева Т.Н. // Вестник Высшего Арбитражного Суда РФ, 2004, N 3, С. 130-131.
- ²¹ Տե՛ս Շակ Խ. Международное гражданское процессуальное право. Уч.: Перевод с немецкого. Москва, Изд. “БЕК”, 2001, С. 16.
- ²² Տե՛ս, օրինակ, Կանашевский В. А. Международное частное право. Учебник, Изд. 2-е, Москва, “Международные отношения”, 2009, С. 645-646; Շակ Խ. Международное гражданское процессуальное право. Уч.: Перевод с немецкого. Москва, Изд. “БЕК”, 2001, С. 425, Сорокина С.С. Признание и приведение в исполнение решений иностранных судов на территории Российской Федерации. Дисс. ... канд. юрид. наук, Москва, 2005, С. 26:

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

²³ Տե՛ս առևան աշխատության 1-ին գլուխ 3-րդ պարագաֆը:

²⁴ Տե՛ս Մуранов А.И. Международный договор и взаимность как основания приведения в исполнение в России иностранных судебных решений. Москва, 2003, С. 64-65.

²⁵ Տե՛ս Լитвинский Д.В. Вопросы признания и исполнения решений судов иностранных государств (на основе анализа права Франции и России): Дисс. ... канд. юрид. наук, Санкт-Петербург, 2003, С. 194.

²⁶ Տե՛ս Լունց Л.А. Курс международного частного права: В 3-х т. Москва, "Спарк", 2002, С. 913.

²⁷ ՀՀ արդարադատության նախարարությունում օտարերկրյա դատական ակտերի ճանաչման և կատարման հարցերով գրաղում է՝ միջազգային իրավական հարաբերությունների վարչության դատական հանձնարարությունների բաժինը: <http://moj.am/structures/view/structure/1>

²⁸ Լитвинский Д.В. Вопросы признания и исполнения решений судов иностранных государств (на основе анализа права Франции и России): Дисс. ... канд. юрид. наук, Санкт-Петербург, 2003, С. 204.

²⁹ Պետք է նշել, որ ՀՀ ընտանեկան օրենսգիրքը նախատեսում է օտարերկրյա պետություններում կատարված օտարերկրյա քաղաքացիների միջև, ՀՀ քաղաքացիների և օտարերկրյա քաղաքացիների կամ քաղաքացիություն չունեցող անձանց միջև կատարված ամուսնալուծությունները ճանաչելու հնարավորություն՝ առանց միջազգային պայմանագրի կամ փոխադարձության առկայության պայմանի: Մասնավորապես ՀՀ ընտանեկան օրենսգրքի 145-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն. «ՀՀ քաղաքացիների միջև կամ ՀՀ քաղաքացիների և օտարերկրյա քաղաքացիների կամ քաղաքացիություն չունեցող անձանց միջև ամուսնալուծությունը, որը կատարվել է ՀՀ տարածքից դուրս՝ պահպանելով այն պետության օրենսդրությունը, որի տարածքում դրանք կնքվել են, ՀՀ-ում վավեր են հյուպատոսական օրինականացման առկայության դեպքում»: Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն. «Օտարերկրյա քաղաքացիների միջև ամուսնալուծությունը, որը կատարվել է ՀՀ տարածքից դուրս՝ պահպանելով այն պետության օրենսդրությունը, որի տարածքում դրանք կնքվել են, ՀՀ-ում վավեր են հյուպատոսական օրինականացման առկայության դեպքում»: Նշված հոդվածի բովանդակությունից պարզ չի դառնում՝ արյոյք այն վերաբերում է նաև ամուսնալուծությունների վերաբերյալ օտարերկրյա դատական ակտերի՝ ՀՀ-ում ճանաչմանը, թե ոչ, սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ նշված հոդվածում խոսվում է հյուպատոսական օրինականացման անհրաժեշտության մասին, ամենայն հավանականությամբ այն վերաբերում է միայն ոչ դատական ձևով կատարված ամուսնալուծությունների վերաբերյալ օտարերկրյա պետության ոչ դատական մարմինների ակտերը ՀՀ-ում ճանաչելուն: Բայց հյուպատոսական վավերացումից ԸՕ 145-րդ հոդվածը պահանջում է նաև, որ ամուսնալուծությունները, անկախ նրանից, թե որտեղ են կատարվել, կատարված լինեն այն պետության օրենքներին համապատասխան, որտեղ կնքվել են:

³⁰ Տե՛ս ՀՀ Երևան քաղաքի կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 12.10.2011թ. որոշումը ԱՍՆ Կայիփորնիա նահանգի Լու Անջելես տեղամասի Վերին դատարանի կողմից 26.04.2011թ. կայացված վճիռը ՀՀ-ում ճանաչելու և դրա կատարումը թույլատերու մասին:

³¹ Տե՛ս Ներսեսյան Վ.Ս. Իրավունքի և պետության տեսություն, Երևան, Նախիք, 2001, էջ 251:

³² Տե՛ս Հովհաննեսյան Վ. Վ., Առևտրային արքիտրամբը Հայաստանի Հանրապետությունում, ԵՊՀ հրատարակչություն, Երևան, 2010, էջ 9:

³³ Տե՛ս ՀՀ Երևան քաղաքի կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 23.01.2012թ. որոշումը Ֆրանսիայի Սեն Նազերի Բարձրագույն ատյանի դատարանի կողմից 28.03.2011թ. կայացված վճիռը ՀՀ-ում ճանաչելու և դրա կատարումը թույլատերու մասին:

³⁴ Տե՛ս Լитвинский Д.В. Вопросы признания и исполнения решений судов иностранных государств (на основе анализа права Франции и России): Дисс. ... канд. юрид. наук, Санкт-Петербург, 2003, С. 193-194.

РЕЗЮМЕ

Наличие взаимности как предпосылка для признания и исполнения иностранных судебных актов в РА

Эта статья посвящена признанию и исполнению иностранных судебных актов по гражданским делам в Республике Армения. Институт признания и исполнения иностранных судебных актов является одним из самых сложных сфер гражданского процессуального права. В наши дни, в условиях глобализации, одним из самых важных направлений развития национального законодательства, которое призвано активизировать международные отношения Армении с зарубежными странами, является улучшение механизмов защиты прав человека, права, которые уже подтверждены иностранными судебными актами. Несмотря на это, в

национальном законодательстве Армении, в частности в Гражданском процессуальном кодексе РА, институт признания и исполнения иностранных судебных актов регулируется в недостаточной степени.

В настоящей статье автор говорит о принципе взаимности как о предпосылке признания и исполнения иностранных судебных актов в Армении. Несмотря на то, что согласно ГПК РА, единственной предпосылкой для признания и исполнения иностранных судебных актов является наличие многостороннего договора о правовой помощи, в котором участвует Армения или двустороннего договора о правовой помощи между РА и другим государством, которые предусматривают возможность признания и исполнения судебных решений, автор предлагает к этой предпосылке добавить также условие взаимности, которое позволит национальным судам Армении признать и исполнять судебные решения таких государств, с которыми у Армении нет соответствующего договора, но которые в свою очередь признают и исполняют судебные акты армянских судов. Предусмотрение такой предпосылки в ГПК РА позволит либерализировать институт признания и исполнения иностранных судебных актов в Армении, что в свою очередь позволит Армении выйти из правовой изоляции и активизировать международные отношения с другими странами. В то же время, автор предлагает усилить критерии в ГПК РА, которым должен соответствовать иностранный судебный акт для признания и исполнения в Армении.

SUMMARY

The Existence of Reciprocity as a Precondition for recognition and enforcement of foreign judgements in RA

This article is dedicated to the recognition and enforcement of foreign judgements in civil matters in the Republic of Armenia. The institute of recognition and enforcement of foreign judgements is one of the most difficult spheres of the civil procedure law. Nowadays in the condition of globalization, one of the most important directions or courses of the development of national legislation, which is called to promote Armenia's international relationships with foreign countries, is the improvement of the mechanism of human rights protection, which are already confirmed by foreign judgements. Despite of this in the national legislation of Armenia, particularly in the Civil Procedure Code of RA, the institute of the recognition and enforcement of foreign judgements is regulated not properly.

In this article the author speaks about the principle of reciprocity as a precondition for recognizing and enforcing foreign judgements in Armenia. Though in the CPC of RA the only precondition for recognition and enforcement of foreign judgements is the existence of a multilateral agreement on legal assistance in which participates RA or bilateral agreement on legal assistance between RA and other country, which provides the possibility of recognition and enforcement of judgements, the author offers to add to this precondition also the precondition of reciprocity, which will allow the national courts of RA to recognize and enforce foreign judgements, if the country where the judgement is given recognizes and enforces the judgements of Armenian courts, even if there is no treaty between RA and that country. The inclusion of this precondition would liberalize the institute of the recognition and enforcement of foreign judgement in Armenia, which would allow Armenia to avoid the legal isolation and to promote the development of international relationships with other countries. At the same time the author offers to strengthen the criteria in the CPC of RA which should be met by foreign judgements to be recognized and enforced in Armenia.

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ**ԺԻՌԱՅՐ ՂԱՐԱԳՅՈԶՅԱՆ**

Հայոց պուսական (պլավոնական) համալսարանի իրավունքի և քաղաքականության ինստիտուտի քրեական և քրեական դատավարության իրավունքի ամբիոնի հայցորդ



**ԹՄՐԱՍՈԼՈՒԹՅԱՆ, ԹՄՐԱՍԻՉՈՑՆԵՐԻ
ԵՎ ՀՈԳԵՍԵՏ ՆՅՈՒԹԵՐԻ ԱՊՈՐԻՆԻ
ԾՐՁԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԲԱՆԱԿԱՆ
ԲՆՈՒԹԱԳԻՐԸ**

Հասարակության զարգացման ներկայիս տեսնդեմում սոցիալական միջավայրի բազմաթիվ բացասական գործոնների շարքում, բերևս, առավել վտանգավոր է թմրամոլությունը՝ որպես սոցիալական չարիք, աղետ համայն մարդկության:

Անձը, որ կանգնել է թմրամոլ դառնալու ճանապարհին, աստիճանաբար վերացնում է իր բոլոր բարոյանական հատկանիշները, ձեռք է բերում հոգեկան խնդիրներ, կորցնում է ընկերներին, ընտանիքը, հարազատ մարդկանց, չի կարողանում ձեռք բերել մասնագիտություն կամ մոռանում է այն մասնագիտությունը, որին նախկինում տիրապետում էր, դառնում է գործազորկ և ներգրավվում է հանցագործ միջավայր, բերում է բազմաթիվ դժբախտություններ իր ընտանիքին ու իրեն և ի վերջո աստիճանաբար ոչնչացնում է իր մարմինը, իր ուղեղը:

Հարկ է նշել, որ թմրամոլության առաջին հատկանիշները Հայաստանում առաջացել են նախորդ դարի քանի քանի թվականներին, սակայն շատ արագ դրանք լիկվիդացվեցին: Քսաններորդ դարի 50-60-ական թվականներին իրականացվում էին կոնկրետ խիստ միջոցներ թմրանյութերի ազօրինի շրջանառության դեմ պայքարում, ինչի արդյունքում այդ խնդիրը չուներ լայն տարածվածություն հասարակության մեջ: Զանգվածային լրատվության միջոցները օգնության եկան՝ վերացնելու թմրամոլության հետ կապված խնդիրները: Եվ միայն 60-ական թվականների վերջում պետական ներքին քաղաքականության մեղմացման արդյունքում նկատվում է թմրանյութերի ազօրինի շրջանառության աճի տեսնեանց, ինչպես նաև թմրանյութային կախվածությունից տառապող անձանց թիվը Հայաստանի ավելացում:

Այսօր պարբերաբար ազօրինի թմրամիջոցներ գործածող անձանց թիվը Հայաստանի

Հանրապետությունում ոչ պաշտոնական տվյալներով անցնում է 30000-ի սահմանը: Պաշտոնական տվյալներով, բնականաբար, շատ ավելի փոքր է այդ ցուցանիշը, քանզի վիճակագրական տվյալները ամբողջովին չեն արտացոլում հասարակության մեջ ձևավորված իրական պատկերը: Գաղտնիք չէ, որ այս երևույթը օժտված է բարձր մակարդակի լատենտայնությամբ: Ինչպես իրավացիորեն նշում է ուսու գիտնական Ա. Գրիշկոն օրենսդրի կողմից մինչ այժմ մշակված չեն էֆեկտիվ միջոցներ՝ հակազդելու անձանց թմրանյութերի ոչ բժշկական գործածմանը և այդ հողի վրա կատարվող իրավախախտումներին¹:

Հայաստանի Հանրապետության տարածքում նկատվում է թմրանյութերի ազօրինի շրջանառության աճի տեսնեան: Թմրամիջոցների շարաշահման աճի գործնից զատ ավելանում է դրանց հետ կապված հանցավորությունը:

Թմրանյութերի ազօրինի շրջանառության դեմ ծրագրի շրջանակներում Հայաստանում կազմվում է «Թմրամիջոցների ազօրինի շրջանառության տարեկան հաշվետվություն»: Հարկ է նշել, որ այդ հաշվետվությունների որակը տարեցտարի բարեկապում է: Տվյալ հաշվետվությունները ունեն ոչ պակաս կարևոր նշանակություն, քանի որ ծանոթանալով դրանց՝ կառավարությունը ամբողջական պատկերացում է կազմում թմրամիջոցների ազօրինի շրջանառության ստեղծված վիճակի մասին և հնարավորություն է ստանում ընդունել կոնկրետ որոշումներ, հատկացնել անհրաժեշտ միջոցներ տվյալ երևույթի դեմ պայքարի արդյունավետության բարձրացման համար:

Հայաստանի Հանրապետության Ռատիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչությունը, համագործակցելով ոստիկանության ստորաբաժանումների

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

հետ, 2010 թվականի ընթացքում թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության դեմ պայքարի ուղղությամբ ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում հայտնաբերել է 1524 հանցագործությունների և 296 իրավախախտումների դեպքեր (2009 թվականին համապատասխանաբար՝ 1238 և 130):² Այսինքն՝ մեկ տարվա կտրվածքով գրանցվել է հանցագործությունների աճ շուրջ 23 տոկոսով:

Եթե 2006 թվականին թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների հետ կապված բացահայտվել է 957 հանցագործություն, ապա 2010 թվականին այդ ցուցանիշը հասնում է 1524-ի: Հետաքրքրականն այն փաստն է, որ նման վիճակագրություն ֆիքսվել է այն պայմանների առկայության դեպքում, եթե 2008 թվականի մայիսին Հայաստանի Հանրապետությունում ապարքեականացվել է թմրանյութերի գործածումը (ՀՀ Զ. օրի 271-րդ հոդված): Դժվար չէ գիտակցել, որ 2006 թվականի՝ թմրանյութերի և հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառության վիճակագրության մեջ արձանագրված հանցագործությունների զգալի մասը կազմում է հենց թմրանյութերի գործածումը: Այս եզրահանգումից ելնելով՝ կարելի է վստահությամբ նշել, որ 2006-2010 թթ. ընկած ժամանակահատվածում թմրանյութերի և հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառության հետ կապված հանցագործությունները կրկնակի ավելացել են:

Հետազոտության արդյունքները ցույց տվեցին, որ անբեկանելի փաստ է համարվում այն հանգամանքը, որ թմրամոլությունը և դրա հետ կապված հանցագործությունները ունեն աճի տեսնենց տարեցտարի: Դա վկայում է այն մասին, որ թմրամոլության և թմրանյութերի հակազդման համար ձեռնարկվող միջոցները առայժմ այնքան էլ արդյունավետ չեն, որքան ցանկալի կլիներ:³ Թմրամոլության դիմամիկայի վերաբերյալ նման կարծիք հայտնեց նաև լրագրողների հետ հանդիպման ժամանակ ՀՀ Առողջապահության նախարարության նարկողիական կլինիկայի դեկանը Պետրոս Սեմերճյանը. «...Հայաստանում գրանցված թմրամոլները 3833-ն են: Հայաստանում կա թմրամիջոցների օգտագործման սարսափելի մեծ աճ՝ ամեն տարի մոտավորապես 50 %-ով»: Պետրոս Սեմերճյանը ավելացրեց նաև, որ, համամետելով այլ երկրների հետ, Հայաստանը գտնվում է բարենպաստ

վիճակում ամբողջ աշխարհում, թեև մեզ աճն անհազստացնում է:

Հարկ ենք համարում նաև ուշադրություն դարձնել ոչ պակաս կարևոր երևույթի վրա, այն է՝ թմրամոլության և թմրանյութերի հետ կապված հակաիրավաչափ վարքագծի կառուցվածքի մեջ բացահայտված հանցագործությունների և իրավախախտումների հարաբերակցությունը զգալի բարձր է: Թմրամիջոցների և հոգեմետ նյութերի վերաբերյալ բացահայտված վարչական իրավախախտումների փոքր քանակությունը չի հանապատասխանում իրականությանը: Դա խոսում է վարչական նորմերի անարդյունավետության մասին, որնց միջոցով հնարավոր է ավելի որակյալ դիմակայել թմրամիջոցների ապօրինի շրջանառությանը:

Այս տեսակի հանցագործության վիճակագրական վերլուծությունը անշափ կարևոր է, քանզի հնարավորություն է տալիս արտացոլել ստեղծված իրավիճակը, ցույց տալ առկա խնդիրները թմրամիջոցների ապօրինի շրջանառության կասեցման համար, մշակել դրանք հաղթահարելու ուղիները:

Թմրամիջոցների ապօրինի շրջանառության զարգացման տեսնենցի հարցը լուծելիս պետք է հաշվի առնել այն գործոնը, որ թմրամիջոցների իրացմամբ գրաղվող քրեական կառույցները ստանում են գերշահույր՝ որպես իրենց քրեական գործունեության արդյունք: Իրացումը ընդլայնելու և զարգացնելու պրոցեսով տարված՝ նրանք օգտագործում են բոլոր հնարավոր միջոցները՝ քարոզությունը երիտասարդության շրջանում, բռնի մեթոդները, ինչպես նաև բարձր վարձատրությամբ ուղղորդված և օգտելով սոցիալական բարդ վիճակից տարածաշրջանում՝ որոշակի կատեգորիայի մարդկանց գրավելը որպես տարածողների, որոնք հետագայում վերածվում են գործածողների, կամ տեղի է ունենում հակառակը, եթե գործածողը վերածվում է իրացնողի:

Ուսումնասիրությունների մեծ մասը ցույց է տալիս, որ մինչև թմրամիջոցներ գործածել սկսելը բազմաթիվ անձինք հանցագործություններ չեն կատարում: Դա պայմանավորված է նրանով, որ թմրամիջոցների և հոգեմետ նյութերի գործածման սկիզբը համընկնում է անձի քրեական ակտիվության զարգացման հետ:

Բացի այդ՝ թմրամիջոցներ գործածող անձը մշտապես չափաբաժնի ավելացման կարիք է

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

զգում, և քանի որ թմրամիջոցները Հայաստանի «սև» շուկայում խիստ քանի արժեն, ապա այդ գործոնը նույնապես պետք է ներառել այն հիմնական հանգամանքների թվում, որոնք խթանում են թմրամոլորդյան կախվածությունից տառապող անձանց նոր հանցագործություններ կատարել⁴:

Այս տեսակ հանցավոր գործունեության առանձնահատկությունները հաշվի առնելով՝ օպերատիվ աշխատակիցները առաջնահերթ ուշադրություն պետք է դարձնեն օպերատիվ իրազեկության գործոնի վրա: Այս դեպքում, իրազեկություն ասելով, նկատի ունենք տեղեկատվության ամբողջություն թմրեցնող հատկությամբ օժտված բույսերի կենտրոնացված աճելու վայրերի մասին, ստեղծվող և գործող հանցավոր խմբերի մասին, թմրամիջոցների իրացնողների մասին, թմրամիջոցներ գործածող անձանց, ինչպես նաև գործածման հակված անձանց մասին, հանրապետության տարածք թմրամիջոցների հնարավոր ներքափառության վայրերի մասին:

Բնակչության զգալի մասը, չունենալով հնարավորություն՝ հասնելու ցանկալի հաջողության, հուսահատությունից դրդված, ավելի ու ավելի հաճախակի է դիմում թմրանյութերի «օգնությանը» և հետզինեւն ներգրավվում է թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված հանցավորության մեջ:

Թմրամիջոցներն ու հոգեներգործուն նյութերը ներքափանցում են ազատազրկման ձևով պատիժ կրողների վայրեր նույնապես՝ բնականաբար որոշակի պարզեավճարի նախապայմանով:
 ՀՀ Արդարադատության նախարարության պենիտենցիար համակարգի աշխատակիցները պարզեատրության պայմանով թմրամիջոցներ են անցկացնում քրեակատարողական հիմնարկներ. հանցագործները չեն կարող աճեցնել ափիոնային

կակաչ կամ արտադրել սինթետիկ թմրամիջոցներ կալանավայրերում: Կանոնավոր կերպով ավելանում է թմրանյութային կախվածություն ունեցող անձանց թիվը կալանավայրերում: Ընդ որում պետք է հետևություն անել, որ այդ թվաքանակը ավելանում է ոչ միայն նոր դատապարտյալների շնորհիվ, այլ նաև այն անձանց, ովքեր սկսել են գործածել թմրամիջոցների կալանավայրերում, ինչը իր հերթին անհնարին է դարձնում պատժի նպատակներից մեկին հասնելուն՝ դատապարտյալի ուղղմանը:

Ամփոփելով՝ կցանկանայինք նշել, որ փորձագետների ճնշող մեծամասնության կարծիքով թմրամիջոցների հանցավոր շրջանառությունը աչքի է ընկանում հիպերլատենտայնությամբ: Այսինքն՝ համապատասխան տեսակի զրանցված հանցագործությունների ծավալը գերազանցում է ավելի քան մեկ կարգով զրանցված հանցագործությունների ծավալի հարարերակցությամբ:

Համաձայն մեր կարծիքի՝ վերը նշված թմրամիջոցների ապօրինի շրջանառության և դրանց չարաշահումների դետերմինանտները սերտ կապված են իրար հետ, և միայն դրանց համալիր ուսումնասիրությունը հնարավորություն կտա ստեղծել արդյունավետ միջոցներ՝ ուղղված թմրահանցավորության կանխարգելմանը:

Թմրամոլության դեմ պայքարը կամ թմրամոլության կանխարգելումը հիմնված է բազմաթիվ տեսչությունների փոխհամագործակցության վրա: Եվ եթե կա համագործակցություն, ընդհանուր ըմբռնումը խնդրի, ապա այն բերում է դրական արդյունքների: Այստեղ չկա փորձ, որը կարող է լուծել բոլոր խնդիրները միանգամից և արմատախիլ անել թմրամոլությունը միանգամից:

¹ Տե՛ս Գրիշկո Ա.Յա. «Թմրանյութերի հանցավոր շրջանառությունը»: Քրեաքանություն / Ընդհ. խմբակց. Դոլգովա Ա.Ի. 2002թ.

² Տե՛ս Եաւլին Յ.Վ. «Կրиминализация незаконного оборота наркотических средств как одно из направлений уголовной политики государства», 2006թ..

³ Տե՛ս Կոբեց Պ.Ի. «Анализ отдельных проблем в области противодействия наркобизнесу».

⁴ Տե՛ս ՀՀ Ոստիկանության պաշտոնական կայքէջ, www.police.am

Գրականության ցանկ

1. Գրիշկո Ա.Յա. «Թմրանյութերի հանցավոր շրջանառությունը»: Քրեաքանություն / Ընդհ. խմբակց. Դոլգովա Ա.Ի. 2002թ.

2. Баулин Ю.В. "Криминализация незаконного оборота наркотических средств как одно из направлений уголовной политики государства", 2006г..
3. Кобец П.Н. "Анализ отдельных проблем в области противодействия наркобизнесу"
4. Антонян Ю.М. "Борьба с незаконным оборотом наркотиков", 1993г..
5. ՀՀ Ոստիկանության պաշտոնական կայքէջ, www.police.am
6. Гасанов Э.Г. "Борьба с наркотической преступностью", 2000г..
7. Авакян Р.О. "Наркомания и методы борьбы с нею".

РЕЗЮМЕ

Криминологическая характеристика наркомании, незаконного оборота наркотических средств и психотропных веществ

В данной статье автор представил данные, полученные в результате исследования состояния незаконного оборота наркотических средств и психотропных веществ, анализировал существующую криминологическую картину страны. Не представляет сомнений, а даже беспокоит, существенные объемы распространения наркомании и незаконного оборота наркотических средств и психотропных веществ, которые регистрируют динамический рост из года в год.

SUMMARY

Criminological characteristics of drug addiction, illegal traffic of narcotic drugs and psychotropic substances

The author presented the data obtained from the study of the state of illegal trafficking in narcotic drugs and psychotropic substances, analyzed the current criminological picture of the country. Presents no doubt, and even bothers, significant volumes of drug abuse and illicit trafficking in narcotic drugs and psychotropic substances, which register dynamic growth from year to year.

ԼՈՒԳԱ ԾԱՏՈՒԹՅԱՆ

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի ասպիրանտ

**ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ՝ ՈՐՊԵՍ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՅՔԻ ՕԲՅԵԿՏԻ
(ՆՈՌ-ՀԱՌ-Ի) ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ**

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրը առևտրային գաղտնիքի շուրջ ծագող բոլոր հարաբերությունների համակարգում իրականում կարգավորում է միայն դրա նեղ սեգմենտը՝ գույքային հարաբերությունների հետ կապված նոու-հաուի շուրջ ծագող հարաբերությունները։ Նման պրակտիկա է կիրառվում նաև մի շարք եվրոպական պետությունների կողմից։ Այսպես, Եվրոպական որոշ պետություններում առևտրային գաղտնիքի իրավական կարգավորումն իր զարգացումն է ստացել միայն անցյալ դարի 90-ական թվականների սկզբից։ Բացառություն է կազմում Ֆրանսիան, որտեղ այս իրավական ինստիտուտն օրենսդրութեան ամրագրվել է դեռևս 1844 թվականից։

Նոու-հաու-ի՝ որպես առևտրային գաղտնիքի հասուկ տարատեսակի իրավական ռեժիմը բնորոշվում է հետևյալ կերպ։ Նոու-հաու-ն այն տեղեկատվությունն է, որը երրորդ անձանց անհայտ լինելու ուժով ունի իրական կամ հնարավոր առևտրային արժեք, չկա օրինական հիմքերով այն ազատորեն ստանալու հնարավորություն, իսկ տեղեկատվություն ունեցողը միջոցներ է ձեռնարկում դրա գաղտնիության պահպանման համար։

Նոու-հաու-ի իրավական ռեժիմի սահմանումը այս միակ դեպքն է, եթե տեղեկություններն ընկնում են բացարձակ գույքային իրավահարաբերությունների բնորոշման տակ և ձեռք են բերում հատուցմաք օստարվելու պոտենցիալ հնարավորություն։ Բոլոր բացարձակ գույքային իրավահարաբերությունների նման դրանք ևս պահանջում են անհատապես որոշվող (դիսկրետ) օբյեկտի առկայություն։ Իսկ ի՞նչն է ծառայում որպես տեղեկատվության նույնականացման չափանիշ։ Ակնհայտ է, որ առաջին հերթին դրանց ամրագրումը նյութական կրիչի վրա (փաստաթերավորում)։ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում ոչինչ չի ասվում առևտրային գաղտնիք հանդիսացող տեղեկատվության փաստաթերավորման

պարտավորության մասին։ Գտնում ենք, որ փաստաթերավորումը արդարացված է միայն նոու-հաու-ի և ոչ թե առևտրային գաղտնիք կազմող բոլոր տեղեկությունների դեպքում։ Վ. Ա. Դողորցելը գրում է. «Այն պատկերացումը, որ արդյունաբերական գաղտնիքների ամրագրման ձևին չի կարող ներկայացվել ոչ մի պահանջ, սխալ է։ Արտադրության գաղտնիքների պահպանության համար պետք է ունենալ տեղեկություններ, որոնք բավարար կլինեն դրա նույնականացման համար։ այդ պատճառով դրանք պետք է ամրագրվեն գրավոր կամ նյութական կրիչի վրա, այլ օբյեկտիվ ձևով (օրինակ, էլեկտրոնային ձև, տեսագրություն, ձայնագրություն և այլն), որը մատչելի է երրորդ անձանց, իսկ բանավոր ձևն անընդունելի է»¹։

Սակայն նոու-հաու-ի միայն ամրագրումը քաղաքացիական շրջանառության համար ակնհայտորեն բավարար չէ, քանի որ այն տվյալները, որոնք ունեն նույն բովանդակությունը, բայց միաժամանակ գտնվում են տարբեր կրիչների վրա, միևնույն է, իրենցից ներկայացնում են նույն օբյեկտը։ Հետևաբար տեղեկությունների նույնականացման մեջ գլխավոր դերը խաղում է դրա բովանդակությունը և ոչ թե տարածքային տեղակայությունը, ինչպես իրերի դեպքում։ Տեղեկությունների շարադրման ձևը դրանց նույնականացման համար ևս նշանակություն չունի, չի կատարվում նաև դրանց հասուկ գրանցում այն որոշակի անձանց անվանք ձևակերպելու նպատակով։ Արդյունքում հանգում ենք այն եզրակացության, որ նոու-հաու-ի ռեժիմ ունեցող տեղեկությունների նույնականացման միակ եղանակը դրա ամրագրումն է նյութական կրիչի վրա և որոշակի բովանդակության առկայությունը։

Ենթելով վերը նշվածից՝ գտնում ենք, որ փաստաթերավորումը նոու-հաու-ի իրավական ռեժիմի առաջացման համար հանդիսանում է պարտավոր ընթացակարգ։ Պարտավոր է նաև գաղտնիության

ապահովմանն ուղղված գործողությունների կատարումը: Միայն այսպիսի յուրահատուկ ձևով է ձեռք բերվում տեղեկությունների նույնականացման (դիսկրետության) հնարավորությունը: Միաժամանակ հնարավոր չէ չնկատել, որ նրան հատուկ է որոշակի, պայմանականորեն արտահայտված «ոչ օրյեկտիվության» մասը: Այսպես, արդյունաբերական սեփականության օրյեկտը՝ որպես ինքնուրույն և անկախ դիսկրետ միավոր, գոյություն ունի «օրյեկտիվորեն», անկախ իրավահարաբերության մասնակիցների կամքից, որի հաստատումն է հանդիսանում պետական մարմինների կողմից տրվող արտոնագիրը: Իրի «օրյեկտիվությունը» ևս կարող է հաստատվել զննման եղանակով, իսկ հեղինակային իրավունքի «օրյեկտը»՝ գեղարվեստական ձևի ստեղծման անհատական միջոցների և եղանակների վեր հանման ձևով: Իսկ ինչպես՝ բացահայտել և ապացուել նոու-հաուի ռեժիմում գտնվող տեղեկությունների առկայությունը, եթե ոչ հենց իրավահարաբերության սուբյեկտի կողմից կազմված, տվյալ տեղեկությունների գաղտնագրված փաստաթղթերի կիրառմամբ:

Նոու-հաու-ն պայմանագրով փոխանցելու դեպքում տեղեկությունների դիսկրետությունը «օրյեկտիվություն» է ձեռք բերում, քանի որ վերջիններս ամրագրվում են երկու կողմերի ստորագրած փաստաթղթում, այսինքն՝ իրավահարաբերության մասնակիցներից երկուսն էլ հաստատում են փոխանցվող տեղեկությունների բովանդակությունը: Եվրամիության խորհրդի՝ Եվրամիության որոշակի կատեգորիայի համաձայնությունների տեխնոլոգիաների փոխանցման մասին պայմանագրի 85(3) հոդվածի կիրառման մասին N240/96 կարգի 10-րդ հոդվածի 4-րդ մասն ամրագրում է, որ «նույնականացումը» նշանակում է, որ նոու-հաու-ի բովանդակությունը նկարագրված է կամ ամրագրված այնպես, որպեսզի հնարավոր լինի ստուգել, թե համապատասխանո՞ւմ է այն գաղտնիության և էականության չափանիշներին կամ բացառել լիցենզատուի ոչ պատշաճ սահմանափակումը իր սեփական տեխնոլոգիաների օգտագործման ժամանակ: Նոու-հաու-ն նույնականացման նպատակով կարող է ամրագրվել կամ լիցենզային պայմանագրում, կամ առանձին փաստաթղթում, կամ ցանկացած այլ պատշաճ ձևով, ամենաուշը նոու-հաու-ի փոխանցման կամ ավելին՝ նման փոխանցումից հետո, պայմանով, որ անհրաժեշտության դեպքում

առանձին փաստաթղթին կամ ամրագրման այլ ձևին առնչվելու հնարավորություն լինի²:

Ավելի դժվար է նույնականացնել նոու-հաու-ն այն դեպքում, եթե դրան առնչվելու հնարավորությունն առաջացել է անօրինական կերպով, այսինքն՝ կողմերի միջև ծագել է ոչ թե պարտավորական իրավահարաբերություններ, այլ իրավահարաբերություններ բացարձակ իրավունքի խախտումից: Իրավախախտը պետք է ապացուի, որ արժեքավոր տեղեկություններին առնչվելու հնարավորություն ստանալու պահին տնօրինողը դրանց գաղտնիության պահպանության համար անհրաժեշտ ոչ մի միջոց չի ձեռնարկել, իսկ տուժողը, ընդհակառակը, պետք է ապացուի նման միջոցների առկայությունը և որպես ապացույց ներկայացնի փաստաթղթեր, որոնք կազմվել են հենց իր կողմից: Միաժամանակ բացառված չէ, որ վերջիններս պատրաստվել են արդեն վեճի ծագումից հետո: Հարց է առաջանում. իսկ այս դեպքում ինչպես՝ պետք է գործի դատարանը և ու՞մ հավատա, կամ ո՞ր երրորդ անձը կարող է հաստատել նոու-հաու-ի ամրագրման փաստը:

Կարծում ենք, որ լիազոր պետական մարմնի բացակայության պարագայում այդ լիազորությունը կարող է իրականացնել նոտարը՝ նոու-հաու-ի վերաբերյալ տեղեկություն պարունակող փաստաթղթի վրա առկա իրավաբանական անձի՝ տնօրենի կամ անհատ ձեռնարկատիրոջ ստորագրության իսկության վավերացման միջոցով: Նման գործողությունը, համաձայն «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի³ 36-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, իրականացնում է նոտարը:

Բացի նոու-հաու-ի դիսկրետության խնդրից՝ գոյություն ունի նաև դրա հետ սերտորեն կապված այդ օրյեկտի նկատմամբ քաղաքացիական իրավունքների պաշտպանության խնդիրը: Պաշտպանության եղանակը բացարձակ գույքային իրավունքների օրյեկտների դասակարգման համար հանդիսանում է կարեռագույն չափանիշ: Յուրաքանչյուր ինքնուրույն օրյեկտի հատուկ է իր պաշտպանության եղանակը, որն իր հերթին կախված է օրյեկտի դիսկրետության եղանակից: Այսպես, իրը ավանդապես նույնականացվում է տարածքային սահմանները որոշելու ճանապարհով, այդ պատճառով էլ գույքային (իրային) իրավունքների պաշտպանության եղանակները հանդիսա-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

նում են վիճակացիոն և նեգատոր հայցերը (ՀՀ քաղ. օր. 273-278 հոդվածներ):

Հեղինակային իրավունքի օրինակությունը նոյնականացվում են զիտուրյան, գրականուրյան և արվեստի ստեղծագործությունների ձևով, անկախ նրանից, թե ինչպիսի նյուրական կրիչների վրա են դրանք ամրագրված, հետևաբար խախտված հեղինակային իրավունքների վերականգնումը կայանում է ոչ թե ուրիշի ապօրինի տիրապետությունից կրիչները ետ պահանջելու, այլ որոշակի գործողություններ կատարելն արգելելու մեջ, ինչպիսիք են վերարտադրությունը, տարածումը, վարձույթը, փոխատվությունն ու «Հեղինակային և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքով⁴ նախատեսված այլ ձևով օգտագործելը կամ ստեղծագործությունների և հնչյունագրերի կոնտրաֆակտ օրինակները քաղաքացիական շրջանառություն մտցնելու նպատակով պահպանելը կամ տնօրինելը: Արդեն պատրաստված կոնտրաֆակտ օրինակներն առգրավում են և ենթակա են ոչնչացման: Դրանց փոխանցումը իրավատիրոջ իրականացվում է միայն նրա խնդրանքով: Արտոնագրատերն իրավունք ունի պահանջել նաև արգելել երրորդ անձանց կատարել այնպիսի գործողությունները, որոնք կապված են արտոնագրված գյուտը, օգտակար մոդելը, արդյունաբերական նմուշը «Արտոնագրերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածով նախատեսված խախտմամբ օգտագործելը:

Իր ինքնուրույն պաշտպանության եղանակն ունի նաև նոու-հաու-ն, որի առանձնահատկությունները կանխորշված են նրանով, որ դրանկատմամբ առաջնային իրավունքը կարող է ծագել միաժամանակ մի քանի անձանց մոտ: Իրերի և մտավոր գործունեության արդյունքների դեպքում նման իրավիճակը բացառված է: Ա.Ա. Պիլենկոն իր «Գյուտարարի իրավունքը» աշխատության մեջ, հղում կատարելով Օ. Գիերկին, գրում է. «Գյուտը պետք է պաշտպանված լինի երկու տեսանկյունից՝ 1. որպես անձի բյուեղացում, քանի որ ոչ ոք իրավունք չունի խախտել այլ անձի անձնական կյանքի և նրա արդյունքների տաճարի խաղաղությունը, 2. որպես օգտակար աշխատանքի պատուի, քանի որ ոչ ոքի բոլյատրված չէ հարստանալ այլ անձի հաշվին»⁵: Թվում է, որ տվյալ դատողությունն արդարացի է բոլոր բացարձակ գույքային իրավունքների համար, որոնցից յուրաքանչյուրն ունի պայմանա-

կանորեն «օրյեկտիվ» և «սուբյեկտիվ» անվանվող պահերը: «Օբյեկտիվությունը» կայանում է նրանում, որ տարրեր մարդիկ մեկը մյուսից անկախ չեն կարող ստեղծել միևնույն իրը, զիտուրյան, գրականուրյան, արվեստի ստեղծագործությունը: Տարրեր մարդկանց կողմից ստեղծված միմյանցից անկախ նմանվող գյուտի, օգտակար մոդելի, արդյունաբերական նմուշի ստեղծումը հնարավոր է, սակայն առավելություն կստանա այնուամենայնիվ նրանցից միայն մեկը՝ մտավոր սեփականուրյան գրանցման մարմին առաջինը հայտ ներկայացնողը («Արտոնագրերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի⁶ 4-րդ հոդված): Նոու-հաու-ի դեպքում «օրյեկտիվ» պահը չի գործում, քանի որ տարրեր մարդիկ կարող են միմյանցից անկախ սեփական ուժերով ստանալ միևնույն տեղեկատվությունը, հետևաբար ուրիշի հաշվին հարստացում տեղի չի ունենա: Մնում է միայն «սուբյեկտիվ» պահը, այսինքն՝ այն, որ «ոչ ոք իրավունք չունի խախտել այլ անձի անձնական կյանքի և նրա արդյունքների տաճարի խաղաղությունը»: Դիտարկելով գյուտարարի իրավունքը՝ Ա. Ա. Պիլենկոն գրում է, որ նա, ով ինքնուրույն հայտնագործել է մերենա, իսկ այնուհետև արտադրել է այն, ակնհայտ է, որ չի միջամտել արտոնագրատիրոջ անձնական ոլորտին, սակայն միաժամանակ նրան պատժում է կոնտրաֆակցիայի համար: Նշանակում է՝ արտոնագրային իրավունքի պաշտպանությունը տարածվում է գյուտարարի անձնական ոլորտի սահմաններից դուրս այն իր երկարե բռունքըն է դնում հաշվի չառնելով ոչ այն, թե ինչում է արտահայտվել նրա անձը, ոչ էլ այն, թե ինչում է արտահայտվել ուրիշի անձնական ոլորտը⁷: «Նոու- հաու-ն չի գործում այն անձանց նկատմամբ, որոնց այն հայտնի է դարձել իրավաչափորեն, - նշում է Վ. Ա. Դոգրոցել,-օրինակ, նրանց նկատմամբ, ովքեր իրավաչափորեն ստեղծել են նմանատիպ արդյունքը»⁸: Այնուհետև նույն հեղինակն իրավամբ նշում է, որ «ավելի սոույգ պահպանվում է ոչ թե նոու-հաու-ն որպես այդպիսին, այլ դրա տիրոջ անձնական ոլորտի անձեռնմխելիությունը»⁹:

Անհրաժեշտ է նշել, որ, չնայած պաշտպանության եղանակների ակնհայտ տարրերություններին, իրական կյանքում տեղի է ունենում նոու-հաու-ի և մտավոր գործունեության արդյունքների որոշակի միախառնում: Այսպես՝ Ա.Պ. Սերգեևը գրեթե նույնացնում է առևտրային գաղտնիքը և նո-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ու-հառուն ու գրում է, որ առևտրային գաղտնիքը կարող է դիտարկվել որպես մտավոր սեփականության ինքնուրույն օբյեկտ, և այդ հաստատելու համար բերում է երեք փաստարկ.

առաջին՝ առևտրային գաղտնիք կազմող տեղեկատվությունն իր էությամբ ոչ նյութական է, ինչպես որ մտավոր սեփականության օբյեկտները,

Երկրորդ՝ լինելով մարդու գործունեության արդյունք՝ լինի դա ստեղծում, փոխանցում, մշակում, պահպանում կամ ել տեղեկատվության հավաքագրում, այն հնարավորինս հաճընկում է մտավոր սեփականության այնպիսի հատկանիշին, ինչպիսին մտավոր գործունեության արդյունքն է,

Երրորդ՝ տեղեկատվության նկատմամբ բացառիկ իրավունքը՝ այն երրորդ անձանց անհայտ լինելու պայմանով¹⁰:

Վ. Ա. Դոգորցելը, նոու-հառու-ի նկատմամբ իրավունքները դասելով բացառիկների շարքին, միաժամանակ կատարում է վերապահում, որ նոու-հառու-ն ոչ թե ավանդական բացառիկ իրավունքն է, որը ներկայացնում է ամբողջական բացարձակ իրավունքը, այլ էապես հատված, սահմանափակ, կարծեցյալ բացառիկ իրավունքը»¹¹:

Համամիտ ենք Ա.Պ. Սերգեևի հետ այն հարցում, որ նոու-հառու-ն (և միայն դա, այլ ոչ առևտրային գաղտնիք հանդիսացող ամբողջ տեղեկատվությունը) հանդիսանում է մտավոր գործունեության արդյունք: Սակայն Վ. Ա. Դոգորցելը խոսում է դրա մասին որպես ոչ ամբողջական բացարձակ, կարծեցյալ բացառիկ իրավունք: Սեր կարծիքով խնդիրը կայանում է հետևյալում: Նոու-հառու-ն իրենից ներկայացնում է քաղաքացիական իրավունքի յուրահատուկ օբյեկտ. իր էությամբ լինելով մտավոր աշխատանքի արդյունք՝ այն չունի պաշտպանության եղանակ, ինչը բնորոշ է մտավոր գործունեության մյուս օբյեկտներին: Լինելով բացարձակ և գույքային իրավահարաբերությունների օբյեկտ որպես հետևանք օժտված լինելով շրջանառու լինելու հատկանիշով՝ այն փոխառում է բացարձակ, սակայն անձնական ոչ գույքային իրավահարաբերությունների պաշտպանության եղանակները, որոնք ծագում են շրջանառության հատկանիշներով չօժտված օբյեկտի կապակցությամբ, այնպես, ինչպես ընդհանուր կանոնի համաձայն հանդիսանում է առևտրային գաղտնիքը: Ելնելով այն հանգանանքից, որ մենք քաղաքացիական իրավունքի օբյեկտները դասակարգում ենք ոչ թե ըստ իրենց

բնույթի, այլ ըստ պաշտպանության եղանակի, նոու-հառու-ն մեր կողմից չի կարող դիտարկվել որպես բացառիկ իրավունքի օբյեկտ: Հետևարար, նոու-հառու-ն իրավունքի ինքնուրույն օբյեկտ է, առևտրային գաղտնիքի տարատեսակ:

Ըստ մեզ՝ նոու-հառու-ի պաշտպանությունը դուրս չի գալիս իրավատիրոջ անձնական ոլորտից, քանի որ եթե անձն իր ուժերով ստեղծել է տեղեկատվությունը, ապա կարող է անարգել օգտագործել այն, նույնիսկ եթե այդ տեղեկատվության նկատմամբ այլ անձի կողմից սահմանվել է առևտրային գաղտնիքի ռեժիմ: Իրավունքի սուբյեկտը պաշտպանության իրավունք է ստանում միայն իր կողմից սահմանված գաղտնիքի ոլորտ շրույլատրված ներխուժման դեպքում, և բացի այդ անձը, որն օգտագործել է առևտրային գաղտնիք հանդիսացող տեղեկատվությունը և հիմնավոր պատճառներ չի ունեցել տվյալ տեղեկատվության օգտագործումը դիտել անօրինական, այդ բվում առնչվելու հնարավորություն է ստացել պատահականության կամ սխալի հետևանքով, չի կարող ենթարկվել պատասխանատվության: Նշված անձի վրա առևտրային գաղտնիքը տնօրինողի կողմից կարող է դրվել միայն մեկ պարտականություն՝ ձեռնարկել տեղեկատվության գաղտնիության պահովմանն ուղղված միջոցներ: «Այլ անձանց» առևտրային գաղտնիքը բարեխիղճ ձեռքբերողի կողմից օգտագործելու և տնօրինելու ազատությունը գաղտնիության պահպանման պայմաններում չի կարող սահմանափակվել, քանի որ բացակայում է անքույլատրելի ներխուժմամբ արտահայտված առաջին տնօրինողի անձնական իրավունքների խախտումը:

Առևտրային գաղտնիքը խախտողներին կարելի է բաժանել երկու խմբի: Առաջինների թվին պատկանում են այն անձինք, որոնք անմիջականորեն ոչ իրավաչափ ձևով ներխուժել են իրավատիրոջ ոլորտը («սկզբնական» խախտողներ), իսկ երկրորդներին՝ որոնք միայն օգտագործել են ներխուժման արդյունքում ստացվածը («երկրորդական» խախտողներ): «Սկզբնական» և անբարեխիղճ «երկրորդական» խախտողները բոլոր դեպքում պատասխանատվության են ենթարկվում, որն արտահայտվում է հետազա նոու-հառու-ի օգտագործման արգելմամբ և վնասների հատուցման պարտականությամբ: Բարեխիղճ «երկրորդական» օգտագործողը, ի տարբերություն նաև իրի նկատ-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

մամբ սեփականության իրավունքի բարեխիղճ ձեռքբերողի, ընդհանրապես երբեք և ոչնչում չի կարող սահմանափակվել:

¹ Տե՛ս Դզօրցև Վ.Ա. “Понятие секрета промысла (“ноу-хай”). Интеллектуальные права. Понятие. Система. Задачи кодификации”. С. 248.

² Տե՛ս Ցիտ. ըստ Դզօրցև Վ.Ա. “Понятие секрета промысла (“ноу-хай”). Интеллектуальные права. Понятие. Система. Задачи кодификации”. С. 248.

³ Տե՛ս Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, թիվ 2(177), 10 հունվարի 2002:

⁴ Տե՛ս Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, թիվ 38(439), 12 հուլիսի 2006:

⁵ Տե՛ս Պիլենկո Ա.Ա. “Право изобретателя”.-Մ.: “Статут”. 2001. С. 617.

⁶ Տե՛ս Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, թիվ 73(372), 30 դեկտեմբերի 2004:

⁷ Տե՛ս Պիլենկո Ա.Ա. Право изобретателя.-Մ.: “Статут”. 2001. С. 607.

⁸ Տե՛ս Դզօրցև Վ.Ա. “Информация как объект исключительного права. Интеллектуальные права. Понятие. Система. Задачи кодификации”. С. 228.

⁹ Տե՛ս Ծովյան տեղում, էջ 229:

¹⁰ Տե՛ս Սերգеев Ա.Պ. “Право интеллектуальной собственности в РФ”.-М. ПБОЮЛ Гриженко Е.М., 2001, С. 679.

¹¹ Տե՛ս Դզօրցև Վ.Ա. “Информация как объект исключительного права. Интеллектуальные права. Понятие. Система. Задачи кодификации”. С. 228.

РЕЗЮМЕ

Информация как объект абсолютных имущественных прав (правовой режим ноу-хай)

В данной статье рассматриваются вопросы регулирования информации, как объекта абсолютных имущественных прав, специальной разновидности коммерческой тайны - «ноу-хай», в рамках которого отмечается, что установление правового режима «ноу-хай» - это единственный случай, когда информация подпадает под определение объекта абсолютных имущественных правоотношений и обретает способность к потенциальному возмездному отчуждению. Отмечено также, что единственным способом обосновления информации в режиме «ноу-хай» одновременно выступают зафиксированность на материальном носителе, наличие определенного содержания и принятие всех мер по обеспечению конфиденциальности. Классификация объектов гражданских прав проводя по способам защиты, ноу-хай рассматривается как самостоятельный объект прав, разновидность коммерческой тайны.

SUMMARY

Legislative regulation of information as a civil rights object of know-how

The article deals with the legislative regulation of the information as an absolute object for the absolutely property right referring to a special variety of commercial secret of know-how. The article states that the definition of legislative regime of the know-how is the only case when the information is defined under the absolutely legal property relations and obtains the potential opportunity to be sold by reimbursement. It is also noted, that the only way of the information identification having the know-how regime is its recording on physical disk- drives, the presence of certain meaning, as well as actions aimed at providing privacy. Classifying the objects of civil rights according to protection ways, know-how has been considered an independent object and one of the varieties of commercial secrets.

ԳՈՒՐԳԵՆ ՍԱԴՈՅՑԱՆ

ՀՀ փաստաբանների պալատի հանրային պաշտպանի
գրասենյակի փաստաբան

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի
սահմանադրական իրավունքի ամբիոնի հայցորդ

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՎՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Պետության կողմից ոստիկանության առջև դրված խնդիրների լուծումը, պայմանավորված այդ խնդիրների բնույթով, դրանց լուծման ընթացքում անձանց իրավունքների և ազատությունների ուժնահարման ռիսկայնության բարձր աստիճանով, ոստիկանության ծառայողներից ծառայողական գործունեության ընթացքում պահանջում է բարեխնդություն, եռանդ, ազնվություն և իրավական ակտերով սահմանված պահանջների հստակ պահպանում:

Ոստիկանության գործունեության ընթացքում օրինականության և քաղաքացիների իրավունքների ապահովման երաշխիքների կատարելագործումը ՀՀ պետական պարագաների պահպանության և ծավալների մասին են վկայում ոստիկանության ծառայողների կողմից քաղաքացիների իրավունքների խախտումների, դաժան վերաբերմունքի և այլ հակառակնական գործողությունների մասին իրավասու մարմիններին ներկայացվող քաղաքացիների բողոքների մեծ մասը: 2011թ-ի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության և երկրում մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների խախտման մասին տարեկան գեկույցում ՀՀ ոստիկանության համակարգում հայտնաբերված խնդիրների հանգամանալից ուսումնասիրությունը թույլ է տալիս ասել, որ ոստիկանության ծառայողների կողմից օրենքի պահանջների խախտումները և քաղաքացիների իրավունքների ուժնահարումը որպես կամոն կատարվում է հանցագործությունների վերաբերյալ հաղորդումների ընդունման, այդ առթիվ նյութերի նախապատրաստման և քրեական գործերով նախնական քննության ընթացքում¹:

Ոստիկանության ծառայողների կողմից իրենց ծառայողական պարտականությունների բարեխիղճ կատարման ապահովմանը, դրանով իսկ ծառայության համապատասխան տեսակի կողմից իր առջև դրված խնդիրների արդյունավետ լուծման բարձրացմանն է ուղղված ոստիկանության ծառայողների պատասխանատվության իրավական ինստիտուտը:

Պետական, այդ թվում ոստիկանության ծառայողների իրավական պատասխանատվությունը իրենից ներկայացնում է իրավասու սուրյեկտների (պաշտոնատար անձի, մարմնի) ներգործությունը պետական ծառայողների հետաքրքրությունների, գգուումների, գիտակցության, կամքի և այդ կերպ նաև նրանց կողմից իրականացվող մասնագիտական գործունեության վրա: Այն պետք է իրականացվի այնպես, որ նպաստի ծառայության խնդիրների արդյունավետ իրականացմանը: Այդ նպատակով ծառայողներին պատասխանատվության նմարկելը պետք է ունենա համապատասխան իրավական հիմք, լինի ժամանակին և նպատակաւորագությամբ:

Պետական ծառայողների պատասխանատվության իրավական ինստիտուտը հանդիսանում է պետական ծառայության իրավական ինստիտուտի բաղկացուցիչ մասը և իրենից ներկայացնում է իրավական նորմերի ամբողջություն, որոնք սահմանում են պետական ծառայողների պատասխանատվության հիմքերը, տեսակները և դրանց կիրառման կարգը:

Ոստիկանության ծառայողի իրավական պատասխանատվությունն արտահայտվում է իրավախստում կատարելու համար օրենքով նախատեսված կարգով պատասխանատվության միջոցի

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Կիրառմամբ:

Ոստիկանության ծառայողի իրավախսախսումը վերջինիս մեղավոր գործողությունը կամ անգործությունն է, որը չի համապատասխանում և հակասում է նորմատիվ ակտերի պահանջներին։ Դրան հակառակ՝ ծառայողի բոլոր արարքները, որոնք համապատասխանում են իրավական ակտերի պահանջներին, իրավաչափ են և չեն կարող առաջացնել պատասխանատվություն։

Կախված իրավախսախսուման բնույթից և վտանգավորությունից, մեղքի աստիճանից, իրավախսախսումը կատարելու պայմաններից, դրա առաջացրած հետևանքների բնույթից և այլ հանգամանքներից՝ ծառայողները կարող են ենթարկվել կարգապահական, հյութական, վարչական կամ քրեական պատասխանատվության։

Ոստիկանության ծառայողների կատարած բոլոր իրավախսախսումները, կապված այն հանգամանքի հետ, թե դրանք կատարվել են կապված ծառայողական գործունեության հետ, թե ոչ, կարելի է բաժանել երկու խմբի։

Ծառայությունից դուրս կատարված իրավախսախսումների համար ոստիկանության ծառայողները պատասխանատվություն են կրում այլ քաղաքացիների հետ ընդիմուր հիմքով և կարգով։ Այս դեպքում վերջիններիս վրա ամրող ծավալով տարածվում են իրավական պատասխանատվության բոլոր տեսակները՝ բացառությամբ վարչական պատասխանատվության։

Ոստիկանության ծառայողների վարչական պատասխանատվությունը նրանց նկատմամբ վարչական տույժերի կիրառումն է՝ իրավական ակտերով նախատեսված իրենց ծառայողական պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար։

Պաշտոնատար անձինք ենթակա են վարչական պատասխանատվության այնպիսի վարչական իրավախսախսումների համար, որոնք կապված են կառավարման կարգի, պետական ու հասարակական կարգի, բնության, բնակչության առողջության պահպանության ոլորտում կանոնները և մյուս այն կանոնները չպահպանելու հետ, որոնց կատարման ապահովումը մտնում է նրանց պաշտոնական պարտականությունների մեջ²։

Զինծառայողները և վարժական հավաքներին կանչված զինապարտները, ինչպես նաև ոստիկանության մարմինների շարքային կազմը և դեկա-

վար կազմերի մեջ մտնող անձինք վարչական պատասխանատվության են ենթարկվում ըստ համապատասխան կարգապահական կանոնների։ Շանապարհային երթևեկության կանոնների, որսի, ձկնորսության և ձկան պաշարների պահպանության կանոնների, մաքսային կանոնների խախտման և մաքսանենգության համար այդ անձինք վարչական պատասխանատվություն են կրում ընդիմանուր հիմունքներով։ Նշված անձանց նկատմամբ չի կարող կիրառվել տուգանք։ Մյուս անձինք, որոնց վրա տարածվում է կանոնագրքերի կամ կարգապահության վերաբերյալ հատուկ կանոնադրությունների գործողությունը, դրանցով ուղղակիորեն նախատեսված դեպքերում վարչական իրավախսախսումների համար կրում են կարգապահական, իսկ մնացած դեպքերում ընդիմանուր վարչական պատասխանատվություն։ Նշված դեպքերում այն մարմինները (պաշտոնատար անձինք), որոնց վերապահված է վարչական տույժեր նշանակելու իրավունք, կարող են տույժեր կիրառելու փոխարեն իրավախսախսումների վերաբերյալ նյութերը հանձնել համապատասխան մարմիններին՝ մեղավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի լուծման համար։

Ինչ վերաբերում է ոստիկանության ծառայողներին նյութական պատասխանատվության ենթարկելուն, ապա ՀՀ օրենսդրությունը դրա համար առանձնահատկություններ չի նախատեսում, և պետական բոլոր ծառայողները նյութական պատասխանատվության են ենթարկվում մեկ միասնական կարգով։ Ոստիկանության ծառայողները նյութական պատասխանատվություն են կրում ինչպես իրենց պատճառած գույքային, այդպես էլ ոչ գույքային վճարի համար։ Ոստիկանության (պետական) ծառայողների կողմից պատճառած գույքային վճարի համար նյութական պատասխանատվությունը բխում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1058-րդ հոդվածի 1-ին մասի բովանդակությունից, ըստ որի՝ քաղաքացու անձին կամ գույքին, ինչպես նաև իրավաբանական անձի գույքին պատճառած վճար լրիվ ծավալով ենթակա է հատուցման այն պատճառած անձի կողմից։ Վճարի հատուցման պարտականությունը օրենքով կարող է դրվել վճար չպատճառած անձի վրա։ Վճարի տակ այս դեպքում հասկացվում է նյութական վճարը, որը արտահայտվում է տուժող սուբյեկտի կրած գույքային կամ ֆինանսական կորուստներով։ Ոստի-

կանուքունում (պետական) ծառայողի քաղաքացիաբավական պատասխանատվությունը վրա է հասնում պետական մարմնին կամ երրորդ անձին ոստիկանության (պետական) ծառայողի կողմից ծառայողական պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման, ներառյալ օրենքին կամ այլ իրավական ակտին չհամապատասխանող ակտ իրապարակելու հետևանքով նյութական վճառ հասցնելու դեպքում։ Ֆիզիկական և իրավաբանական անձանց նյութական պատասխանատվությունից պետական ծառայողների (պաշտոնատար անձանց) նյութական պատասխանատվության առանձնահատկությունները սահմանված են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1063-րդ հոդվածով։ Համաձայն այդ հոդվածի՝ քաղաքացուն կամ իրավաբանական անձին պետական մարմնիների, տեղական ինքնակառավարման մարմնիների կամ դրանց պաշտոնատար անձանց ապօրինի գործողություններով (անգործությամբ), ներառյալ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի՝ օրենքի կամ այլ իրավական ակտի չհամապատասխանող ակտ իրապարակելու հետևանքով պատճառված վճառը հասուցում է ՀՀ-ն կամ համապատասխան համայնքը։

Ոստիկանության ծառայողների կողմից պատճառված ոչ գույքային վճառ համար նյութական պատասխանատվության հիմքերը և կարգը բխում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 104-րդ հոդվածի բովանդակությունից, որի 1-ին մասի համաձայն՝ ոչ իրավաչափ վարչարարությամբ ֆիզիկական անձի ազատությունը սահմանափակելու, նրա անձեռնմխելիությունը, բնակարանի անձեռնմխելիությունը, անձնական կամ ընտանեկան կյանքի անձեռնմխելիությունը խախտելու, նրա պատիվը, բարի համբավը կամ արժանապատվությունն արատավորելու միջոցով ոչ գույքային վճառ պատճառելու դեպքերում այդ անձն իրավունք ունի պահանջելու դրամական միջոցներով հասուցում կամ առաջացած հետևանքների վերացում պատճառված ոչ գույքային վճառ համարժեք չափով։

Արդարադատություն իրականացնելիս պատճառված վճառը հասուցվում է միայն այն դեպքում, եթե դատավորի մեղքը հաստատվել է օրինական ուժի մեջ մտած դատավճռով։ (ՀՀ Քաղաքացիական օրենսգրքը, հոդված 1064-րդ, մաս 3):

Պետական և տեղական ինքնակառավարման մարմնների ծառայողների փոխարեն վճառ փոխառուցումը ՀՀ-ի կամ համայնքի կողմից բնավ էլ չի ազատում պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնների ծառայողներին նյութական պատասխանատվությունից հետադարձ (ռեզընիվ) կարգով, այսինքն՝ նրանք ՀՀ-ի, համայնքի կամ համապատասխան մարմնի պահանջով պարտավոր են հասուցել իրենց կողմից հասցված վճառի հասուցման համար կատարված ծախսը։

Կարծում ենք, որ պետական ծառայողներին նյութական պատասխանատվության ենթարկելու վերը նշված կարգավորումն ունի գործնականում խնդիրներ առաջացնելու ունակ բերություն։ Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ իրավական կարգավորման նման պայմաններում օրենսդիրը սահմանել է, որ ՀՀ-ն փոխառուցում է քաղաքացուն կամ իրավաբանական անձին պետական մարմնիների, տեղական ինքնակառավարման մարմնիների կամ դրանց պաշտոնատար անձանց ապօրինի, այլ իրավաչափ գործողություններով պատճառված վճառը։ Կարծում ենք, որ օրենսդրությունները պետք է կարգավորվեն այն հարաբերությունները, եթե քաղաքացուն կամ իրավաբանական անձին վճառ է պատճառվում ոչ միայն պետական մարմնիների, տեղական ինքնակառավարման մարմնիների կամ դրանց պաշտոնատար անձանց ապօրինի, այլև իրավաչափ գործողություններով։ Այդպիսի իրավիճակների առաջացումը բավականին հավանական է հատկապես ոստիկանությունում ծառայողների ծառայողական գործունեության ընթացքում հանցագործությունների հայտնաբերման, բացահայտման, հանցանք կատարած անձանց ձերբակալման, նրանց գործողությունների նախականիման և կանխման ընթացքում։ Այս առթիվ գտնում ենք, որ անհրաժեշտ է համաձայնել Ս.Վ.Սուլլունայի կարծիքին, որ պետությունը պարտավոր է պատճառված նյութական վճառ համար նյութական պատասխանատվություն կրել հանցագործությունների բացահայտման և քննության «զոհ» դարձած քաղաքացիների առաջ³։

Որպես կանոն պետական ծառայողների կարգապահական պատասխանատվության տակ նկատի է առնվում համապատասխան հիմքերի առկայության դեպքում պետական ծառայողների կարգապահական տույժերի կիրառու-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

մը⁴: «Հ օրենսդրությունը պետական ծառայողների յուրաքանչյուր տեսակի համար նախատեսում է կարգապահական պատասխանատվության ենթարկելու հատուկ հիմքեր, տույժեր և կարգ:

Կարգապահական պատասխանատվության հիմքը կարգապահական խախտումն է:

Այն հանգամանքը, որ պատասխանատվության այս ձևը գործնականում պետական ծառայողների նկատմամբ առավել հաճախ կիրառվող պատասխանատվության ձևն է, իրավաբան զիտնականներին դեռևս 20-րդ դարի 60-ական թվականներին հիմք է տվել եզրահանգելու, որ կարգապահական պատասխանատվությունը պետական ծառայողների պատասխանատվության հիմնական ձևն է⁵: Այս մոտեցմանը դժվար է շիամածայնել: Իրականում պետական ծառայողների նկատմամբ պատասխանատվության այս տեսակի կիրառման հավանականությունը առավել մեծ է, քան վարչական, առավել ևս քրեական պատասխանատվության: Պետական ծառայողների գերակշիռ մասը ծառայողական գործունության ընթացքում ձգտում է բույլ շտալ լուրջ իրավախսությունը, որոնք կապարունակեն հանցագործության հատկանիշներ՝ այդ ընթացքում տարբեր պատճառներով բույլ տալով արարքներ, որոնք կարդ են որակվել որպես կարգապահական խախտումներ: Այս իրավիճակը թելադրվում է պետական կառավարչական գործունեության բնույթից, որով գրադաւում են պետական ծառայողները:

Այս ամենի թվում, ցավոք սրտի, պետք է համաձայնել Ա.Ա.Գրիշկովցի հետ նրանում, որ հետխորհրդային ժամանակաշրջանում դեռևս ակնհայտորեն ամբողջությամբ չի ընկալվում կարգապահական պատասխանատվության խթանիչ ներուժը և հետևաբար այն ողջ ծավալով չի օգտագործվում⁶:

Կարգապահական պատասխանատվության բնորոշ առանձնահատկությունը կայանում է նրանում, որ նրա միջոցները՝ կարգապահական տույժերը, կարգապահական զանցանք կատարած պետական ծառայողների նկատմամբ կիրառվում են անձին պաշտոնի նշանակելու իրավասությամբ օժտված վերաբաս մարմնի կամ պաշտոնատար անձի կողմից ենթակայության կարգով:

Հանրային ծառայողների կարգապահական պատասխանատվության ընդհանուր հիմքերը սահմանված են «Հանրային ծառայության մասին»

ՀՀ օրենքով: Մասնավորապես այդպիսիք են ծառայողական պարտականություններն անհարգելի պատճառով չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, ծառայողական լիազորությունները վերազնցելու, աշխատանքային կարգապահական ներքին կանոնները խախտելու:

Հանրային ծառայողների նկատմամբ կիրառվող կարգապահական տույժերի տեսակները, դրանք կիրառելու կարգը և դրա հետ կապված այլ հարաբերությունները կարգավորվում են պետական ծառայության առանձին տեսակները, ինչպես նաև համայնքային ծառայությունը կարգավորող ՀՀ օրենքներով և այլ իրավական ակտերով:

Ոստիկանությունում ծառայողների նկատմամբ կիրառվող պատասխանատվության տեսակների համակարգում մյուսների հետ համեմատած կարգապահական պատասխանատվությունը կիրառվում է առավել հաճախ, և այն ունի բավական մեծ կիրառական նշանակություն:

Կարգապահական խախտման՝ ծառայողական պարտականություններն անհարգելի պատճառով չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, ծառայողական դիրքն ի չարք գործադրելու, ինչպես նաև ծառայողական լիազորությունները վերազնցնելու դեպքերում, եթե դրանք չեն պարունակում քրեորեն պատժելի արարքի հատկանիշներ, օրենքով սահմանված կարգով ոստիկանության ծառայողի նկատմամբ կիրառվում են հետևյալ կարգապահական տույժերը՝

- 1) նկատողություն,
- 2) խիստ նկատողություն,
- 3) 10-50 տոկոսով պաշտոնային դրույքաշափի իջեցում մինչև 3 ամիս ժամանակով,
- 4) զգուշացում պաշտոնին ոչ լրիվ համապատասխանելու մասին,

5) պաշտոնի իջեցում մեկ աստիճանով,

6) կոչման իջեցում մեկ աստիճանով,

7) ոստիկանությունից ազատում:

Օրենքով կարգապահական պատասխանատվության լրացուցիչ հիմքեր են նախատեսվում ոստիկանության ուսումնական հաստատությունում առկա ուսուցման սովորողների համար: Այսպես, կարգապահական խախտման, այն է՝ ուսումնական պարապմունքներից անհարգելի բացակայության, ինչպես նաև պարբերաբար ուշանալու համար վերջիններիս նկատմամբ բացի «նկատողություն» և «խիստ նկատողություն» տույժերից

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Կարող են կիրառվել «արտահերթ վերակարգի հայտարարում» և «ազատում ոստիկանության ուսումնական հաստատությունից» տույժերը:

Ոստիկանության ծառայողներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու ընթացքում առաջացող հարաբերությունները կարգավորող նորմերի ուսումնասիրությունը վկայում է, որ օրենսդիրը, ելնելով վտանգավորության աստիճանից, դասակարգել է կոպիտ և ոչ կոպիտ կարգապահական խախտումներ: Կարգապահական կոպիտ խախտումներ են համարվում քաղաքացիների սահմանադրական իրավունքները ուժմահարելը, ծառայողական գաղտնիք պարունակող տեղեկությունները, ծառայողների և այլ անձանց անհատական տվյալներն ապօրինաբար օգտագործելը կամ հրապարակելը՝ փոխանցելը, հաղորդելը, տրամադրելը, առաքելը, ինչպես նաև որևէ ձևով մատչելի դարձնելն այն անձանց, ովքեր այդպիսի տեղեկություններին առնչվելու բույլտվություն չունեն, իր և այլոց համար անօրինական եկամուտներ ստանալու կամ այլ անձնական դրդապատճառներով պաշտոնեական դիրքն օգտագործելը, ինչպես նաև կամայականություն դրսորելը, ոգելից խմիչքներ օգտագործած վիճակում ծառայության մեջ գտնվելը, քմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր օգտագործելը, առանց հարգելի պատճառների ամբողջ աշխատանքային օրվա (հերթապահության) ընթացքում ծառայության չներկայանալը, ծառայության վայրում գույք հափշտակելը, գույքը դիտավորությամբ ոչնչացնելը կամ վնասելը, ոստիկանության ծառայողի պատիվն ու արժանապատվությունը արատավորելը կամ նրա նկատմամբ ֆիզիկական բռնություն գործադրելը, ծառայողական քննության ընթացքում բժշկական ստուգումից, արյան, մազերի, մարմնի արտաքրությունների նմուշներ հանձնելուց հրաժարվելը կամ ամենամյա կանխարգելիչ բժշկական քննությունից խուսափելը, դեկավարի (ուղղակի կամ անմիջական) իրավասության սահմաններում տրված հրամանները, ցուցումները, հանձնարարականները երկու կամ ավելի անգամ դիտավորությամբ չկատարելը: Ոստիկանության ծառայողների նկատմամբ «ոստիկանությունից ազատում» կարգապահական տույժը կարող է նշանակվել միայն կարգապահական կոպիտ խախտումների համար:

ՀՀ ոստիկանության ծառայողներին կարգապահական պատասխանատվության ենթարկե-

լու ընթացքում դրա հիմնավորվածությունը, արդյունավետությունը, նպատակայնությունը ապահովելու, կարգապահական տույժի անհարկի կիրառումը բացառելու և դրա ընթացքում ծառայողի իրավունքների ուժնահարումը բացառելու նպատակով սահմանված է կարգապահական տույժեր կիրառելու կարգն ու պայմանները:

Նման դեպքում մինչև կարգապահական տույժ նշանակելու կարգապահական տույժ կիրառելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը կարգապահական խախտման վերաբերյալ պետք է գրավոր բացատրություն պահանջի կարգապահական խախտում բույլ տված ծառայողից: Տույժը նշանակվում է, եթե երեք ամսից ավելի չի անցել կարգապահական խախտման հայտնաբերման, այսինքն՝ ծառայողական քննություն նշանակելու օրվանից՝ չհաշված նախնական քննության կամ դատական քննության ժամանակատվածը, հիվանդությունը կամ արձակուրդում գտնվելը. ընդունում, նշանակվող տույժը պետք է համապատասխանի կատարված խախտման բնույթին և վտանգավորության աստիճանին: Այն չի կարող կիրառվել, եթե կարգապահական խախտումը կատարելու օրվանից անցել է մեկ տարի: Կարգապահական յուրաքանչյուր խախտման համար կարող է նշանակվել մեկ տույժ, որի մասին ծառայողը տեղեկացվում է դրա նշանակումից հետո՝ հնգօրյա ժամկետում:

Եթե կարգապահական տույժ նշանակելու օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, ծառայողը նոր կարգապահական տույժի չի ենթարկվել, ապա տույժը համարվում է մարված: Այն կարող է հանվել նաև մինչև մեկ տարին լրանալը, եթե ծառայողը բույլ չի տվել կարգապահական նոր խախտում:

Բացառիկ դեպքերում մեկից ավելի կարգապահական տույժերը կարող են հանվել պետական կառավարման մարմնի դեկավարի կողմից, սույն օրենքի 41-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված կարգով:

Ոստիկանության ծառայողների նկատմամբ, բացառությամբ ոստիկանության կրտսեր խմբի պաշտոնները գրադեգող և ոստիկանության կրտսեր կոչումներ ունեցող ծառայողների, կարգապահական տույժերը կիրառվում են ծառայողական քննության արդյունքների հիման վրա:

Ծառայողական քննությունը օրենքով սահ-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

մանված դեպքերում և կարգով ոստիկանության ծառայողի պարտականությունների կատարմանը, նրա գործունեությանն ու դրսերած վարքագծին առնչվող հարցերի քննությունն է: Դրա խնդիրներն են՝

ա) ոստիկանությունում սկզբունքների իրականացում,

բ) ծառայողական կարգապահության ամրապնդում,

գ) ոստիկանության ծառայողի կողմից կատարված կարգապահական և էքիլայի կանոնների խախտման յուրաքանչյուր դեպքի ժամանակին բացահայտում,

դ) կարգապահական խախտումների կանխարգելում և կարգապահական խախտում ծնող պատճառների ու դրանց նպաստող պայմանների վերացում,

ե) ոստիկանության ծառայողների իրավունքների միջնորդական պաշտպանություն,

զ) կարգապահական խախտման հանգամանքների ժամանակին, լրիվ, բազմակողմանի և օրյեկտիվ պարզաբնում,

է) անհիմն կերպով կարգապահական պատասխանատվության ենթարկված ոստիկանության ծառայողի հեղինակության վերականգնում:

Ծառայողական քննություն իրենց իրավասության սահմաններում կարող են կատարել ոստիկանության բոլոր ինքնուրույն ստորաբաժանումների դեկալարմները:

Ոստիկանության գլխավոր և բարձրագույն խմբի պաշտոնները գրադարձնող ծառայողների նկատմամբ ծառայողական քննությունը կատարում են ոստիկանության կենտրոնական ապարատի ծառայողական քննություններ իրականացնելու հիմնական իրավասություն ունեցող ստորաբաժանումը կամ ոստիկանության պատճառների գրադարձնող ծառայողների նկատմամբ:

Ոստիկանության ստորաբաժանումներում կրտսեր, միջին և ավագ խմբի պաշտոններ գրադարձնող ծառայողի նկատմամբ ծառայողական քննություն կատարելիս ոստիկանության գլխավոր և բարձրագույն խմբի պաշտոններ գրադարձնող ծառայողների կողմից կարգապահական խախտում քույլ տալու փաստեր հայտնաբերելու դեպքում ծա-

ռայողական քննության նյութերը ոստիկանության պետի հանձնարարությամբ ուղարկվում են ոստիկանության կենտրոնական ապարատի ծառայողական քննություններ իրականացնելու հիմնական իրավասություն ունեցող ստորաբաժանում կամ ոստիկանության պետի հանձնարարությամբ՝ ոստիկանության կենտրոնական ապարատի այլ ծառայություն:

Ոստիկանության նախաքննական մարմնների և հատուկ ծառայությունների ծառայողների նկատմամբ ծառայողական քննություն հանձնապատասխանաբար կատարում են նախաքննական մարմնները և հատուկ ծառայությունները կամ ոստիկանության պետի լիազորած ծառայությունը:

Ոստիկանության պետի ցուցումով ոստիկանության ստորաբաժանումներում կատարվող ծառայողական քննության նյութերը ցանկացած փուլում կարող են փոխանցվել ոստիկանության կենտրոնական ապարատի ծառայողական քննություններ իրականացնելու հիմնական իրավասություն ունեցող ստորաբաժանում կամ ոստիկանության կենտրոնական ապարատի այլ ծառայություն և (կամ) ոստիկանության մարզային վարչություններ՝ հետագա ընթացքը սույն օրենքով սահմանված կարգով լուծելու համար:

Ոստիկանության կենտրոնական ապարատի ծառայողական քննություն իրականացնելու հիմնական իրավասություն ունեցող ստորաբաժանմանը ծառայողական քննություն կատարելու ցուցում տալու իրավունք ունեն ոստիկանության պետը կամ նրա տեղակալները՝ իրենց սպասարկման ոլորտում կատարված կարգապահական խախտումների դեպքերում (բացառությամբ գլխավոր և բարձրագույն խմբի պաշտոններ գրադարձնող ծառայողների նկատմամբ):

Ծառայողական քննության նյութերը, դրա արդյունքներով կազմված եզրակացությունը ներկայացվում են ծառայողական քննությունը նշանակող անձին՝ հանձնապատասխան որոշում ընդունելու համար:

Օրենսդիրը կարգապահական կոպիտ խախտում կատարելու համար նախատեսում է նաև ոստիկանության ծառայողի նկատմամբ ոստիկանությունից ազատում կարգապահական տույժ կիրառելու հնարավորություն: Այդ ընթացքում ոստիկանության ծառայողների իրակունքների երաշխավորման համար սահմանվել է, որ նման

խախտումների առիթով իրականացված ծառայողական քննության նյութերը, դրա արդյունքներով կազմված եզրակացությունը մինչև համապատասխան որոշում ընդունելու համար ծառայողական քննություն նշանակող անձին ներկայացնելը քննության են առնվում ոստիկանության կարգապահական հանձնաժողովում: Վերջինս կաշկանդված չէ ծառայողական քննության նյութերով և կարող է ծառայողական քննություն իրականացնող անձից սեփական նախաձեռնությամբ պահանջել լրացուցիչ մեղադրական փաստական տվյալներ, ինչպես նաև կարգապահական խախտում կատարելու մեջ մեղադրվող ոստիկանության ծառայողի միջնորդությամբ կամ սեփական նախաձեռնությամբ կրկին լսել այլ անձանց բացատրությունները, ինտարզութել կարգապահական խախտում կատարելու մեջ մեղադրվող ոստիկանության ծառայողի լրացուցիչ ներկայացրած փաստական տվյալները:

Կարգապահական հանձնաժողովի կազմում բացի ոստիկանության ծառայողներից՝ ընդգրկվում են նաև պետական այլ մարմինների, ինչպես նաև հասարակական միավորումների ներկայացուցիչներ: Նրա կողմից կայացվող որոշումները իրապարակային են: Հանձնաժողովի կազմը և աշխատակարգը սահմանում է ՀՀ կառավարությունը:

ՀՀ օրենսդրությունը ոստիկանության ծառայողներին քրեական պատասխանատվության ենթարկելու համար առանձնահատկություններ չի նախատեսում, և վերջիններս՝ որպես հանցագործության հատուկ սուբյեկտ՝ պաշտոնատար անձ, պաշտոնատար անձ համարվող պետական այլ ծառայողների նման քրեական պատասխանատվության են ենթակա ՀՀ քրեական օրենսգրքի 29-րդ գլխով նախատեսված պետական ծառայության դեմ ուղղված հանցագործություններից (պաշտոնե-

ական լիազորությունները չարաշահելը՝ հոդված 308, պաշտոնեական լիազորություններն անցնելը՝ հոդված 309, ձեռնարկատիրական գործունեությանը ապօրինի մասնակցելը՝ հոդված 310, կաշառը ստանալը՝ հոդված 311, պաշտոնեական կեղծիք՝ հոդված 314, պաշտոնեական անվորություն՝ հոդված 315) որևէ մեկը կատարելու համար: Միաժամանակ պետք է նշել, որ ՀՀ ոստիկանության որոշ ստորաբաժանումների ծառայողները՝ քննիչները և հետաքննություն կատարող անձինք, քրեական պատասխանատվության են ենթակա նաև արդարադատության իրականացման դեմ ուղղված հանցագործություններից ցուցմուր տալուն հարկադրելու՝ հոդված 341-րդ, ապօրինի ձերբակալելու կամ կալանավորելու՝ հոդված 348-րդ, ապացույցներ կեղծելու՝ հոդված 349-րդ, կամ քրեական պատասխանատվությունից ապօրինի ազատելու՝ հոդված 351-րդ, համար:

Ոստիկանության ծառայողների կողմից՝ որպես պետական հատուկ ծառայություն իրականացնող անձանց կողմից, իրենց պաշտոնական դիրքի կապակցությամբ հանցագործությամբ կամ նրանց կատարած հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերով նախաքննությունը իրականացնում են ՀՀ հատուկ քննչական ծառայության քննիչները⁷:

Հանցագործություն կատարելու համար ազատազրկման դատապարտվելու դեպքում որպես իրավապահ մարմնի աշխատակիցներ՝ ոստիկանության ծառայողներ կամ նախկին ծառայողներ, ինչպես նաև ոստիկանության զինծառայող կամ նախկին զինծառայող, դատապարտյալները ուղղիչ հիմնարկում անջատ են պահպում այլ դատապարտյալներից⁸:

¹ Տե՛ս 2011թ-ի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության և երկրում մարդու իրավունքների ու իմանարար ազատությունների խախտման մասին տարեկան գեկույց, Երևան 2012թ. 135 էջից, էջ 84-89:

² Տե՛ս Վարչական իրավախսախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքը, ՀՍՍՀ Գ 1985/23, 01.06.1986թ., 14-րդ հոդվածը:

³ Տե՛ս Супрун С.В. “Возмещение материального ущерба, причиненного гражданином при раскрытии и расследовании преступлений”; Автореф. Дис. ... канд юрид. наук. Омск, 2001. С. 23.

⁴ Տե՛ս Драгомиров М.И. “Дисциплина, субординация, чинопочитание” // Избранные труды. М., 1956, С. 51.

⁵ Տե՛ս Манохин В.М. “Советская государственная служба”. М., Юридическая литература. 1966. С. 155.

ԱՐԴԱՐԱՎԱԾՈՒԹՅՈՒՆ

⁶ Տե՛ս Գրիշկովը Ա.Ա. “Проблемы правового регулирования и организации государственной гражданской службы в Российской Федерации”. Дис....доктора юрид. наук. М., 2004.

⁷ Տե՛ս ՀՀ քրեական դատավարության օրենսգիրը հոդված 190-րդ մաս 6-րդ, ՀՀ ՊՍ 22(55) 21.09.1998.

⁸ Տե՛ս ՀՀ քրեական օրենսգիրը հոդված 68-րդ 1-ին մաս կետ 4-րդ, ՀՀ ՊՍ 8(380), 31.01.2005.

РЕЗЮМЕ

Особенности ответственности сотрудников полиции Республики Армении

Институт юридической ответственности является неотъемлемой частью института полицейской службы и представляет из себя совокупность таких правовых норм, которые определяют как основы, так и виды ответственности сотрудников полиции и процедуры их применения.

В этой статье представлены виды и особенности юридической ответственности сотрудников полиции за неисполнение или ненадлежащее исполнение ими своих служебных обязанностей.

SUMMARY

The peculiarities of accountability of RA police servants

The legal institute of accountability of the Police servants is a constituent part of the legal institute of the police service. It is, in fact, a set of legal norms which define the bases, types and ways of the application of accountability of this special type of servants.

The current article dwells upon the types and the characteristics of legal accountability that the police servants have to face in case of negligence of responsibilities or their improper realization.

ՎԱՀԵ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

ՀՀ փաստաբանների պալատի անդամ

ՀԱՆՁԱԿԱԶՄԻ ՍՈՒԲՅԵԿՏԻՎ ԿՈՂՄԻ ՖԱԿՈՒԼՏԱՏԻՎ ՀԱՏԿԱՆԻԾԵՐԸ

Հանցակազմի սուբյեկտիվ կողմի ֆակուլտատիվ (ոչ պարտադիր) հատկանիշների էությունը հասկանալու համար նախ պետք է բացահայտել սուբյեկտիվ կողմի և նրա հատկանիշների էությունը:

Հանցագործության սուբյեկտիվ կողմը անձի գիտակցական և կամային ոլորտներում ընթացող ներքին գործընթացների արտացոլումն է, հանցանք կատարած անձի հոգեբանական վերաբերմունքն իր արարքի նկատմամբ: Այն չափազանց բարդ երևոյթ է: Հանցագործության սուբյեկտիվ կողմը կազմող հատկանիշների քվին են դասվում մեղքը, շարժառիթը, նպատակը, ինչպես նաև անձի հուզական վիճակը հանցագործության կատարման պահին:

Հանցակազմի սուբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշը մեղքն է: Մեղքը անձի հոգեբանական վերաբերմունքն է իր կողմից կատարվող հանրուեն վտանգավոր արարքի (գործողության կամ անգործության) և դրա վտանգավոր հետևանքների նկատմամբ, որը դրսնորվում է դիտավորության կամ անզգուշության ձևով: Մեղքի, ինչպես դիտավորության, այնպես էլ անզգուշության բնորոշման ժամանակ օրենսդիրը օգտագործում է միայն երկու հոգեբանական հասկացություններ, ինչպիսիք են գիտակցությունը և կամքը (գիտակցում է, ցանկանում է, գիտակցարար բույլ է տալիս): Փաստորեն անձի հուզական վիճակը դիտավորության և անզգուշության քրեահիրավական բնորոշման առումով օրենսդիր կողմից չի նպաստեսվում: Այն դեպքում, եթե հանցագործության շարժառիթը՝ որպես հանցանք կատարելու որոշակի պահանջունքներով պայմանավորված ներքին մրում, շատ դեպքերում դրսնորվում է անձի հոգեկան վիճակով պայմանավորված հուզական գործընթացով: Առանձին դեպքերում հանցանք կատարող անձի հուզական վիճակը ձեռք է բերում ինքնուրույն քրեահիրավական նշանակություն (օրինակ՝ աֆեկտի դեպքում): Ինչպես մեղքը, հանցագործության նպատակը ևս սահմանափակվում է միայն արարքի գիտակցածու-

թյան և կամային բնույթով:

Այսպիսով, մեղքը հանցակազմի սուբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշն է, առանց մեղքի չկա և չի կարող լինել հանցագործության հանցակազմը: Այն սուբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշն է, որը բույլ է տալիս հանցավոր արարքը տարբերել ոչ հանցավոր արարքից: Սա է պատճառը, որ օրենսդիրը անշափ մեծ տեղ է հատկացրել մեղքին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 9-րդ հոդվածում ամրագրելով, որ անձը ենթակա է քրեական պատասխանատվության միայն հանրության համար վտանգավոր այնպիսի գործողության կամ անգործության և հանրության համար վտանգավոր հետևանքների համար, որոնց վերաբերյալ նրա մեղքը հաստատված է իրավասու դատարանի կողմից:

Նույն հոդվածի 2-րդ մասում սահմանված է, որ օրյեկտիվ մեղսայնացումը՝ առանց մեղքի վեաս պատճառելու համար քրեական պատասխանատվությունը, արգելվում է:

Քրեական իրավունքի տեսությունը, ինչպես նաև դատական պրակտիկան ելնում է նրանից, որ ըստ մեղքի պատասխանատվության սկզբունքը չի սահմանափակվում միայն անձի հոգեբանական վերաբերմունքով (որը դրսնորվում է դիտավորությամբ կամ անզգուշությամբ) կատարվող հանրուեն վտանգավոր արարքի (գործողության կամ անգործության) հանդեպ, այլև հնարավոր վտանգավոր հետևանքների նկատմամբ: Կատարվող հանցագործության յուրաքանչյուր հանգամանք, հատկապես ծանրացնող, կարող է ներառվել մեղադրանքի ծավալում միայն այն դեպքում, եթե դրանց առաջացնան կապակցությամբ դատարանի որոշմամբ հիմնավորված կլինի անձի մեղքը, այսինքն՝ անձի հոգեբանական վերաբերմունքը հանրուեն վտանգավոր հետևանքների առաջացման նկատմամբ՝ դրսնորված դիտավորությամբ կամ անզգուշությամբ:

Ի տարբերություն մեղքի՝ հանցագործության շարժառիթը, նպատակը և հույզերը հանդի-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

սանում են հանցակազմի սուբյեկտիվ կողմի ֆակուլտատիվ հատկանիշներ:

Անհրաժեշտ է ընդգծել, որ նախաքննության մարմինների և դատարանների պրակտիկայում հանցակազմի բոլոր հատկանիշներից հատկապես բարդ է հանցակազմի սուբյեկտիվ կողմի հավատումը: Եվ սա հասկանալի է, քանի որ կարողանալ հասկանալ հանցանք կատարած անձի մտքերը, մտադրությունները, ցանկությունները, զգացմունքները շատ ավելի բարդ են, քան որոշել հանցագործության օբյեկտիվ հանգամանքները: Վերը նշված պատճառներով էլ բացատրվում է հանցագործության կատարման ժամանակ հանցավորի շարժառիթը, նպատակը և հույզերը բացահայտելու անհրաժեշտությունը:

1. Հանցակազմի սուբյեկտիվ կողմի ֆակուլտատիվ հատկանիշների հասկացությունը

Սեղքի հետ միասին մարդու ներքին աշխարհը կատարված արարքի հետ փոխկապակցված է շարժառիթի, նպատակի և հույզերի միջոցով: Սուբյեկտիվ կողմի այս հատկանիշները օրենսդրի կողմից նախատեսվում են ոչ բոլոր հանցագործություններում, սակայն այն դեպքում, եթե դրանք, կամ դրանցից մեկը նախատեսված են հանցակազմում, ապա այդ հատկանիշները արդեն ստանում են պարտադիր բնույթ, և դրանց բացակայությունը առաջացնում է նաև քրեական պատասխանատվության ենթարկելու անհնարինություն: Սակայն բոլոր հանցագործությունների պարագայում էլ սուբյեկտիվ կողմի ֆակուլտատիվ հատկանիշները, չինելով պարտադիր, այնուամենայնիվ արդարացի պատիժ նշանակելու առումով էական նշանակություն ունեն՝ հանդես գալով որպես պատիժը ծանրացնող կամ մեղմացնող հանգամանք:

Հետևաբար սուբյեկտիվ մեղսունակության հիմքերը և սահմանները կախված են ոչ միայն մեղքի ձևից և բովանդակությունից, այլև մեծամասնը այլ հոգեբանական հանգամանքներից, մասնավորապես՝ շարժառիթից և նպատակից: Շատ դեպքերում առանց հանցագործության շարժառիթը և նպատակը բացահայտելու հնարավոր չի լինում որոշել անձի մերքի բովանդակությունը, հանցավոր արարքը սահմանազատել իրավաչափ գործողությունից¹:

Այսպիսով, հանցագործության շարժառիթի և նպատակի բացահայտումը հանդիսանում է հան-

ցակազմի պարտադիր պայման: Այսպես իրավաբանական գրականության մեջ երկար ժամանակ խոլիգանությունը համարվում էր անշարժառիթ հանցագործություն, սակայն վերջերս մի շարք քրեագետներ որպես խոլիգանության շարժառիթ նշում են անձի ինքնահաստատվելու պահանջմունքը:

Սուբյեկտիվ մեղսունակության ծավալը, բովանդակությունը, սահմանները շատ դեպքերում կախված են դրսերված շարժառիթի, նպատակի և հույզերի առանձնահատկություններից, վերջիններիս ձևավորման մեխանիզմից, փոխկապակցվածության պայմաններից և այլն:

2. Շարժառիթը դիտավորությամբ կատարվող հանցագործություններում

Իրավաբանական գրականության մեջ հանցագործության շարժառիթի հասկացության վերաբերյալ միանշանակ ձևակերպում չկա:

Համարդելով գրականությունում առկա մոտեցումները՝ կարելի է տալ հետևյալ ձևակերպումը. հանցագործության շարժառիթը անձի գիտակցական միուն է, որով անձն առաջնորդվել է հանցագործության կատարման ժամանակ, այլ կերպ ասած, հանցագործության շարժառիթը հանցանք կատարելու որոշակի պահանջմունքներով պայմանավորված ներքին միուն է, նպատակին հասնելու ցանկությունը:

Այսուամենայնիվ, չնայած շարժառիթի ծագումնաբանության մասին բազմաթիվ գիտականների միմյանցից տարբերվող մոտեցումներին՝ նրանք բոլորն էլ միակարծիք են այն հարցում, որ շարժառիթը հանդիսանում է հանցավոր պահկածքի² այնպիսի միուն, որը իրենից ներկայացնում է վերջինս ներքին շարժիչ ուժը, այդ պահկածքի ձևավորման աղբյուրը:

Մարդկային յուրաքանչյուր արարք հիմնականում կատարվում է միաժամանակ մի քանի շարժառիթներով: Սակայն դրանցից մեկը յուրաքանչյուր կոնկրետ դեպքում հանդիսանում է արարքի գիտավոր շարժառիթը:

Այս առումով կարևոր նշանակություն ունի այն հանգամանքը, որ շարժառիթը բացահայտում է անձի ձգտումը իրականացնելու որոշակի գործողություններ (անգործություն), ի տարբերություն զգացմունքի՝ այն հանդես է գալիս կոնկրետ ընդգծված բնույթով և հանդիսանում է տվյալ գործողու-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

թյանը (անգործություն) դրդող ուժի:

Որպես կանոն անձը ամբողջությամբ չի գիտակցում արարքի իրական շարժառիթները: Արարքների շարժառիթների բացահայտման բարդ բնույթը հաճախ անդրադառում է իրավապահ մարմինների և դատարանի կողմից հանցագործությունների ճիշտ որակման վրա: Վերջիններս անհրաժեշտ ուշադրություն չեն դարձնում հանցագործության իրական շարժառիթների և նպատակների բացահայտմանը՝ բավարարվելով միայն դրանց արտաքին հատկանիշների վերլուծությամբ: Դրա արդյունքում ոչ միայն հանցագործություններն են սխալ որակվում, այլև դա ազդում է քրեական պատասխանատվության և պատժի անհատականացման վրա:

Դիտավորությամբ կատարվող հանցագործություններում շարժառիթները կարող են հանդես գալ որպես հիմանական հատկանիշ կամ որպես ծանրացնող հանցամանքներով գործորդված հանցակազմի հատկանիշ (որպես ծանրացնող հանցամանք):⁴

Իրավաբանական գրականության մեջ առկա են հանցագործության շարժառիթի դասակարգման տարրեր մոտեցումներ՝ ըստ հասարակական վտանգավորության բնույթի, ուղղվածության, ըստ դրանց վտանգավորության աստիճանի և այլն: Պետք է նշել, որ հանցագործության շարժառիթի դասակարգումը հարաբերական է:

Հանցագործության շարժառիթները կարելի է դասակարգել ըստ հանցագործությունների ծանրության աստիճանի:

ա) հակահասարակական շարժառիթներ՝ քաղաքական, շահադիտական, ազրեսիվ բռնությամբ պայմանավորված,

բ) կեղծ հասարակական շարժառիթներ՝ առանձին հասարակական խմբերի շահերով պայմանավորված,

գ) շարժառիթներ, որոնք հասարակության կողմից ընդունված են, սակայն արարքի կատարման ընթացքում վեր են ածվում հակահասարակականի (հանցանք կատարած անձին բռնելու համար անհրաժեշտ միջոցների սահմանազանցումը):

Ըստավիքները, լինելով մարդու ինքնինակի մասնիկներ, սերտորեն կապված են արտաքին աշխարհի հետ: Դա, այսպես ասած, շարժառիթի գենետիկ կապն է արտաքին աշխարհի հետ. ինչպիսին աշխարհն է, այդպիսին էլ շարժառիթ-

ներն են:

Այնուամենայնիվ, գոյություն ունի նաև մեկ այլ, այսպես ասած, ֆունկցիոնալ կապ շարժառիթի և արտաքին աշխարհի միջև. դա կապն է դրդող ուժի և առարկայի միջև:

Այլ կերպ ասած, շարժառիթը ոչ միայն զուտ սուրյեկտիվ կատեգորիա է՝ արտաքին աշխարհի հետ որևէ առնչություն չունեցող, այլ շարժառիթը անձի սուրյեկտիվ հակազդեցությունն է, որն առաջանում է արտաքին աշխարհի հանդեպ մարդու վերաբերմունքից: Հենց այդ պահից էլ առաջանում է ցանկությունը, և առարկան սկսում է մարդուն դրդել գործողությունների:

Վերոգրյալից հետևում է, որ մարդու վարքագծի մեջ շարժառիթը իրականացնում է բազմաբնույթ գործառություններ, որոնցից գլխավորները երկուսն են՝ դրդող և միտքը ձևավորող:⁵

Շարժառիթի դրդող կողմը կարելի է բնութագրել որպես գործողության դրսերման ընթացքում կամքի ձևավորման և ուղղորդման աղբյուր: Այս պատճառով է, որ շարժառիթը համարում են գործողության կատարման ներքին շարժիչ ուժը:

Շարժառիթի՝ որպես անձի միտքը ձևավորող կողմի դերը անշափ մեծ և բարդ է, քանի որ այս փուլում անձի ներաշխարհում առաջանում է նպատակը. անձը սկսում է զնահատել առաջացած մղումները՝ ելնելով սոցիալական պահանջներից և նշանակությունից: Մղումների առարկայացման ընթացքում կատարվում է ընտրություն:

Հենց շարժառիթի միտքը ձևավորող գործառույթը թույլ է տալիս ուսումնասիրել վերջինիս սոցիալական հատկանիշները, կարողանալ սահմանազատել շարժառիթները մեկը մյուսից կամ որոշել նույն շարժառիթի տեսակը:

Այս գործառույթը մեզ հնարավորություն է տալիս դասակարգելու հանցագործությունների շարժառիթները:

Այսպիսով, հանցագործության շարժառիթը պետք է հաշվի առնել հանցագործության որակման ժամանակ, պատժի նշանակման բնույթի և չափի ընտրության հարցում:

Հանցագործության որակման վրա ազդում են այն շարժառիթները, որոնք հանցակազմում նախատեսված են որպես սուրյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշներ:

Կարծում ենք, որ հանցագործության շարժառիթը բոլոր դեպքերում պետք է հաշվի առնել՝

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

քրեական պատասխանատվության ենթարկելու կամ քրեական պատասխանատվությունից ազատելու հարցը լուծելիս, պատիժը նշանակելիս:

3. Նպատակը դիտավորությամբ կատարվող հանցագործություններում

Սուբյեկտի մեղավորությունը որոշելու առումով ոչ պակաս կարևոր դեր է խաղում նաև հանցագործության նպատակը: Ինչպես արդեն նշել ենք, անձի վարքագիծը պայմանավորված է ոչ միայն շարժադիրով, այլև նպատակով՝ այն ցանկալի արդյունքների պատկերացումով, որին ձգտում է հասնել անձը՝ կատարելով այս կամ այն գործողությունը:

Ցանկացած գործողության տարբերակից հատկանիշը դրա նպատակաւողվածությունն է: Մարդը մինչ որևէ գործողություն կատարելը ձևավորում է նպատակ (արդյունք, պատկեր), որին ձգտում է հասնել իր կողմից կատարվող արարքների միջոցով:

Որպես հոգեբանական երևոյթ՝ նպատակը սերտորեն կապված է շարժադիրի հետ և կարծես հանդես է գալիս որպես արարքի կատարման մող հիմնական գիտակցական ուժ: Սակայն պետք է նշել, որ նրանք բնութագրում են հանցագործության ընթացքի տարբեր կողմեր: Չարժադիրը պատասխանում է այն հարցին, թե ինչո՞ւ է մարդը կատարում այս կամ այն գործողությունը, իսկ նպատակը՝ թե ինչի համար է այն կատարվում: Նպատակը որոշում է գործողության ուղղությունը, այն մեծապես բնութագրում է արարքը, քան անձին: Ֆ. Գ. Գիլյազկի կարծիքով նպատակը կատարում է ռազմավարական գործառույթ կատարվող արարքի նկատմամբ⁶:

Անհատի նպատակը ոչ միայն ուղղորդում է գործողությունը, այլև հաճախ հանդես է գալիս որպես դրա նպատակամդվածության և ակտիվության աղբյուր: Այս դեպքում այն կարծես միանում է շարժադիրին և դառնում է արարքի կատարման մող հիմնական գիտակցական ուժը:

Նպատակը ոչ միայն ուղղորդում է գործողությունը, այլև կանխորոշում է միջոցների, եղանակների համակարգը, որոնց միջոցով կատարվող գործողությունը պետք է բերի ցանկալի արդյունքների: Ինչպես իրավացիորեն նկատում են Կ. Մարքսը և Ֆ. Էնգելսը, «նպատակը, որպես կանոն, կանխորոշում է մարդու գործողությունների եղա-

նակը և բնութը»⁷:

Նպատակի բազմաբնույթ լինելը իր արտացոլումն է գտել նաև քրեական իրավունքում, և այդ ամենը պետք է հաշվի առնել սուբյեկտի մեղավորությունը որոշելիս: Սակայն մեղավորության հարցը որոշելուն պետք է նախորդի նպատակի, դրան հասնելու եղանակների և միջոցների վերաբերյալ անհրաժեշտ վերլուծություն և դրանց տրվի համապատասխան սոցիալական գնահատական: Առանց դրա, նոյնիսկ նպատակը հաշվի առնելով, հնարավոր չէ որոշել սուբյեկտի մեղավորության հարցը: Նպատակը իրոք կարող է լինել բարի, ասենք բարեկավել ընտանիքի նյութական դրույթունը, սակայն այդ նպատակին հասնելու միջոցները տարբեր են՝ արդար վաստակել, գողանալ, կատարել ավազակային հարձակում և այլն:

Այժմ անդրադանանք նպատակի քրեափական նշանակությանը, երբ այն ընդգրկված է քրեական օրենսգրքի հասուկ մասի հոդվածի դիսպոզիցիայում որպես հանցակազմի սուբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ:

Նման դեպքում արարքում նպատակի բացակայությունը կնշանակի տվյալ հանցակազմի բացակայություն: Օրինակ՝ կեղծ վճարային փաստարդեր՝ արժեթղթեր կամ արժույթ, արժեթրության մասին վկայող, դրանք սահմանող կամ տրամադրող այլ փաստարդեր պատրաստելու կամ իրացնելու համար անձը պատասխանատվության կենթարկվի միայն այն դեպքում, երբ դա կատարել է իրացնելու նպատակով (Քր. օր. 203-րդ հոդված):

Նպատակը կարող է կարևոր դեր խաղալ նաև, երբ անհրաժեշտ է հանցագործության մի հանցակազմը սահմանագաղտել մյուսից: Օրինակ՝ պետական, քաղաքական կամ հասարակական գործիքի սպանությունը կորակվի 305-րդ հոդվածով միայն այն դեպքում, երբ այն կատարվել է նրա նշված գործունեությունը դադարեցնելու նպատակով: Փաստորեն նպատակը պարզելու արդյունքում մենք կարողանում ենք հասարակ սպանությունը տարբերակել պետական, քաղաքական կամ հասարակական գործիքի սպանությունից:

Նպատակը հանդես է գալիս նաև որպես հանցակազմը ծանրացնող կամ մեղմացնող հանգամանք, և պետք է հաշվի առնել պատժի բնույթի և չափի ընտրության ժամանակ:

Գրականության մեջ նպատակը, ինչպես

շարժադիրը, դասակարգվում է: Դեռևս Ի. Կանտը նպատակը դասակարգել է տեխնիկականի, պրագ-մատիկի և կատեգորիկի:

Ըստ իրենց սոցիալական բնույթի՝ նպատակները կարող են լինել օգտակար, վնասակար կամ չեզոք: Ըստ որոշակիության՝ նպատակները կարելի է դասակարգել կոնկրետացվածի և չկոնկրետացվածի: Նպատակին հասնելու տեսանկյունից կարելի է բաժանել հասանելի և անհասանելի նպատակներ: Հաշվի առնելով նպատակների իրականացման հնարավորությունը՝ իրական և վերացական նպատակներ: Նպատակներին հասնելու ժամանակային բնույթից եկնելով՝ տարբերակում են մոտակա, հեռակա և կատարվելիք նպատակներ: Ավարտվածության տեսանկյունից նպատակները բաժանվում են սկզբնականի, միջանկյալի և ավարտականի: Բարոյականության առումով նպատակները լինում են բարձրագույն, ազնիվ և աննշան:

4. Նպատակի և շարժանիքի նշանակությունը անզգուշությամբ կատարվող հանցագործություններում

Տեսության մեջ և պրակտիկայում
անորոշությունները էլ ավելի մեծ են անզգությու-
թյամբ կատարվող հանցագործությունների ժամա-
նակ շարժառիթի և նպատակի դերի բնորոշման
հարցում:

Դա պայմանավորված է բազմաթիվ հանգամանքներով: Նախև առաջ այն պատճառով, որ բազմաթիվ գիտնականներ ընդիհանրապես հերքում են շարժադիրի և նպատակի առկայությունը անգուշությամբ կատարվող հանցագործություններում: Բացի այդ՝ շարժադիրն ու նպատակը, այդպիսի հանցագործություններում ունենալով ձևավորման և դրաւորման այլ մեխանիզմ, ոչ միշտ են բացահայտվում. Էլ չենք խոսում դրամբ բացարձելու և նկարագրելու մասին:

Այս տեսակետի կողմնակիցները նշում են, որ շարժառիթ ու նպատակ անզգուշությամբ կատարվող հանցագործություններում չեն կարող լինել: Շարժառիթն ու նպատակը հանդես են զալիս հանցավորի վարքում, ինչը հանգեցնում է անզգուշությամբ կատարված հանցանքի⁸:

թյուններում շարժափիք ու նպատակի բացակայության դեպքում էլ այդ հանցագործությունները կամային են:

Կամքն էլ իր հերթին չի կարող գոյություն ունենալ առանց շարժադիրի, ինչպես որ այն չի կարող գոյություն ունենալ և դրսևը կել առանց գիտակցության: Միայն այդ դեպքում կարելի է խոսել կամային գործողությունների (անգործության) մասին և այն դարձնել քրեակրավական գնահատականի առարկա:

Իրավաբանական գրականության մեջ այս կապակցությամբ նշվում է, որ անզգուշությամբ կատարվող հանցագործություններում կամքի բովանդակության առանձնահատկությունը կայանում է նրանում, որ նրամք ունենում են սեփական շարժադրիքն ու նպատակը, որոնք չեն տարածվում հանրութեն վտանգավոր հետևանքների վրա: Այս հանցագործություններում հանրութեն վտանգավոր հետևանքները հանդիսանում են ոչ թե անձի գործողությունների նպատակ, այլ այդ գործողությունների ածանցյալ արդյունք⁹: Նման մոտեցումի ենք հանդիպում Բրայնինի աշխատություններում, ով նշում էր, որ դիտավորությամբ կատարվող հանցագործություններում գոյություն ունեն շարժադրիքներ, իսկ անզգուշությամբ կատարվող հանցագործություններում՝ հանրութեն վտանգավոր վարքագծի շարժադրիքներ, որոնք առաջացրել են հանրութեն վտանգավոր հետևանքները¹⁰:

Կիսելով գրականությունում առկա մոտեցումը այն մասին, որ անզգուշությամբ կատարվող հանցագործությունները ունենում են սեփական շարժադիրն ու նպատակը, այնուամենայնիվ, կարծում ենք, վիճելի է այն պնդումը, որ հանրութեան վտանգավոր հետևանքները անզգուշությամբ կատարվող հանցագործություններում հանդիսանում են ոչ թե գործողության նպատակ, այլ կողմնակի արդյունք:

Այսպես, Վ. Ա. Յակովիչնը գտնում է, որ անզգուշությամբ կատարվող հանցագործություններում շարժադրի և նպատակի ձևավորման ու դրսևորման մեխանիզմը, կախված անզգուշության մեղքի ձևից, տարրեր է¹¹:

Հանցավոր ինքնավստահության դեպքում շարժառիթն ու նպատակը կապված են գործողության հետ, իսկ հետևանքները ամփական և ուղղակի են, ինչպես հաճախ լինում է դիտավորության դեպքում: Օրինակ՝ տարսու վարորդը ուղևորի խնդիրը:

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

բանքով էականորեն գերազանցում է ավտոմեքենայի արագությունը, խախտում է ճանապարհատրանսպորտային երթևեկության կանոնները՝ ցանկանալով օգնել ուղևորին ժամանակին տեղ հասնել, ինչի հետևանքով տեղի է ունենում վրաերթ։ Տվյալ դեպքում վարորդի գործողությունները նպատակառողջած են և ունեն շարժառիթներ։ Նպատակառողջածությունը չի արտահայտվում միայն նրանում, որ անձը ցանկանում էր ուղևորին առանց ուշացնելու տեղ հասցնել (վերջնական նպատակ), այլ նախ և առաջ նրանում, որ վարորդը իր առաջ դրել է միջանկյալ նպատակ՝ իր գործողություններով խախտել ճանապարհատրանսպորտային երթևեկության կանոնները՝ որպես վերջնական նպատակին հասնելու անհրաժեշտ պայման։

Միջանկյալ նպատակի շրջանակներում անձը գիտակցում է իր գործողություններով հնարավոր բացասական հետևանքներից որևէ մեկի առաջացման հավանականությունը։ Չնայած դրան՝ անձը, այնուամենայինվ, չի դադարեցնում կամ չի հրաժարվում իր գործողություններից։

Դա բացատրվում է նրանով, որ անձը, չնայած նախատեսում է իր գործողության (անգործության)` հանրության համար կտանօքավոր հետևանքների առաջացման հնարավորությունը և հավանականությունը, սակայն իմաննելով ինչ-որ հանգամանքների վրա (մասնազիտական փորձ, արագ կողմնորոշվելու ունակություն, ավտոմեքենայի հնարավորություններ և այլն)` հույս է ունենալ կանխսել դրանք:

Հանցավոր ինքնավստահության դեպքում
առանձնահատուկ է դրսևորփում նաև շարժառիթը:
Այն դրսևորփում է ոչ թե ուշացողին օգնելու ցանկու-
թյամբ, այլ ավելի շատ գրամար աշխատելու, դիմա-
ցինի բարեհաճությունը ստանալու և այլ մղումնե-
րով: Չնայած անձը գիտակցում է իր կողմից կա-
նոնները խախտելու հաճամանքը, սակայն ներ-
քին մղումը գերակշռում է այն և հաղթահարում սո-
ցիալական արգելութերը:

Այսպիսով, հանցափոր իմքնավատահության դեպքում առկա են շարժադիրն ու նպատակը, սակայն նրանց առանձնահատկությունը կայանում է նրանում, որ բազմազան են, ճյուղավորված և հիմնված թերեւամիտ հաշվարկների վրա: Եթե ցանկալի և գիտակցված հակադրավական արարքը հակակշռում է ակտիվ գործողություններով դրանց հնարավոր վրա հասնելիք հետևանքները կանխե-

Jn1G:

Յուրահատուկ դրսերում են ստանում շարժառիթն ու նպատակը հանցավոր անփութության դեպքում։ Ուսումնասիրողները ելնում են նրանից, որ գործողությունները հանցավոր անփութության դեպքում ևս նպատակաուղղված են և ունեն շարժառիթներ, չնայած ոչ շարժառիթը, ոչ նպատակը փոխկապակցված չեն և որևէ առնչություն չունեն փաստացի վրա հասած հետևանքների հետ։ Անփութության դեպքում անձը չի նախատեսում հանրորեն վտանգավոր հետևանքների առաջացումը, քանի որ իր կողմից մինչ այդ քազմից կատարված ննանատիպ գործողությունները չեն հանգեցրել ննան արդյունքի։

Հանցավոր անփութության դեպքում ևս անձը գիտակցում է իր կողմից որոշակի հրահանգներ, հրամաններ, դրույթներ, օրենքներ, կեցության կանոններ և այլն խախտելու հանգամանքը: Այսինքն՝ անձը նպատակ է դնում խախտել ավանդական կամ սահմանված վարքագծի կանոնները: Իսկ գործողության նպատակի և ուղղվածության հիմքում ընկած է շարժառիթը: Հանցավոր անփութության դեպքում շարժառիթը որոշվում է զործողությամբ:

Օրինակ, համապատասխան ունակությունները չունեցողը, ով նախկինում բազմից կատարել է նոյն գործողությունները, որոշում է կառավարել վերամբարձ կոռունկ՝ շնախատեսելով իր գործողություններով նյութական վճար կամ մարդկային գործեր տալու հնարավորությունը: Սակայն ներքին մղումները (համարձակությունը ցույց տալու ցանկությունը, ամենազիտությունը, անվախությունը և այլն) կատարվող գործողությունների միջոցով ստանում են սոցիալական բնույթ, որոնք հաշվի չեն առնում, հաճախ նաև արհամարհում են ներկայացվող պահանջները: Ստեղծված իրավիճակը սխալ գնահատելու հետևանքով անփութությամբ գործող անձը, իրական հնարավորություն ունենալով նախատեսել Վտանգավոր հետևանքները, բավարար շրջահայցություն, ուշադրություն և խոհեմություն չի ցուցաբերում այդ հետևանքների առաջացումը թույլ չտալու համար, թեև տվյալ իրադրությունում պարտավոր էր և կարող էր նախատեսել դրանք:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ սուր-
յեկտիվ մեխունակության համար մեղքի հետ միա-
սին կարելոր ճշանակություն ունեն նաև շարժա-
ռիքն ու նպատակը՝ որպես սուրյեկտի հոգեկան
ոլորտի կողմեր, ինչով բնութագրվում է վերջինիս

անձը և նրա կողմից կատարված հանցագործությունը: Իսկ դա վերջիվերջո բույլ է տալիս լուծել հանցանք կատարած անձին քրեական պատասխանատվության ենթարկելու խնդիրը, որոշել պետական հարկադրանքի կիրառման տեսակը և չափը, ինչը հանդիսանում է սուբյեկտի մեղսունակության որոշիչ սկզբունքներից մեկը:

5.Հանցանք կատարած անձի հուզական վիճակը

Հույզերը (հուզական վիճակը), ինչպես մյուս հոգեբանական երևույթները, իրենցից ներկայացնում են իրական աշխարհի արտացոլման տարրեր ձևեր: Ի տարբերություն ճանաչողական պրոցեսների, որտեղ շրջակա իրականությունը արտացոլվում է զգացողություններում, կերպարներում, պատկերացումներում, հասկացություններում, մտքերում, հույզերն ու զգացմունքները օբյեկտիվ իրականությունը արտացոլում են ապրումներում, որոնցում դրսևորվում է անձի սուբյեկտիվ վերաբերունքը շրջակա աշխարհի առարկաների և երևույթների նկատմամբ: Այսպիսով, հույզերը մարդու ապրումներն են՝ կապված նրա վիճակի, նրա կողմից կատարվող արարքի, տեղի ունեցող իրադարձությունների հետ, որոնք ուղղված են առաջացած կարիքների բավարարմանը¹²:

Գրականության մեջ ընդունված է բաժանել հուզական վիճակի չորս հիմնական ձևեր.

- Զգացմունքներ. իրականության արտացոլման միջոցներից մեկը, որն արտահայտում է անձի սուբյեկտիվ վերաբերունքը իր պահանջմունքների բավարարման հանդեպ, իր պատկերացումներին դրանց համապատասխանությունը կամ անհամապատասխանությունը:

- Կիրք. այն ուժեղ և տևական զգացողություն է:

- Տրամադրություն. այս վիճակը առանձնանում է իր տևողությամբ, կայունությամբ և հանդիսանում է բոլոր հոգեբանական պրոցեսների ֆոնը:

- Աֆեկտ. շատ ուժգին կարճաժամկետ հուզական վիճակ, որը ուղեկցվում է ներքին շարժիչ ուժով:

Գրեական իրավունքում կարևոր նշանակություն ունի աֆեկտը՝ որպես անձի հուզական վիճակի տեսակ:

ՀՀ քրեական օրենսգրքի 105-րդ և 114-րդ հոդվածներում որպես հոգեկան խիստ հուզմունքի առաջացման պայման նշվում է ծանր վիրավորանքը: Ծրեական օրենսգրքում ծանր վիրավորանքի բնորոշումը տրված չէ: Մինչև վիրավորանքի հանցակազմի ապաքրեականացումը ՀՀ քրեական օրենսգրքով տրված էր հասարակ վիրավորանքի բնորոշումը, ըստ որի՝ վիրավորանքը ուրիշի պատիվն ու արժանապատվությունն անպարկեշտ ձևով ստորացնելն է:

առաջացման պատճառ, ինչը հոգեբանության մեջ բնորոշվում է որպես ֆիզիոլոգիական աֆեկտ, նշվում են անօրինական բռնությունը, ծաղրուծանակը, ծանր վիրավորանքը կամ այլ հակարարոյական գործողությունները (անգործություն), ինչպես նաև տուժողի պարբերաբար դրսևորած հակարավական կամ հակարարոյական վարքագիծը: Նշված հանցագործությունների համակազմում դրանք հանդիսանում են պարտադիր հատկանիշներ¹³:

Ընդունված է համարել, որ բռնությունը մարդու դեմ կիրառվող ֆիզիկական ներգործությունն է մկանային ուժի օգնությամբ կամ զենքի, նյութերի (ռադիոակտիվ, բունավոր, հոգենետ և այլն), տաքուրյան, էլեկտրամագնիսային պրոցեսների և այլնի միջոցով, ինչի հետևանքով պատճառվում է ցավ, մարմնական վնասվածքներ կամ մահ:

Իրավաբանական գրականության մեջ կան կարծիքներ, որ բացի ֆիզիկական բռնությունից գյուրյուն ունի նաև հոգեբանական բռնություն: Սակայն քրեական օրենքում բացակայում է «հոգեկան բռնություն» տերմինը: Առկա է «սպառնալիք» տերմինը (Քր. օր. 131-րդ, 132-րդ, 138-րդ, 139-րդ, 175-րդ հոդվածներ, 176-րդ հոդվածի 2-րդ մաս և այլն): Այն հանդես է գալիս որպես վնասելու դիտավորություն: Սպառնալիքը, ինչպես և բռնությունը, հանդիսանում է հանցագործության հանցակազմի ինքնուրույն հատկանիշ և չի միավորվում մեկ հասկացության մեջ: Վերոգրյալից, ինչպես նաև նորմի բառացի մեկնաբանությունից կարելի է եզրակացնել, որ բռնությունը՝ որպես հանցակազմի հատկանիշ, ներարում է մարդու նկատմամբ միայն ֆիզիկական ներգործություն:

ՀՀ քրեական օրենսգրքի 105-րդ և 114-րդ հոդվածներում որպես հոգեկան խիստ հուզմունքի առաջացման պայման նշվում է ծանր վիրավորանքը: Ծրեական օրենսգրքում ծանր վիրավորանքի բնորոշումը տրված չէ: Մինչև վիրավորանքի հանցակազմի ապաքրեականացումը ՀՀ քրեական օրենսգրքով տրված էր հասարակ վիրավորանքի բնորոշումը, ըստ որի՝ վիրավորանքը ուրիշի պատիվն ու արժանապատվությունն անպարկեշտ ձևով ստորացնելն է:

Փաստորեն ներկայիս քրեական օրենսգրքում ընդհանրապես որևէ բնորոշում՝ կապված «վիրավորանքի» հասկացության հետ չկա: Ավելին, ըստ էության ծանր վիրավորանքը գնահատողա-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

կան, արժեքավորող հասկացություն է: Այստեղից հետևում է, որ հասցած վիրավորանքը ծանր որակել-չորակելու հարցը որոշելու է կոնկրետ դեպքում վարույթն իրականացնող մարմինը (հետաքննության մարմին, քննիչ, դատախազ, դատարան), ինչը իհարկե չի կարելի արդարացված համարել, առավել ևս ՀՀ քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածի լույսի ներքո:

Հոգեկան խիստ հուզմունքի վիճակ առաջացնող հակաֆրավական այլ գործողությունները (անգործություն) տուժողի վարքագծի այն դրսւորումներն են, որոնք քեն չեն հանդիսանում բռնություն, ծաղրուժանակ կամ վիրավորանք, բայց բնութագրվում են հանցավորի կամ այլ անձանց իրավունքների կողին ոտնահարմաճք:

Հակաբարոյական այլ գործողությունները բարոյականության նորմերին հակասող այն արարքներն են, որոնք կարող են հոգեկան խիստ հուզմունքի առաջացման հիմք հանդիսանալ: Օրինակ՝ կողոպուտը, բռնաբարությունը, գույքի դիտավորյալ ոչնչացումը¹⁴:

Աֆեկտը կարող է առաջանալ նաև անզգույշ հանցագործությունների պայմաններում: Օրինակ՝ դատական պրակտիկայում հանդիպել է հետևյալ իրավիճակը. Վ-ն ավտոմեքենան վարելու ընթացքում խախտում է ճանապարհային երթևեկության կանոնները, վրաերքի է ենթարկում փողոցով անցնող երեխային: Դեպքի վայրում գտնվող երեխայի հայրը, տեսնելով աղջկա վճասվածքները, նետվում է վարորդի ուղղությամբ և ծանր մարմնական վճասվածքներ պատճառում վերջինիս: Դատարանի դատավճռով երեխայի հոր գործողությունները որակվել են ՀՀ քրեական օրենսգրքի 114-րդ հոդվածով:

Օրենքով սահմանված չէ նաև տուժողի հակաբարական վարքագծի բնորոշումը: Կարելի է եզրակացնել, որ որպես աֆեկտի առաջացման պատճառ կարող են լինել նաև այնպիսի գործողությունները, որոնք կապված են վարչական, քաղաքացիական, աշխատանքային օրենսդրությամբ նախատեսված իրավախստումների հետ:

Այս կապակցությամբ անհրաժեշտ ենք համարում իշխատակել օրինակ Ռուսաստանի Դաշնության դատական պրակտիկայից: Այսպես. հակահամաճարակային բժիշկը, խոհանոցում խոհարարին տեսնելով կեղտոտ հազուստներով, վերջինիս նկատողություն է անում, ինչին ի պատասխան

խոհարարը վիրավորում է բժշկին: Բժիշկը անմիջապես տուգանում է տնօրենին: Վրդովված տնօրենը հայտարարում է, որ խոհարարը ազատված է աշխատանքից: Ինչպես հետագայում որակել է դատարանը, այս ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով խոհարարը աֆեկտի ազդեցության տակ մարմնական վճասվածքներ է հասցրել բժշկին:

Հանցավորի կողմից աֆեկտի առաջացման առիթ կարող է հանդիսանալ նաև տուժողի կողմից դրսւորված հակաբարական կամ հակաբարոյական պարբերական վարքագծի կապակցությամբ առաջացած երկարատև հոգեճնշող վիճակը: Նման իրավիճակ կարող է ստեղծվել, ասենք, եթե հակաբարական կամ հակաբարոյական գործողությունները ուղղված են հանցավորի մտերիմներին:

Դատական պրակտիկայում հանդիպում են դեպքեր, երբ աֆեկտի առաջացման առիթ է հանդիսանում նաև անձանոր անձի դեմ կատարվող հակաբարական կամ հակաբարոյական վարքագիծը: Մասնավորապես. ավարտական երեկոյի ժամանակ ինչ-որ անձանոր մոտենում է մի աղջկա և գուեկի ձևով հրավիրում պարի. ստանալով կտրուկ մերժում՝ անձանորը հարվածում է աղջկա դեմքին: Այս ամենին ներկա գտվող մի տղա, ստեղծված տեսարանից ազդված, չկարողանալով տիրապետել իրեն, դանակով հարվածում է անձանորին: Դատարանը արարքը որակում է Ո-Դ քրեական օրենսգրքի 110-րդ հոդվածով:

Դատական պրակտիկայում հաճախ են հանդիպում դեպքեր, երբ աֆեկտի առաջացման հիմք է հանդիսանում անգործունակ անձանց հանրուեն վտանգավոր գործողությունները¹⁵:

Հոգեբանության մեջ ընդունված է աֆեկտը բաժանել հետևյալ տեսակների՝ բարկության, ատելության, վախի, սարսափի, ուրախության: Դատական պրակտիկայում առավել հաճախ հանդիպում են բարկության և վախի աֆեկտները:

Բարկության աֆեկտը համարվում է պաշտպանական ռեֆլեքսի տարածեսակ և ունի ազդեցությունը: Վախի աֆեկտը առաջանում է տարբեր իրավիճակներում, որոնք ստեղծում են զգալի վտանգ (իրական կամ երևակայական) անձի առավել կարևոր արժեքների նկատմամբ: Այն անմիջականորեն կապված է պաշտպանողական ռեֆլեքսի հետ: Այս հոգեվիճակում կատարված գործողությունները կրում են գուտ պաշտպանողական

բնույթ և ուղղված են վտանգի չեղքացմանը:

Վերոգրյալից կարելի է եզրակացնել, որ արարը ՀՀ քրեական օրենսգրքի 105-րդ և 114-րդ հոդվածներով որակելու համար որպես հանցակազմի պարտադիր հատկանիշ են հանդես գալիս բարկության աֆեկտը և ատելության աֆեկտը, իսկ եթե բռնության համար հիմք է հանդիսացել վախի աֆեկտը, ապա անձի պաշտպանողական գործողությունները պետք է համարվեն իրավաչափ:

Վերջաբան

Ամփոփելով վերոգրյալը՝ կարելի է ևս մեկ անգամ ընդգծել, որ հանցագործության շարժադրը, նպատակը և հույզերը էական նշանակություն ունեն քրեական պատաժանատվության համար:

Նպատակը նախ և առաջ կարող է լինել հանցագործության հանցակազմի հիմնական (կոնստրուկտիվ) հատկանիշ, որի բացակայությունը կնշանակի նաև համապատասխան հանցակազմի բացակայություն: Օրինակ՝ բանդիտիզմի հանցակազմը (ՀՀ քր. օր. 222-րդ հոդված) կինի միայն այն դեպքում, եթե կազմակերպված զինված խումբ (բանդա) ստեղծելը, այդպիսի խումբ դեկավարելը կամ բանդայի կողմից կատարվող հարձակումներին մասնակցելը կատարվել է անձանց կամ կազմակերպությունների վրա հարձակվելու նպատակով:

Երկրորդ. հանցագործության նպատակը կարող է հանդես գալ որպես պարտադիր հատկանիշ հանցագործությունը ծանրացնող հանգամանքներով որակելու համար: Այսպես, այլ հանցանքը բարեցնելու կամ դրա կատարմանը կատարվելու հետագա նպատակով կատարված սպանությունը (ՀՀ քր. օր. 104-րդ հոդվածի 2-րդ մասի 11-րդ կետ) հնարավոր է քրեական օրենսգրքի նշված հոդվածով որակել միայն, եթե սպանությունը կատարվել է հանցակազմում նշված նպատակով:

Երրորդ. հանցագործության նպատակը կարող է հանդես գալ որպես մեղմացնող կամ ծանրացնող հանգամանք պատիժը նշանակելիս: Այսպես, ՀՀ քրեական օրենսգրքի 63-րդ հոդվածում նշված պատաժանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքների բվում առկա է նաև հանցանք այլ հանցագործությունը բարեցնելու կամ դրա կատարմը հեշտացնելու նպատակով կատարելը:

Բացի վերոգրյալից նպատակը և շարժադր-

քը ունեն նաև էական նշանակություն հանցագործությունների կանխաման համար: Բացահայտելով հանցագործության իրական նպատակը և շարժադրը՝ հնարավոր է կատարել համապատասխան վերլուծություններ, մշակել ուսումնավարություն կոնկրետ հանցագործությունների կանխաման ուղղությամբ:

Այս նույն համտեքսում դրսևորվում է նաև հանցագործության շարժադրը, որը ևս կարող է հանդես գալ որպես հանցագործության հանցակազմի հիմնական (կոնստրուկտիվ) հատկանիշ, որի բացակայությունը կնշանակի նաև համապատասխան հանցակազմի բացակայություն: Այսպես, պաշտոնեական լիազորությունները չարաշահելու (ՀՀ քր. օր. 308-րդ հոդված) հանցակազմը առկա կլինի միայն այն դեպքում, եթե դա կատարվել է շահադիտական, անձնական այլ շահագրգովածությունից կամ խմբային շահերից ելնելով: Նշված արարքը այլ շարժադրով կատարվելու դեպքում ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի հանցակազմը կրացակայի:

Երկրորդ. շարժադրը կարող է հանդես գալ որպես պարտադիր հատկանիշ հանցագործությունը ծանրացնող հանգամանքներով որակելու համար: Այսպես, եթե սպանությունը կատարվել է խմնի շարժադրով, ապա այն պետք է որակել որպես հասարակ սպանություն (ՀՀ քր. 104-րդ հոդվածի 1-ին մաս): Իսկ եթե սպանությունը կատարվել է խույզանական դրումներով, այն կորակվի ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետով՝ ծանրացուցիչ հանգամանքներով կատարված սպանություն:

Երրորդ. հանցագործության շարժադրը կարող է հանդես գալ որպես մեղմացնող կամ ծանրացնող հանգամանք պատիժը նշանակելիս: ՀՀ քրեական օրենսգրքի 63-րդ հոդվածում նշված պատաժանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքների բվում առկա է հանցանք ազգային, ուսասայական կամ կրոնական ատելության, կրոնական մոլեռանդության, այլ անձանց իրավաչափ գործողությունների համար վրեժի շարժադրներով կատարելը:

Շարժադրը, բացի նրանից, որ ունի կարևոր նշանակություն քրեական պատաժանատվության համար, ունի նաև էական ապացուցողական նշանակություն հանցագործության բացահայտման համար: Հանցագործության իրական

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

շարժառիթի հայտնաբերումը դիտվում է որպես կատարված արարքի օբյեկտիվ իրականությունը բացահայտելու անհրաժեշտ պայման, առանց որի հնարավոր չէ տալ հանցագործության իրական նկարագիրը: Եթե հանցագործության շարժառիթը բացահայտված չէ, ապա քննիչն ու դատարանը չեն կարող հանգել միանշանակ եզրակացությունների այն մասին, թե ինչպիսի կոնկրետ հանցագործության հետ նրանք գործ ունեն: Օրինակ, եթե ուրիշի գույքը ոչնչացնելը կամ վճառելը կատարվել է խուլիքանության գուգորդմամբ, ապա այն վերածվում է խուլիքանության, կամ արարքը արտաքին հատկանիշներով թվում է սպանություն, սակայն շարժառիթը որոշելուց հետո վեր է ածվում անհրաժեշտ պաշտպանության:

Այս կապակցությամբ հանցագործության շարժառիթը, նպատակը և հույզերը բացահայտելու անհրաժեշտությունը որոշ չափով ամրագրված է նաև քրեադատավարական օրենսդրությամբ: Այս հատկանիշները պետք է համարվեն յուրաքանչյուր քրեական գործով բացահայտման ենթակա պարտադիր պայման, անկախ այն հանգամանքից՝ նրանք համարվում են համապատասխան հանցագործության հանցակազմի պարտադիր հատկանիշ, թե ոչ: Քանի որ առանց դրա հնարավոր չէ ոչ միայն որոշել հանցագործության որակման հարցը, այլև առաջնորդվել պատասխանատվության անհատականացման սահմանադրական սկզբունքով:

¹ Якушин В.А. “Значение мотива и цели для субъективного вменения”. Вестн. Моск. Ун-та. Серия 11, Право, 1995, №6. С. 48.

² Юридический энциклопедический словарь, М., 1984, С.179.

³ Юридический энциклопедический словарь, М., 1984, С.179.

⁴ ՀՀ քրեական իրավունք: Ընդհանուր մաս.-Երևանի պետ. համալս. հրատ. 2003թ.-Էջ 223:

⁵ Криминология, М., 1988, С.133-136.

⁶ Гилязев Ф.Г. “Социально-психологические и криминологические аспекты вины”. Уфа, 1978, С.10.

⁷ Маркс К., Энгельс Ф, Соч. Т.23, С.189.

⁸ Зеленинский А.Р. “Осознаваемое и неосознаваемое в преступном поведении”. Харьков, 1986, С.49.

⁹ Волков Б.С. “Проблема воли и уголовная ответственность”. Казань, 1965, С.39-40.

¹⁰ Брайнин Я.М. “Уголовная ответственность и ее основания в советском уголовном праве”. М., 1963, С.233.

¹¹ Якушин В.А. “Ошибка и ее уголовно-правовое значение”. Казань, 1982.

¹² Чуфаровский. Ю.В. Учебник для вузов - “Юридическая психология”. М., 1998 г. С.59.

¹³ Подольный Н.С. “Сильное душевное волнение и аффект” // Законность, 2000, N3, С.36.

¹⁴ Ткаченко Т.И. “Уголовно-правовое значение аффекта” // Законность, 1995, N10, С. 18-20.

¹⁵ Иванов Н.В. “Уголовная ответственность лиц с аномалиями психики” // Государство и право, 1997, N3, С.72-79.

Գրականության ցանկ

Գրականություն հայերեն լեզվով:

1. Մարդու իրավունքերի և իմմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիա:

2. ՀՀ Սահմանադրություն:

3. ՀՀ քրեական օրենսգիրք:

4. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք:

5. ՀՀ Քրեական իրավունք: Ընդհանուր մաս: Խմբագրությամբ Գ. Ս. Ղազինյան: Երևան 2003թ ԵՊՀ հրատ.:

6. ՀՀ Քրեական իրավունք: Հասողուր մաս: Խմբագրությամբ Գ. Ս. Ղազինյան: Երևան 2004թ ԵՊՀ հրատ.:

7. Կրիմինալոգիական հետազոտությունների մեթոդիկա: Ա. Գարույյան: Երևան 2001թ. ԵՊՀ հրատ.:

Գրականություն ռուսերեն լեզվով:

1. Конституции РФ

2. Уголовный кодекс РФ

3. Уголовный кодекс РСФСР

4. Уголовное право России. Части Общая и Особенная: учебник / Под ред. А. И. Рарога. М., 2008.

5. Якушин В.А. “Значение мотива и цели для субъективного вменения”, Вестн. Моск. Ун-та. Серия 11, Право, 1995.

6. Юридический энциклопедический словарь, М., 1984.
7. Криминология, М., 1988.
8. Гилязев Ф.Г. "Социально-психологические и криминологические аспекты вины", Уфа, 1978.
9. Маркс К., Энгельс Ф. Соч. Т.23.
10. Зеленинский А.Р. "Осознаваемое и неосознаваемое в преступном поведении", Харьков, 1986.
11. Волков Б.С. "Проблема воли и уголовная ответственность", Казань, 1965.
12. Брайнин Я.М "Уголовная ответственность и ее основания в советском уголовном праве", М., 1963.
13. Якушин В.А. "Ошибка и ее уголовно-правовое значение", Казань, 1982.
14. Чуфаровский Ю.В. Учебник для вузов, "Юридическая психология". М., 1998.
15. Подольный Н.С. "Сильное душевное волнение и аффект" // Законность, 2000, N3.
16. Ткаченко Т.И. "Уголовно-правовое значение аффекта" // Законность, 1995, N10.
17. Иванов Н.В. "Уголовная ответственность лиц с аномалиями психики" // Государство и право, 1997, N3.
18. Нерсесян В.А. "Неосторожная вина: проблемы и решения" // Государство и право, 2000, N4.

РЕЗЮМЕ

Факультативные признаки субъективной стороны состава преступления

Факультативные признаки субъективной стороны состава преступления имеют тройное правовое значение:

1) если мотив, цель и эмоции указаны в диспозиции конкретной статьи Особенной части УК в качестве обязательного признака, то их исключение (игнорирование) разрушает сам состав. Так, дезертирством (ст. 362 УК) можно считать только такое самовольное оставление части или места службы, которое совершается в целях уклонения от прохождения военной службы. По ст. 105 УК за убийство, совершенное в состоянии сильного душевного волнения, можно привлекать лишь в случае установления у лица обязательного для этой статьи признака - состояния физиологического аффекта;

2) факультативные признаки могут выступать в качестве квалифицирующих обстоятельств конкретного состава преступления. Их присутствие превращает простой состав в квалифицированный. Так, ч. 1 ст. 104 УК предусматривает наказание за умышленное убийство без отягчающих или смягчающих обстоятельств (простой состав). Пункт 10 части 2 этой же статьи предусматривает ответственность за убийство из хулиганских побуждений. Здесь мотив превратил простой состав убийства в квалифицированный со значительным ужесточением наказания;

3) если мотив, цель и эмоции не указаны в статьях УК ни в качестве обязательных, ни в качестве квалифицирующих признаков, то их установление по конкретному уголовному делу должны быть учтены органами уголовного преследования и судом при индивидуализации наказания.

SUMMARY

Optional features of the subjective side of crime

Optional features of the subjective side of crime have legal significance threefold:


1) If the motive, purpose and emotion are in the disposition of a specific article of the Criminal Code as a mandatory feature, their exclusion (ignoring) destroys the very composition. Thus, desertion (Article 362 of the Criminal Code) can be considered only such absence without leave or place of service, which is done in order to avoid military service. According to Art. 105 of the Criminal Code for murder committed in the heat of passion can be involved only in case of a person with a mandatory attribute for this article - the state of physiological affect;

2) Optional features can act as aggravating circumstances of the corpus delicti. Their presence makes the simple structure of a qualified. Thus, Part 1, Art. 104 of the Criminal Code provides for punishment for murder with no aggravating or mitigating circumstances (simple structure). Item 10 of Part 2 of the same article provides responsibility for the killing of hooliganism. It will turn into a part of the motive in the murder qualified with a significant tightening of penalties;

3) if the motive, purpose and emotion are not specified in the articles of the Criminal Code or as required or as aggravating circumstances, their establishment in a particular criminal case to be considered by the prosecution and the court in individualization of punishment.

ՀԵՅԱՐԻ ՍԱՍՈՒԴ ՍԱՍՈՒԴԻ

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի փիլիսոփայության,
հասարակագիտության և իրավունքի ինստիտուտի հայցորդ



ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՔԸ ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐՈՒՄ

Պարսկերեն արմատական բառարանի համաձայն՝ «մանուկ» (արաբերեն՝ թէֆլ, որը տարածված կիրառություն ունի նաև պարսկերեն լեզվում՝ հոնանիշ ունենալով պարսկերեն քուղաք բառը), նշանակում է մարդու երեխա, նորածին, փոքրիկ՝ անկախ նրա սեռից, եթե չի հասել արբունքի շրջանին և անշափահաս է¹: (Այստեղից հետևություն, որ հայերենում կիրառվող «մանուկ» եզրի պարսկերեն հոնանիշներ «քուղաք» և «թէֆլ» բառերը տարիքային ավելի մեծ ժամանակաշրջան են ընդգրկում իրենց մեջ՝ սկսելով նորածնից մինչև արբունքի շրջանին հասած երեխաները):

Իրանի Իսլամական Հանրապետության (այսուհետև՝ ԻԻՀ) «Քրեական օրենսգրքի» 49-րդ կետի առաջին հոդվածի, ինչպես նաև ԻԻՀ «Հանրային դատարանների դատավարության եղանակների մասին» գործող օրենսգրքի 219-րդ կետի առաջին հոդվածի համաձայն՝ «անչափահաս» է «այս երեխան, որն ըստ կրոնական օրենքների՝ անչափահաս է համարվում»: Եվ քանի որ վերոհիշյալ երկու օրենսգրքերում չի սահմանվել «անչափահասության» որոշակի տարիքը, ուստի անհրաժեշտ է դիմել ԻԻՀ քաղաքացիական օրենսգրքին, որի 1210-րդ կետի առաջին հոդվածի համաձայն՝ «ֆիզիկապես չափահաս են համարվում լուսնային տարվա հաշվարկով տասնիննոր լրացրած տղաներն ու ինը լրացրած աղջիկները»²:

Իրանում, սակայն, ցավոք նույնացվում են քրեական պատասխանատվության ու կրոնական չափահասության տարիքները, հետևաբար հանցագործություն կատարած երեխան (տղաների դեպքում՝ 15, իսկ աղջիկների դեպքում՝ 9) տվյալ տարիքին հասնելուց ընդամենը մեկ օր հետո ստանում է ըստ օրենքի չափահասների համար սահմանված պատիժն ու արժանանում հասարակական միևնույն վերաբերմունքին, ինչպիսին լինում է չափահաս անձանց պարագայում: Հանցագործ երեխաների տարիքի հիմամբ նրանց պատասխա-

նատվությունը դասակարգող և սահմանող օրենքների բացակայությունը ներկայում համարվում է ԻԻՀ-ում գործող քրեական օրենքների խոշորագույն բերություններից մեկը:

Երեխաների քրեական իրավունքի ու պատասխանատվության հարցում առաջնային խնդիր է համարվում հատակեցնելը, թե ո՞վ է մանուկը կամ երեխան, և ո՞ւմ է կարելի երեխան կամ մանուկ կոչել: Այլ կերպ ասած, տարիքային ո՞ր փուլում է սկսվում մանկությունը և ե՞րբ ավարտվում: Այս հարցադրումներին տրված պատասխանները կլուսաբանեն «մանուկ» կամ «երեխա» եզրերի իմաստը, սակայն դա այնքան էլ պարզ և ոյուրին գործ չէ, ինչպես թվում է առաջին հայացքից: Տարբեր երկրների իրավական գրականության մեջ մարդուն, սկսած մոր արգանդում ձևավորվելու առաջին իսկ պահերից մինչև չափահաս դառնալը, անվանում են տարբեր անուններով՝ պտուղ, նորածին, մանուկ, կատարյալ անչափահաս, անչափահաս երեխա, չափահաս երեխան, պատանի և այլ³: Ու անկախ նրանից, որ այդ փուլերը որոշ առումներով ընդհանուր եզրեր ունեն, այդուհանդերձ նաև բնութագրում են մարդու աճի և տարիքային էվոլյուցիայի առանձնահատուկ ու որոշակի մի շրջանը:

Հստ պարսկերեն բացատրական բառարան՝ անչափահաս է համարվում այն մանուկը, երեխան կամ մարդը, որը չի հասել չափահասության եզրագիծը: Այլ կերպ ասած, անչափահասությունը ցանկացած մարդու համար կյանքի այն ժամանակաշրջանն է, որն սկիզբ է առնում նրա ծննդող և հասնում մինչև չափահասության տարիքը:

Չափահաս դառնալը պայմանավորված է երեխայի ֆիզիկական աճի ու նրա արբունքի հետ: «Հստ էության դա մարդու կյանքի շրջափուլերի (մանկություն, արբունք, երիտասարդություն, ծերություն) երկրորդ էտապն է, որն ի հայտ է գալիս մարմնական ցայտուն փոփոխություններով ու

արագ աճով, սեռական օրգանների ֆունկցիոնալ ունակությունների և կարողությունների դրսնորումով և առհասարակ ֆիզիոլոգիական հասունությամբ⁴: Բժշկների և կենսաբանների խորին համոզմամբ՝ նշված փոփոխությունների և, առհասարակ, արբունքի տարիքը խիստ անձնական բնույթ է կրում, և այն հնարավոր չէ ընդհանրացնել ու տարածել բոլորի վրա, և յուրաքանչյուր երեխա, հնարավոր է արբունքի հասնի տարբեր տարիքում: Այլ կերպ ասած, հնարավոր չէ ճշգրիտ տարիք նկատի առնել բոլոր անձանց բնական արբունքի համար:

Այդուամենայնիվ իրավական տարբեր համակարգերը քրեական պատասխանատվության ենթարկելու համար հիմք են ընդունում օրենքով սահմանված տարիքը, այսինքն օրենքի տեքստում իբրև նախապայման նկատի ունեն քրեական պատասխանատվության նվազագույն տարիքը և դրա հիմնամբ՝ նրանց, ովքեր հասնում են բնական տարիքի այդ փուլին, համարվում են հասուն՝ չափահաս ու քրեական ամբողջական պատասխանատվության ենթակա:

Իրանի Իսլամական Հանրապետությունում ըստ քաղաքացիական օրենսգրքի 1210-րդ օրենքի առաջին հոդվածի՝ տղաների արբունքի տարիքը տասնինգ տարեկանն է, իսկ աղջկներինը՝ ինը, համաձայն որի՝ չափահաս անձը, անկախ նրա մտավոր արբունքից ու գիտակցական կարողություններից⁵ «կղատվի չափահաս անձանց օրենքով ու կըրի կատարած հանցանքին համապատասխան պատիճ»⁶:

Ցավոք, մեր բննարկումից պարզվում է, որ Իրանի իրավական համակարգում քրեական հասունության կամ աճի և քաղաքացիական հասունության միջև տարբերություն է նկատի առնվել, և առկա է տարբեր մոտեցում. դեռ ավելին, օրենքը հիմնված է այն սկզբունքի վրա, որ քրեական հասունությունը անհրաժեշտ ու հարկավոր չէ անձին քրեական պատասխանատվության ենթարկելու համար, հետևաբար երեխան պատժի է ենթակա, եթե նույնիսկ ապացուցված չէ նրա քրեական հասունությունը: Ինչ վերաբերում է քաղաքացիական հասունության խնդրին, զարմանալի է, որ չափահաս անձի կողմից իրականացված գործառնությունները, եթե հստակ ու ապացուցված չէ նրա քաղաքացիական հասունությունը, վավերական չեն համարվում և կատարման ենթակա չեն:

Իսլամական իրավական համակարգում արբունքի և չափահասության տարիքի նկատառման կապակցությամբ ներկայացված են մի շարք հիմ-

նավորումներ ու պատճառներ, որոնց զիսավոր դրույթներին հակիրճ կերպով կանդրադառնանք ստորև:

«Չափահասություն» եզրը Ղուրանում բացատրվում է որպես մանկության ավարտ, սեռական օրգանների հասունացում, սեռական հարաբերությունների և սեռնդագործության կարողություն: Այդուհանդերձ Ղուրանը չի շեշտում տվյալ փուլին անցնելու որոշակի տարիք, այլ ընդամենը ներկայացնում է մարմնական ու մտավոր մի շարք առանձնահատկություններ, որոնք ի հայտ են զայլս տվյալ ժամանակահատվածում: Օրինակ, Ղուրանի «Նեսա» սուրայի վեցերորդ այարում կարդում ենք. «Փորձեք որբերին ու եթե գտնեք, որ նրանք սեռական առումով հասունացել են, ապա նրանց հանձնեք նրանց գույքը, քանի որ նրանք արդեն հասուն են ու չափահաս»: Վերոհիշյալից կարելի է ենթադրել, որ «չափահասություն» եզրը իսլամական սուրբգրային աղբյուրներում իմաստավորվում է որպես «սեռական հասունություն», որն անշուշտ համարվում է մի շարք արտարին գործոններով:

Իսլամական մանրապատումներում⁸ և առանձին դրվագներով, և՝ պարզապես ակնարկների տեսքով շոշափվել է արբունքի, ֆիզիկական հասունության և չափահասության թեման: Այստեղ, ինչպես և Ղուրանում, չափահասության եզրագիծը սահմանվում է ոչ թե որոշակի տարիքով, այլ ուղղակի ֆիզիկական և հատկապես սեռական օրգանների կատարելագործմամբ ու սեռնդագործության կարողունակությամբ:

Ինչ իրավական համակարգում, ինչպես և աշխարհի բազմարիվ այլ երկրների իրավական համակարգերում, ստուգապես չի մեկնաբանվել «մանուկ» կամ «երեխա» եզրը, այլ ուղղակի սահմանվել է որոշակի մի տարիք, որը լրացնելուց հետո հանցանք իրականացրած անչափահասը պարտավորվում է պատասխան տալ օրենքի դիմաց և կրել համապատասխան պատիճ:

Այստեղ անդրադառնալու ենք «մանուկ» կամ «երեխա» եզրերի իրավական ոլորտի իմաստին ու առնչություններին, որ անհրաժեշտարար չեն նույնացվում քրեական իրավունքի ոլորտում դրանց նշանակության հետ:

1989 թվականին ՄԱԿ-ի «Մանկանց իրավունքների» գրասենյակի զիսավոր ատյանը հոչակել ու ստորագրել է «Մանկանց իրավունքների կոնվենցիա»-ն, որը միջազգային մասշտարով ներկայացվել է աշխարհի բոլոր երկրներին: Փաստա-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

թուղթն ընդունել և ստորագրել են նաև ԻԻՀ իրավական ներկայացուցիչները: Կոնվենցիայի առաջին կետը նշում է. «Միանշանակ անշափահաս են համարվում բոլոր այն երեխաները, ովքեր դեռ չեն լրացրել տասնուր տարին՝ բացառությամբ այն երեխաների, որոնք ըստ օրենքի՝ նշված տարիքից առաջ արդեն չափահաս են համարվել»: Վերոհիշյալից կարելի է եզրակացնել, որ առաջին սույն օրենքը պայմանավորվում է նաև այն հանգամանքով, որ վավերացված տարիքը չհակասի օրենքը ստորագրող երկրների ներքին օրենսդրության մեջ սահմանված տարիքային չափանիշներին, որի դեպքում հիմք կը նդունվի տվյալ երկրի օրենքը: Երկրորդ տասնուր տարին պետք է հաշվել երեխայի հենց ծննդյան օրից մինչև այն լրանալու օրը, այլ կերպ ասած, այն չի պարունակում մոր արգանդում գտնվելու կամ պատղության ամիսները: Այս վերջին խնդիրը բազմաթիվ վեճերի առիթ է հանդիսացնել:

Այսպես օրինակ, չնայած Ամերիկայի Միացյալ Նահանգներն ստորագրել են նշված կոնվենցիան, սակայն ցարդ չի վավերացրել ներքին օրենսդրությամբ, և դա հիմնավորվում է նրանով, որ «Եթե պտուղը՝ իբրև մանուկ, առնված է կոնվենցիայի պաշտպանության տակ, ապա դրա բնութագիրը ևս պետք է ներառվեր կոնվենցիայի մեջ»⁹:

Գտնում եմ, որ Իրանի իրավական համակարգում չի կարելի պտղին համարել մանուկ կամ երեխա, քանի որ դրանք և իրավական նախընթացով ու ավանդույթներով, և օրենքով տարբերվում են միմյանցից, ու նաև օրենսդիրը գործնականում զանազան օերնքների մեջ տարբեր վճիռներ է նախատեսել մանկան ու պտղի մասին, և առհասարակ պտղի կյանքն ու մարդկային կյանքը էապես առանձնանում են միմյանցից:

Կոնվենցիայի շուրջ առկա տարակարծություններով հանդերձ՝ և այն, որ ի վերջո պտուղը մանուկ չի համարվել, այդուհանդերձ չի նշանակում, որ պտուղը գերծ է մնացել ամեն կարգի իրավական պաշտպանությունից: Բազմաթիվ երկրների թվում Իրանում ևս իրավական ու քրեական օրենքների ճամապարհով պաշտպանված է պտուղը: Նշենք, օրինակ, ԻԻՀ քաղաքացիական օրենսգրքի 957-րդ կետը. «Պտուղը ներառվում է քաղաքացիական օրենսգրքում, պայմանով, որ այն «ողջ» լույս աշխարհ գա»:

Համաշխարհային մասշտարում առկա հակասությունները «անշափահաս» եզրի որոշակի և կատեգորիկ լուսաբանման խնդրում տարածվում

են նաև զանազան երկրների իրավական դաշտում՝ դառնալով իրավա-քրեական ակնառու բարդությունների ու թերությունների սկիզբ: Ինչպես բազմաթիվ երկրներում, Իրանում նույնպես բացակայում են համատարած ու միմյանց լրացնող ընթացակարգերն ու քրեական օրենքները: Ավելին, նրանցից յուրաքանչյուրը ըստ էության այլ կերպ է մեկնաբանում «անշափահասություն»-ը, սահմանում նոր ու յուրօրինակ սահմանումներ ու տարիքային չափանիշներ: ԻԻՀ օրենքների մեջ որոշակիորեն առանձնանում է ԻԻՀ քաղաքացիական օրենսգրքը՝ 1361 թվականին վավերացված բարեփոխումներով, որի 1210-րդ կետի առաջին հոդվածում նշում է. «Փիզիկապես չափահաս են համարվում լուսնային տարվա հաշվարկով տասնիննա տարին լրացրած տղաներն ու ինը տարին լրացրած աղջկները»: Այսպիսով, ըստ օրենքի սահմանման՝ հիշյալ տարիքներում՝ «մանկության» ավարտից անմիջապես հետո, վերջիններիս բույլատրվում է պաշտոնապես՝ իւլամական շարիաթի օրենքների համաձայն, ամուսնանալ: Ըստ վերոհիշյալի՝ աղջիկներն ու տղաները վեց տարվա տարածությամբ են շրջանցում «մանկության» փուլը, չնայած անհրաժեշտ են նկատում ընդգծել, որ նոյն օրենքի երկրորդ հոդվածի համաձայն՝ «երեխաների ֆիզիկական չափահասությունից (արբունքից) մինչև տասնուր տարեկան դառնալ ընկած ժամանակահատվածում նրանց տնտեսական հասունությունը անհրաժեշտ է ապացուել դատարանում»:

Հետևաբար գտնում եմ և այն տեսակետն ունեմ, որ 1210-րդ կետի 2-րդ հոդվածը միանշանակ մատնացույց է անում ու պատզամում է այն իրավական դրույթը, որ ֆինանսանյութական բնագավառում մանկության շրջանի գործողությունների հետևանքները շարունակվում են մինչև տասնուր տարեկանի ավարտը, և որ ֆիզիկական արբունքը կամ հասունությունը և տնտեսական հասունությունը կամ աճը երկու տարբեր վճիռներ են պարունակում, այնինչ՝ քաղաքացիական հասունության համար պարտադիր կերպով աճը պետք է անցկացնի ֆիզիկական արբունքի շրջանը, այսինքն՝ աճի իրավական հասունությունը պայմանավորված է նրա չափահասությամբ:

ԻԻՀ քաղաքացիական օրենքում մի այլ հակասող վճիռ ևս առկա է աճի՝ երեխայության շրջանից դուրս գալու հետևանքների մասին. քաղաքացիական օրենսգրքի 1042-րդ կետի համաձայն՝ «ամուսնությունն արգելվում է ֆիզիկական չափահասությունից առաջ»: Այստեղից հետևություն, որ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ամուսնության և նոր ընտանիք ձևավորելու տարիքը համարվում է մանկության կամ երեխայության շրջանի ավարտը, որը կարող է տարբեր մարդկանց մոտ տարբեր տարիքում լինել: Ֆիզիկական հասունության հիմնական չափորոշիչը ընտանիք ձևավորելու և սերնդագործելու կարողությունն է, որը մի որակական էվլոյուցիայի ու առարկայական փոփոխության արդյունք է: Աղջիկների համար ինը և տղաների համար տասնինգ տարիքների նշանակումը՝ իրեն քրեական պատասխանատվության չափորոշիչ, կիրառվել է 1361 թվականի՝ խնդրո առարկա օրենքների մեջ իսլամական կրոնական օրենքները մտցնելու և այդ շրջագծում փոփոխություններ կատարելու նպատակով: Սույն օրենքը առաջնորդվում է Իսլամական Ծիա դպավանաճի հայտնի կրոնապետների տեսակետներով, որոնք, սակայն, շատ դեպքերում չեն համապատասխանում հասարակության ներկա իրողություններին ու պայմաններին:

Իրանի Կրթության նախարարության և առնչակից այլ հաստատությունների միջոցով մայրաքաղաք Թեհրանի դպրոցներում կատարված թժշկագիտական ու հասարակական հետազոտությունների հիմամբ աղջիկների ֆիզիկական արբունքի տարիքը շատ է տարբերվում օրենսդիրի միջոցով ճշտված տարիքից: Այս հետազոտությունների համաձայն՝ աղջիկ երեխաների արբունքի տարիքի միջինը Թեհրան քաղաքում տասներեքն է, որը չորս տարի տարբերվում է օրենքի ճշտած արբունքի տարիքից:

Ներքևում բերված աղյուսակը մի նմուշ է տարբեր տարիքներում արբունքի զոյացման և ցրվածության մասին¹⁰:

Բուժքուրական ուսումնարանի աղջիկների արբունքի տարիքի աղյուսակ ընդհանուր թիվը՝ 400 հոգի	
տարիքային խումբ	արբունքի հաճախականություն
9-10 տարեկան	4 հոգի
10-11 տարեկան	3 հոգի
11-12 տարեկան	13 հոգի
12-13 տարեկան	49 հոգի
13-14 տարեկան	79 հոգի
14-15 տարեկան	102 հոգի
15-16 տարեկան	75 հոգի
16-17 տարեկան	38 հոգի
17-18 տարեկան	11 հոգի
18 տարեկան	27 հոգի

Ինչպես նկատվում է սույն աղյուսակում, արբունքի առավելագույն հաճախականությունը՝ 14-15 տարեկանում է, իսկ նվազագույնը՝ 10-11 տարեկանում: Աղյուսակի տարիքային վերջին իմբերի մեջ, այսինքն՝ 14-18 տարեկանում, հաճախականության հանրագումարը կազմում է 253 հոգի 400 հոգուց, որը մատնացույց է անում վիճակագրական նմուշի բարձր մեծամասնությունը՝ ավելի քան 63%-ը: Հետևաբար, առաջնորդվելով սույն հետազոտության արդյունքներով, կարելի ասել, որ Թեհրան քաղաքում աղջիկների արբունքի ամենայինական ու հաճախական հանդիպող տարիքը՝ 14-15 տարեկանի շրջանն է: Այս նույն աղյուսակի տարիքային առաջին երեք խմբավորումների՝ 9-12 տարեկան աղջիկների մոտ արբունքը կազմում է վիճակագրական նմուշի ընդամենը 5%-ը:

Այստեղից եզրակացություն. Ի՞նչ քաղաքացիական օրենսգրքի 1210-րդ կետի թելադրանքը՝ ինը տարեկանը համարել աղջիկների տեսական հասունության ու չափահասության տարիք, ծայրահեղական է ու հեռու գիտական հիմունքներից և հասարակական իրողություններից: Նկատի առնելով, որ քրեական պատասխանատվության տարիքը ևս ճշտվում է այս օրինական թելադրանքից, սակայն ոչ առարկայական ու իրական հիմունքներով, հետևաբար Իրանի Իսլամական Հանրապետության իրավական համակարգի կարևորագույն անհրաժեշտություններից է շուտափույթ ձեռնարկել սրբագրելը և բարեփոխել քաղաքացիական օրենսգրքի 1210-րդ կետի չափահասության տարիքի մասին հոդվածը՝ այն համապատասխանեցնելով առարկայական պայմաններին ու գիտական հիմունքներին:

Ինչպես նկատվեց, հույժ կարեւը է անշափահասների տարիքային սահմանների լուսաբանումը, դրանց պարզաբանումն ու որոշակի բաժանումներով դասակարգելը, քանի որ առաջիններին շահերն ու իրավունքները պաշտպանելուց առաջ անհրաժեշտ է որոշակի պատկերացում կազմել նրանց տարիքային սահմանումների մասին, ինչը մեծապես կնպաստի նաև ձեռնարկվելիք հետազարյակությունը ու որոշումներին: Անշափահասների տարիքային ստորաբաժանումներն իրականացնելուց հետո միայն հնարավոր կդառնա անդրադասնալ նաև նրանց քաղաքացիական ու քրեական պատասխանատվության տարիքին, նրանց կողմից իրականացված հանցանքների աստիճաններին ու կայացված վճիռների ու սահմանված պատիժների ծանրությանը: «Քրեական պա-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

տասխանատվության հասակը այն տարիքն է, երբ անհատն արդեն ի վիճակի է կատարյալ չափահասի պես իր կատարած հանցանքի դիմաց կրել համապատասխան պատիժ»¹¹: Եվ քանի որ քրեական օրենքները մշակվել են քրեական պատասխանատվության սահմաններում, ուստի անհատ-քաղաքացին ի վիճակի կիրար փոխհատուցել կատարած խախտման կամ հանցանքի համար, երբ ի վիճակի կիրար նախ ճանաչել այն: Կնշանակի, թե առանց որոշակի պատկերացում կազմելու «անչափահասության» տարբեր փուլերի ու տարիքային մանրութների մասին, ոչ միայն դժվար, այլև անհնար կիրար պարզել նաև քաղաքացիական և, որ ավելի էական է, քրեական պատասխանատվության որոշակի տարիքի սահմանները:

Հեղինակիս կարծիքով և իրեն գործնական առաջարկ՝ գտնում ենք, որ ԻԻՀ-ում օրենսդիր իշխանությանը անհրաժեշտ է չափահասության և քրեական հասունության նյութերի կապակցությամբ առկա քննադատությունները նվազեցնելու և այդ առումով իրավական կացությունը կարգավորելու նպատակով բարեփոխման ենթարկի տվյալ օրենքները: Այս իմաստով բարեբեր ազդեցություն է ունենալու քրեական օրենսդրության մեջ քրեական

հասունության հասկացությունը մտցնելը՝ նախաձեռնելով քրեական աստիճանական պատասխանատվության ձևը, որն Իրանում նախընթաց է ունեցել Իրանի Խալամական Հեղափոխությունից (1979 թ.) առաջ նույնական: Այսինքն՝ քրեական չափահասության տարիքի հետ, աղջկեների և տղաների պարագայում համապատասխանարար 9 և 15 լուսնային տարին նկատի առնելով՝ դրանով հստակեցնի, որ այդ տարիքից ցածր երեխան, ոչ թե դաստիարակչական որևէ պատասխանատվությունից, հետապնդումից ու հաշվետվությունից: Արրունքին հաջորդող տարիքում ևս պետք է ծշտել ու նկատի առնել մանկության և պատանեկության տարիքների և հասարակության ժամանակակից պահանջները, ձևակերպել քրեական աստիճանական պատասխանատվությունը՝ հստակ դարձնելով, որ իշխալ անհատներին հնարավոր է քրեական հետապնդման ենթարկելու ու տարիքային առանձին խմբավորումներին համապատասխան պատժից, կարգապահական ու դաստիարակչական գործողություններ ձեռնարկել:

¹ Դեկիսոնա Այ Աքքար. Պարսկենի արմատական բառարան, հատոր 33, «Սիրոս» իրատարակչություն, Թեհրան, 1335, էջ 275:

² Քանի որ լուսնային յուրաքանչյուր տարի ունի 254 օր, ուստի իսլամական արեգակնային, ինչպես նաև քրիստոնեական տարեքվերի համաձայն՝ անշափահաս են համարվում տասնչորս ու կես տարին լրացրած տղաներն ու ուր ու կես տարին լրացրած աղջկեները:

³ Քաշեֆի Էսմայիլ. «Մաշհադ քաղաքի անօրևան երեխաների իրավական ու քրեարանական իրավիճակի ուսումնասիրությունը», Մազհատրոսական դիպլոմային աշխատանք, Թեհրանի պետական համալսարանի իրավաբանության ու քաղաքական գիտությունների Ֆակուլտետ, քրեարանության ամբիոն, Թեհրան, 1379, էջ 35-36:

⁴ Էրադի Շիրին. «Մանկանց իրավունքները», հատոր 1-ին, «Ակնարկ Իրանի երեխաների իրավունքներին», 4-րդ տպագրություն, «Քանոն» իրատարակչություն, Թեհրան, 1375, էջ 148:

⁵ Նաև «Capacity to exercise, այսինքն՝ օրենքի գործադրման կարողականություն, որի դիմաց կա նաև capacity to acquire հասկացությունը, որը նշանակում է ձեռք բերված օրենքը»:

⁶ Վալիդի Մոհամմադ Սալիհ. «Ընդհանուր քրեական օրենսգիրք, քրեական պատասխանատվություն (հանցագործություն, համագործակցություն, հանցագություն)», հատոր 3-րդ, 1-ին տպագրություն, «Նաշր դար» հրատարակչություն, Թեհրան, 1373, էջ 164:

⁷ «Սուլք Ղուրան». հայերեն ամրողական քարզմանությունը և ծանոքագրությունը, քարզմանությունը պարսկենից՝ Էդիկ Հախվերդյանի, Հայաստանի Հանրապետությունում Իրանի Խալամական Հանրապետության դեսպանության նախաձեռնություն, «Հայաստան» հրատարակչություն, Երևան, 2006-2007թ..

⁸ Մանրապատումները Մոհամմադ մարզարեկի և նրան հաջորդող տասներկու շիա իմամների վարքն ու նրանց խորերի ընդհանուր համակարգն է, որը համարվում է Խալամական օրենքների մեկնաբանման կարևորագույն աղբյուրներից մեկը:

⁹ Ֆնն Գելան, Գերհարդ, «Սիցազգային իրավունք, նյութեր միջազգային ընդհանուր իրավունքի մասին», հատոր 2-րդ, քարզմանությունը Մոհամմադ Հոսեբին Հաթեզյանի, «Սիզան» իրատարակություն, Թեհրան, 1379, էջ 653:

¹⁰ Շամյարի Հուշանգ. «751 երեխաների ու պատանիների հանցագործություն», 3-րդ տպագրություն, «Վիսքար»

հրատարակչություն, Թեհրան, 1372, էջ 68:

Աշուրի Սոհամմադ. «Հանցագործ պատաճիների վերաբերյալ մշակված նոր ռազմավարությունները», Թեհրան, 1379, էջ 71:

Գրականության ցանկ

1. Աշուրի Սոհամմադ. «Հանցագործ պատաճիների վերաբերյալ մշակված նոր ռազմավարությունները», «Ամիրքարիր» հրատարակչություն, Թեհրան, 1379:
2. Դեհսուդա Ավի Աքբար. «Արմատական բառարան», հատոր 33-րդ, «Սիրոս» հրատարակչություն, Թեհրան, 1335:
3. Շամյարի Հուշանգ. «Հանցագործ մանուկներն ու պատաճիները», «Վիստար» հրատարակչություն, Թեհրան, 1372:
4. Ֆոն Գելան Գերհարդ. «Միջազգային իրավունքը, նյութեր միջազգային ընդհանուր իրավունքի մասին» հատոր 2-րդ, քարգմանություն Սոհամմադ Հոսեյն Հաֆեզյանի, «Միզան» հրատարակչություն, Թեհրան, 1379:
5. Էրարի Շիրին. «Մանկանց իրավունքները», հատոր 1-ին, «Ազմարկ Իրանի երեխաների իրավունքներին», 4-րդ տպագրություն, «Քանուն» հրատարակչություն, Թեհրան, 1375:
6. «Սուրբ Ղուրան». հայերեն ամրողական քարգմանությունը և ծանոթագրությունը, քարգմանությունը պարսկերենից՝ Եղիկ Հախվերդյանի, Հայաստանի Հանրապետությունում Իրանի Խորհրդական Հանրապետության դեսպանության նախաձեռնություն, «Հայաստան» հրատարակչություն, Երևան, 2006-2007թ..
7. Քաշեֆի Էսմայիլ. «Մաշհադ քաղաքի անօթևան երեխաների իրավական ու քրեարանական իրավիճակի ուսումնասիրությունը», Սահմանադրության դիվլումային աշխատանք, Թեհրանի պետական համալսարանի՝ իրավաբանության ու քաղաքական գիտությունների Ֆակուլտետ, Քրեարանության ամբիոն, Թեհրան, 1379:
8. Վալիդի Սոհամմադ Սալիհ. «Ընդհանուր քրեական օրենսգիրք, քրեական պատասխանատվություն (հանցագործություն, համագործակցություն, հանցակցություն)», հատոր 3-րդ, «Նաշրդար» հրատարակչություն, 1-ին տպագրություն, Թեհրան, 1373:

РЕЗЮМЕ

Возраст уголовной ответственности в законодательстве Исламской Республики Иран

В уголовном законодательстве Исламской Республики Иран, особенно в соответствии с первым приложением статьи (пункта) 49 “Исламского закона наказания”, в отличии от прошлых законов, возраст уголовной ответственности определяется на основе критерии исламской религии (“Каноническая зрелость”).

На практике органы исполнения наказания Ирана, вместо представления интерпретации “канонической зрелости”, обосновали его в “Гражданском кодексе”, который предполагает сексуальную или физическую зрелость и на основе этого считают, что девочек возраста 9-ти лун и мальчиков возраста 15-ти лун можно наказывать также как и взрослых.

В статье наряду с обсуждением и анализом принципов и стандартов возраста уголовной ответственности в праве Исламской Республики Иран представлены недостатки и проблемы этого направления, а также возможные методы и процедуры их устранения и сглаживания.

SUMMARY

The age of penal responsibility in Islamic Republic of Iran's law

In the penal codes of Iran, according to annex one of article 49 of Islamic Punishment law, in specific, unlike the past rules, the “Canonical maturity” is determined as the penal maturity grown age. In practice the penal authorities, instead of presenting the interpretation of Canonical maturity entrust the definition expressed in the civil law which is assumed as to be in accordance with the gender maturity, that is 9 years (Lunar) of age for girls and 15 years (Lunar) of age for boys who will be subject to legal punishment. This article seeks to analyze and assess the criterion of the drawbacks of the penal puberty in Iran and introduce proper procedures.

ԿԱՐԻՆԵ ՀԱԿՈԲՅԱՆ

Հայուսական (սլավոնական) համալսարանի իրավունքի
և քաղաքականության ինստիտուտի միջազգային և
եվրոպական իրավունքի ամբիոնի հայցորդ



ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ ԾՐՁԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՄԻՋԱՉԳԱՅԻՆ- ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԵՔԱՏՈՒՄ

Մարդկային հասարակությունը ներկայում գարգանում է տեխնոգին քաղաքակրթության պայմաններում, որտեղ մարդն ինքն իրեն անգնահատելի մասշտաբներում հակադրել է բնական միջավայրին: XX-XXI դարերի սահմանագծին շրջակա միջավայրի վրա ազդեցության արդյունքները հասան այնպիսի չափերի, որ մարդն իր գործունեությամբ արդեն դարձավ վտանգավոր ինքն իր համար: Պատմությունից հայտնի է, որ Էկոլոգիական աղետները, վերածվելով տարաբնույթ ճգնաժամերի, բազմից են նպաստել նույնիսկ քաղաքակրթյունների կործանմանը:

Կայուն զարգացման հայեցակարգը ժամանակակից աշխարհի միջազգային հարաբերությունների նոր պարադիգմա է, թեև այն իր արմատներով հասնում է մինչև XX դարի սկիզբը, եթե մարդը և բնությունը սկսեցին դիտարկվել որպես մեկ միասնական ամբողջություն: XX դարը նշանավորվեց նրանով, որ դարասկզբին հայտնի ոռու ակադեմիկոս Վ.Ի.Վերնադսկու կողմից առաջ քաշվեց նոոսֆերայի /նոոլորտի/ տեսությունը, որը հանդիսանում է կայուն զարգացման հայեցակարգի սկզբնադրյուրը: Ուստական գիտական դպրոցների առանձին ներկայացուցիչներ կայուն զարգացման հայեցակարգի սաղմեր են տեսնում անգամ Կ.Է. Ֆիոլկովսկու տեսության մեջ: Վերջինս առաջարկում էր գալակտիկայի մյուս մոլորակներն էլ բնակեցնել, քանի մարդկության զարգացման այդժամանակյա տեմպերը արդեն վտանգում էին Երկիր մոլորակի վրա կյանքի գոյությունը¹: Նման եզրահանգումը անշուշտ ֆանտասիկայի ոլորտից էր, սակայն այն իմանավորվում էր մոլորակի բնակչության թվի երկրաչափական ածով և դրանով պայմանավորված՝ նաև շրջակա միջավայրի այլափխությամբ: Սակայն, ինչպես իմանավոր կերպով նշվում է գրականության մեջ, XX դարում բռնկված

երկու համաշխարհային պատերազմները կասեցրին գիտության այս ոլորտի զարգացումը՝ առաջին պահն մղելով քայլքայիշ պատերազմների անքույլատրելիության և Երկրի վրա խաղաղության ու անվտանգության ապահովման խնդիրը:

XX դարի 70-ական թվականները կարելի է բնութագրել որպես միջազգային էկոլոգիական իրավունքի զարգացման բեկումային ժամանակաշրջան: Հանրահայտ Հռոմեական ակումբն առաջինն էր, որ անդրադարձավ շրջակա միջավարի և տնտեսական ու դեմոքրաֆիական հիմնախնդիրների հարաբերակցությանը: 1972թ. նշանավորվեց նաև այն հանգամանքով, որ Հռոմի ակումբի կողմից լույս տեսավ «Աճի սահմանաշափեր» աշխատությունը: Այն մեծ աղմուկ առաջացրեց, քանզի այդ աշխատության մեջ առաջ քաշված գաղափարներում անմիջականորեն նշված էր, որ բնական ռեսուրսները անսպառ չեն, և եթե շարունակվի մարդկության զարգացումը նման տեմպերով, և շրջակա միջավայրի պահպանության ուղղությամբ հրատապ քայլեր չեն կատարվեն, ապա դրանք կքայլքայի արդեն մինչև 2000 թվականը, ինչն էլ բնականաբար կհանգեցնի աղետալի հետևանքների²: Նկատի ունենալով, որ Հռոմի ակումբում ներգրավված էին արդյունաբերողներ, դրանք բնականաբար պետք է որ շահագրգուված լինեին իրենց տնտեսական շահով և կուտակված կապիտալի բազմապատկմանը, սակայն նրանք անձամբ առաջին հերթին ցանկացան մարդկության ուշադրությունը հրավիրել այդ անսահմանափակ աճի բացասական հետևանքների վրա:

Փաստորեն, մարդկությունը գոյատևում է մի մոլորակի վրա, որի բնական ռեսուրսների վերականգնման արագությունը շատ անգամ ավելի դանդաղ է, քան մարդկության կողմից դրա սպառումն է: Ակումբի դիտարկումները պայմանավորված էին

Էկոլոգիական և տնտեսական կայունության ներդրման անհրաժեշտությամբ։ Ըստ Հռոմի ակումբի՝ պետք է ստեղծվի այնպիսի հավասարակշռված միջավայր, որի պայմաններում մարդն ի վիճակի կլիմի և բավարարել իր հիմնական պահանջնունքները, և իրացնել նաև իր ստեղծագործական ներուժը։ Էկոլոգիական բարեկեցությունը կախվածության մեջ է գտնվում նաև սոցիալական հավասարակշռվածությունից և կայունությունից։ Այդ մոտեցումն, անշուշտ, հատուկ է բացառիկ բարձր մշակույթի և գիտակցության տեր անձանց, որոնց աշխարհայացքը չի սահմանափակվում միայն սեփական կարիքների բավարարմամբ։ Այս պրատումներն ել հենց սկիզբ դրեցին ժամանակակից քաղաքակրթության ուղղությունությանը։ Եվ հենց այդ գաղափարն էլ հետագայում իր զարգացումն ունեցավ կայուն զարգացման հայեցակարգում։

Պետք է կայուն զարգացման համատեքստում դիտարկել նաև 1972թ. «Մարդու շրջակա միջավայրի Ստոկհոլմյան հոչակագիրը», որում թեև անմիջականորեն չեր հիշատակվում «կայուն զարգացում» եզրույթը, սակայն այդ փաստարդի նախարանում ընդգծվում էր այն կապը, որ գոյություն ունի շրջակա միջավայրի պահպանության և սոցիալ-տնտեսական հետամնացության միջև։ Հոչակագրի քսանվեց սկզբունքներում ամփոփված են ազատության, հավասարության, խաղաղ գոյատևման, համագործակցության, աղքատության դեմ պայքարի, զարգացող պետություններին աջակցության և մյուս գաղափարները։ Զարգացող պետություններում շրջակա միջավայրի հետ կապված խնդիրների մեծամասնությունը պայմանափորված է չափից ավելի ցածր զարգացման մակարդակով։ Միլիոնավոր մարդիկ դեռևս ապրում են այնպիսի պայմաններում, որոնք չեն ապահովում մարդու արժանի գոյությունը։ Նրանք ունեն սննդի և հագուստի, բնակարանի և կրթության, բժշկության և սանիտարա-հիգիենիկ սպասարկման կարիք։ Այդ իսկ պատճառով զարգացող պետությունները պետք է իրենց ջանքերը ուղղորդեն այդ միլիոնավորների զարգացմանը՝ ելնելով իրենց առաջնահերթ խնդիրներից և շրջակա միջավայրի որակի պահպանության ու բարեկալման անհրաժեշտությունից³։ Կայուն զարգացման հայեցակարգի ձևակորման եռյունը բացահայտելու համար անհրաժեշտ է անդրադառնալ Ստոկհոլմյան հոչա-

կագրի հատկապես 13-րդ և 14-րդ սկզբունքներին։ Մասնավորապես, առավել ուսցինալ ուսուրաների կառավարում ապահովելու նպատակով և դրանով իսկ շրջակա միջավայրը բարեկալվելու ուղղությամբ պետությունները պետք է մշակեն միասնական և համակարգված մոտեցում իրենց զարգացման պլանավորման գործում ապահովելու համար, որ պեսզի այդ զարգացումը համապատասխանի շրջակա միջավայրի պահպանության և բարեկալման պահանջներին՝ ի շահ այդ պետությունների բնակչության (սկզբունք 13)։ Ռացիոնալ պլանավորումը հանդիսանում է զարգացման պահանջների և շրջակա միջավայրի պահպանության ու բարեկալման պահանջների միջև ցանկացած անհամապատասխանության կարգավորման կարևոր միջոցը (սկզբունք 14)⁴։

Նշված միջազգային փաստաթղթի առնչությամբ հարկ է ընդգծել, որ չնայած ոչ մի պետություն ուղղակի պարտավորված չէ կատարելու հոչակագրային բնույթ կրող այդ փաստաթղթում ամրագրված պահանջները /soft law/, սակայն պրակտիկորեն բոլոր պետությունները, անկախ իրենց զաղափարական, տնտեսական կամ կրնական առանձնահատկություններից, անհրաժեշտ համարեցին ապագայի շուրջ իրենց պլանները կառուցել և իրենց քաղաքականությունը ուղղրդել հաշվի առնելով հոչակագրում ամրագրված հիմնադրույթները։

Զարգացման գաղափարի արմատավորման և այդ գաղափարը արդեն որպես հայեցակարգ ձևակորվելու հաջորդ փուլը XX դարի 80-ական թվականներն են, երբ արդեն արքիոնատիկ դարձավ այն կապը, որ գոյություն ունի շրջակա միջավայրի պահպանության ու պաշտպանության և զարգացման միջև։ 1983թ. ՍԱԿ-ի նախաձեռնությամբ ստեղծվեց Շրջակա միջավայրի և զարգացման միջազգային հանձնաժողովը, որը դեկավորում էր Նորվեգիայի վարչապետ, բնապահպանության նախկին նախարար Գրո Հարլեմ Բրունթլանդը⁵։ Հանձնաժողովում էին այդ ժամանակների կարկառուն գիտական և քաղաքական գործիչներ, որոնց՝ 1983-1987թթ. ընկած ժամանակահատվածի աշխատանքներն ամփոփվեցին «Մեր ընդհանուր ապագան» վերտառությամբ գեկույցում։ Դրանում ամրագրված է շրջակա միջավայրի ոլորտում երկարաժամկետ ուազմավարություն, որը հնարավորություն կտա ապահովել կայուն զարգացումը

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

մինչև 2000 թվականը և դրանից հետո: Զեկույցը հրապարակվեց 1987թ., և դրանում առաջին անգամ տրվեց «կայուն զարգացում» եզրույթի սահմանումը. զարգացում, որը բավարարում է ներկա սերնդի պահանջմունքներն առանց փոխանցելու ապագա սերունդների կարողությունը՝ բավարարելու սեփական պահանջմունքները⁶: Այլ կերպ ասած, կայուն զարգացման հիմնական գործոնը, ներկա և ապագա սերունդների կյանքի համար, բարեկեցիկ շրջակա միջավայրն է⁷:

Տնտեսական զարգացումը, սոցիալական զարգացումը և շրջակա միջավայրի պահպանությունը հանդիսանում են կայուն զարգացման փոխկապակցված և փոխլրացնող բաղադրիչները: Կայուն տնտեսական աճը բոլոր պետությունների տնտեսական և սոցիալական զարգացման անհրաժեշտ նախապայմանն է: Նման աճի պայմաններում միայն պետություններն են ի վիճակի բարձրացնել իրենց ժողովուրդների կենսամակարդակը՝ արմատախիլ անելով աղքատությունը, սովոր, հիվանդություններն ու անգրագիտությունը: Տնտեսական աճը կարող է աջակցել զարգացմանը միայն այն դեպքում, եթե հաշվի են առնվում հավասարության, սոցիալական արդարության ու էկոլոգիական նկատողությանը: Զարգացումը պետք է փոխկապակցվի այնպիսի միջոցառումների հետ, որոնք հնարավորություն են տալիս բարելավել մարդու կյանքի պայմանները և որակը: Զարգացման հիմքում ընկած են առկա բնական ռեսուրսների և էկոլոգիական ներուժի նկատմամբ հոգատար վերաբերմունքը և անխնա քայլայված շրջակա միջավայրի վերականգնման ձգտումը: Զարգացումը, անշուշտ, ազդեցություն ունի Երկրի էկոլոգիայի վրա:

Կարող ենք առանձնացնել այդ ազդեցության առնվազն երկու դրսնորում. նախ զարգացումն անհնար է առանց բնական ռեսուրսների օգտագործման, և երկրորդ՝ անխուսափելի են արտադրական և այլ գործընթացների ազդեցությունը շրջակա միջավայրի վրա: Զարգացման օպտիմալ արդյունքներին հասնել շրջակա միջավայրին մինհնալ վճար հասցնելով. ահա սա է կայուն զարգացման հայեցակարգի հիմնական խնդիրը:

Էկոլոգիական ոլորտում զարգացումը կարող է ճանաչվել կայուն հետևյալ երեք պայմանների պահպանման դեպքում. 1. Վերականգնվող բնական ռեսուրսների օգտագործումը այն ծավալնե-

րում, որոնք չեն գերազանցում դրանց վերարտադրության տեմպերը, 2. բափոնները և արտանետումները իրականացվում են այնպիսի ծավալներով, որոնք չեն գերազանցում դրանք կլանելու էկոհամակարգի կարողությունը, 3. չվերականգնվող ռեսուրսները օգտագործվում են «գրեթե կայուն» կերպով՝ փոխարինելով դրանք վերականգնվողներով և նոր տեխնոլոգիաների ու նորու հասու ներդրմամբ⁸:

Այսպիսով, 80-ական թվականների ընթացքում քայլ առ քայլ ձևավորվեց ժողովրդավարության վրա հիմնված գլոբալ պլանավորման և կառավարման նոր հայեցակարգ, որն ուղղորդված է դեպի մարդկության հումանիստական նպատակները:

1992թ. Ռիո դե Ժանեյրոյում պետությունները պատմական քայլ կատարեցին երկրագնդի ապագայի ապահովման ճանապարհին՝ ընդունելով «Շրջակա միջավայրի պահպանության և զարգացման հոչակագիրը»⁹ և «XXI դարի օրակարգը»¹⁰: Վերջինս իրենից ներկայացնում է կայուն զարգացման ուղղությամբ գլոբալ գործողությունների համապարփակ ծրագիր: Դրանում կառավարությունները նախանշեցին այնպիսի միջոցառումներ, որոնք հնարավորություն կստեղծեն տնտեսական զարգացման ժամանակակից մոդելը վերաբերագծել դեպի շրջակա միջավայրի պահպանությունը և բնական ռեսուրսների վերականգնումը, քանզի հենց վերջիններու է պայմանավորված տնտեսական աճը և զարգացումը: Այդ ուղղությունները ներառում են մքննորդայի պահպանությունը, կենսաբազմազանության վերականգնումը, ընդերքի քայլայումը և անապատացումը:

Ռիոյի հոչակագրում կրկնվում են Ստոկհոլմյան հոչակագրի առանձին դրույթներ, սակայն դրանք նաև միմյանցից տարբերվում են հիմնական փիլիսոփայությամբ և գաղափարախոսությամբ: Խոսքը Բրունելանդի գեկույցում ամրագրված կայուն զարգացման հայեցակարգի մասին է, որը միավորել է շրջակա միջավայրի պահպանությունը և զարգացումը: Այստեղ անհրաժեշտ է վկայակոչել Ռիոյի հոչակագրի 4-րդ հոդվածը, համաձայն որի՝ «կայուն զարգացման հասնելու համար շրջակա միջավայրի պահպանությունը պետք է կազմի այդ գործընթացի անբաժան մասը և չի կարող դիտարկվել դրանից բաժան»: Ռիոյի 2-րդ սկզբունքը, որը վերաբերում է շրջակա միջավայրի վրա անդրսահմանային ազդեցությանը, վե-

րահաստատում է Ստոլկիոլյան 21-րդ սկզբունքը՝ ավելացնելով միայն «զարգացում» եզրույթը: Այլ հիմնարար դրույթներ է պարունակում 10-րդ սկզբունքը՝ սահմանելով շրջակա միջավայրին վերաբերող և պետական մարմինների տրամադրության տակ եղած տեղեկատվության մատչելիությունը և, որ ամենակարևորն է, որոշումներ կայացնելու գործնքացին մասնակցելու հնարավորությունը, 13-րդ սկզբունքը, որը վերաբերում է էկոլոգիական վճառ հասցնելու դեպքում պատասխանատվությանը և փոխսհատուցմանը, և վերջապես 18-րդ և 19-րդ սկզբունքները, որոնք սահմանում են պետությունների պարտավորությունը՝ անհապաղ տեղեկացնելու այլ պետությանը բնական աղետների և արտակարգ իրավիճակների, ինչպես նաև այնպիսի գործունեության մասին, որը շրջակա միջավայրի վրա կարող է ունենալ բացասական ներազդեցություն: Հռչակագիրը ամրագրել է նաև որոշ նոր սկզբունքներ, մասնավորապես՝ կանխազգուշության սկզբունքը /Precautionary principle/ (15-րդ սկզբունք) և «Վճարում է աղտոտողը» սկզբունքը /polluter pays principle/ (16-րդ սկզբունք): 17-րդ սկզբունքում սահմանված շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության գնահատման ինստիտուտը, որը իր մանրամասն կարգավորումն էր ստացել նաև Ռիոյի համաժողովից մեկ տարի առաջ՝ 1991թ., ընդունված «Անդրսահմանային ենթառեքսուում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին» կոնվենցիայում¹¹:

Ռիոյի հռչակագրի մյուս սկզբունքները ավելի շատ քաղաքական բնույթի դեկավար հիմնադրույթներ են: Դրանք պայմանականորեն կարելի է բաժանել երեք խմբի: Առաջին խմբի սկզբունքները վերաբերում են զարգացմանը և պետություններում աղքատության հաղթահարմանը, երկրորդ խումբը վերաբերում է համաշխարհային տնտեսական կարգերին և առևտրային հարաբերություններին և, վերջապես, երրորդ խումբը՝ հասարակության մասնակցությանը: Վերջինիս մասով կարող ենք հիշատակել նաև 20-22-րդ սկզբունքները, որոնք վերաբերում են կանանց, երիտասարդության և բնիկ ազգաբնակչության մասնակցությանը բնական ռեսուրսների ռացիոնալ օգտագործման, զարգացման և համագործակցության գործում¹²:

Կայուն զարգացման հայեցակարգի կետրոնում մարդն է. նա համախմբում է շրջակա միջավայրի պահպանության, բարեխիղճ օգտագործ-

ման համատեքստում ներկա և ապագա սերունդների պահանջմունքները, կոչ է անում բոլոր պետություններին համագործակցել կայուն զարգացման պահովման ուղղությամբ: Այս խմաստով պետք է հղում կատարել Հռչակագրի 24-րդ սկզբունքին, համաձայն որի՝ խաղաղությունը, զարգացումը և շրջակա միջավայրի պահպանությունը փոխկապակցված են անբաժան¹³:

Ռիոյի համաժողովում ընդունված մյուս կարևորագույն փաստաթուղթը, ինչպես արդեն նշվեց, «XXI դարի օրակարգն» է, որն էլ հենց կայուն զարգացման հասնելու անհրաժեշտ միջոցառումների ծրագիրն է՝ բաղկացած է 4 բաժիններից. 1. սոցիալ-տնտեսական ասպեկտներ (այդ թվում միջազգային համագործակցություն, աղքատության դեմ պայքար, մարդու առողջության պահպանում և ամրապնդում և այլն), 2. զարգացման նպատակով ռեսուրսների պահպանություն և ռացիոնալ օգտագործում (այդ թվում մքննողրտային օդի, անտառների, ջրային ռեսուրսների պահպանություն և այլն), 3. բնակչության հիմնական խմբերի դերի ամրապնդում (այդ թվում կանայք, երիտասարդություն, բնիկ ժողովուրդներ, աշխատավորներ և արհմիություններ, հասարակական սեկտոր և այլն), 4. իրականացման միջոցներ (ֆինանսական ռեսուրսներ և մեխանիզմներ, էկոլոգիապես մաքուր տեխնոլոգիաների ներդրում, գիտությունը հանուն կայուն զարգացման, աջակցություն լրացրանականը, բնակչության տեղեկացվածության ու կաղընթարարականը և այլն)¹⁴:

XXI դարի օրակարգը կոչ է անում պետություններին ընդունել կայուն զարգացման ազգային ռազմավարություններ, որոնք պետք է մշակվեին հասարակության լայն շերտերի, այդ թվում նաև հասարակական կազմակերպությունների ակտիվ մասնակցությամբ: Երկրների կառավարությունների վրա դրվեց զարգացման այդ նոր ուղղությամբ շարժվելու պարտականությունը, սակայն նրանք պարտավոր են նաև սերտորեն համագործակցել նաև միջազգային կազմակերպությունների հետ: Գլոբալ մասշտաբներում համագործակցության գաղափարը կարմիր թելի նման անցնում է ամբողջ օրակարգի տեքստում:

Ռիոյից տարի անց Յոհաննեսբուրգում տեղի ունեցած գլոբալ բարձր մակարդակի հերթական հանդիպման ընթացքում կրկին ընդգրկվեց մինչ այդ ընդունված բոլոր բնապահպանական

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

փաստաբերում ամրագրված նպատակների ու ռազմավարությունների արդիականությունը: 2002թ. Կայուն զարգացման՝ Յոհաննեսրուրգի հոչակագրում հասուլ ուշադրության կենտրոնում են աղքատության հաղթահարումը, արտադրության և սպառման մողելների փոփոխությունը, շրջակա միջավայրի պահպանությունը և բնական ռեսուրսների ռացիոնալ օգտագործումը՝ որպես կայուն զարգացման ապահովման գլխավոր նպատակ և մարտահրավեր: Այդ ժամանակահատվածում, փաստորեն, դեռևս չեր վերացել զարգացած և զարգացող պետությունների միջև առկա տնտեսական և սոցիալական վիրիսարի տարբերությունները: Մարդկությունը քևակոխեց նոր հազարամյակ, բայց նրանց գոյատևման այդ նվազագույն պայմանները դեռևս պահպանված չեն: Այդ իսկ պատճառով աշխարհի առավել խոցելի հատվածների՝ Աֆրիկայի, Լատինական Ամերիկայի և մի շարք այլ տարածաշրջանների կայուն զարգացման ապահովումը օրիհասական խնդիր է:

Յոհաննեսրուրգյան հանդիպումների ժամանակ քննարվեցին նաև մի շարք այլ կարևոր էկոլոգիական խնդիրներ՝ կապված խմելու ջրով չափահովված մարդկանց բվաքանակի նվազեցման, Համաշխարհային օվկիանոսի ձկնային պաշարների վերականգնման, գործարար շրջանակներում կայուն զարգացման նկատմամբ վերաբերմունքի և մոտեցումների ներդրման ու արմատավորման, ինչպես նաև մարդու առողջության համար վնասակար քիմիական նյութերի արտադրության կրծատման հետ:

2002թ. ուշադրության կենտրոնում էր նաև արդյունաբերության այնպիսի ճյուղի զարգացումը, ինչպիսին է էներգետիկան: Եվ դա պատահական չէ, քանզի այլմնտրանքային էներգետիկ աղբյուրների հայտնաբերումը և դրա ներդրումը տնտեսության մեջ այսօր Ռիո+20 (2012թ.) փուլի հիմնական ուղղվածությունն է: «Կանաչ տնտեսության» ռազմավարությունը կայուն զարգացման հայեցակարգի նոր դրսևորումն է, որը կրկին հաստատում է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության հիմնական պատճառը: Զնավորվել է պարզ գիտակցություն, որ մարդկանց աղքատության վերացման այլ ճանապարհ չկա, քան նրանց զարգացման տեմպերի արագացումն է: Եվ վերջապես արդեն հոչակվել է, որ հիշատակված այդ բարդագույն խնդիրները լուծել առանց միջազգային հանրության մասնակցության անհնարինություն: Այդ իմաստով կայուն զարգացման հայեցակարգը հանդիսանում է մինչ օրս մշակված լավագույն իրատեսական գործիքակազմը, որը հնարավոր է դարձնում հետագա տնտեսական աճը բնական գործընթացների կայուն պահպանության պայմաններում:

միակ նախապայմանը:

Անփոփելով՝ պետք է ասել, որ համաշխարհային հանրության կողմից ընդունված կայուն զարգացման հայեցակարգը կարելի է համարել հիրավի հաջողված և առաջադիմական պատմական իրադարձություն: Կարելի է ասել նաև, որ այն դարձավ Վ.Ի.Վերնադսկու արդեն հիշատակված նոուֆերայի (նոոլորտի) տեսության նյութական և իրավական արտացոլումը: Եվ մինչև հայեցակարգի ձևավորումը, և այսօր առկա Հյուսիսի և Հարավի կամ, ինչպես ընդունված է ասել, զարգացած և զարգացող պետությունների միջև արդյունաբերական զարգացման միջև գոյություն ունեցող բնեուական տարրերությունն է, որ նպատեց այս հիմնահարցի արդիականացմանը: Շրջակա միջավայրի վիճակի հետ կապված վտանգները դարձան այնքան իրատեսական, որ պահանջում են անհետաձգելի լուծումներ, սկզբունքորեն այլ տեխնիկական քաղաքականություն: Երկիր նոլորտի վրա ապրող ազգաբնակչության երեք քարորդը ապրում է աղքատության պայմաններում, ինչն էլ հանդիսանում է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության հիմնական պատճառը: Զնավորվել է պարզ գիտակցություն, որ մարդկանց աղքատության վերացման այլ ճանապարհ չկա, քան նրանց զարգացման տեմպերի արագացումն է: Եվ վերջապես արդեն հոչակվել է, որ հիշատակված այդ բարդագույն խնդիրները լուծել առանց միջազգային հանրության մասնակցության անհնարինություն: Այդ իմաստով կայուն զարգացման հայեցակարգը հանդիսանում է մինչ օրս մշակված լավագույն իրատեսական գործիքակազմը, որը հնարավոր է դարձնում հետագա տնտեսական աճը բնական գործընթացների կայուն պահպանության պայմաններում:

¹ St'u Международное экологическое право, Учебник Казанского Университета, отв. Ред. Валеев Р.М. М. Статут. 2012, С. 446.

² Данилов-Данильян В.И., Посев К.С. “Экологический вызов и устойчивое развитие”, Учебное пособие, М.: Прогресс-Традиции. 2000, С. 80.

³ Declaration of the United Nations Conference on the Human Environment
<http://www.unep.org/Documents.Multilingual/Default.asp?documentid=97&articleid=1503>

⁴ Declaration of the United Nations Conference on the Human Environment
<http://www.unep.org/Documents.Multilingual/Default.asp?documentid=97&articleid=1503>

⁵ Process of Preparation of the Environmental Perspective to the Year 2000 and Beyond, A/Res, 38/161,<http://daccess-dds-ny.un.org/doc/RESOLUTION/GEN/NR0/445/53/IMG/NR044553.pdf?OpenElement>

⁶ Report of the World Commission on Environment and Development: Our Common Future,
<http://www.un-documents.net/wced-ocf.htm>

⁷ Բրունլամիդի գեկույցի հրապարակումից հետո 1988թ. Ժնևում ձևավորվեց «Մեր կայուն զարգացման համար կենտրոն», որը շարունակում էր աշխատանքները կայուն զարգացման առաջնահերթությունները սահմանելու ուղղությամբ:

⁸ Герасимчук И. “Экологическая практика транснациональных корпораций” Москва. 2007, Munich Personal RePEc Archive. <http://mpra.ub.uni-muenchen.de/9906/1/gerasimchuk.pdf>

⁹ Report of the United Nations Conference on Environment and Development, Rio Declaration on Environment and Development, A/Conf.151/26 (vol. I), <http://www.un.org/documents/ga/conf151/aconf15126-1annex1.htm>

¹⁰ United Nations Conference on Environment & Development, AGENDA 21, <http://sustainabledevelopment.un.org/content/documents/Agenda21.pdf>

¹¹ Convention on Environmental Impact Assessment in a Transboundary Context,
http://treaties.un.org/doc/Treaties/1991/02/19910225%2008-29%20PM/Ch_XXVII_04p.pdf

¹² Aleksandre Kiss, Dinah Shelton, “Guide to International Environmental Law”, Martinus Nijhoff Publishers, Leiden/Boston, page 40

¹³ Rio Declaration on Environment and Development, A/Conf.151/26 (vol. I)
<http://www.un.org/documents/ga/conf151/aconf15126-1annex1.htm>

¹⁴ United Nations Conference on Environment & Development, AGENDA 21, <http://sustainabledevelopment.un.org/content/documents/Agenda21.pdf>

РЕЗЮМЕ

Концепция устойчивого развития в контексте международно-правовой охраны окружающей среды

Ключевые слова: устойчивое развитие, охрана окружающей среды, международное экологическое право.

В статье представлена история формирования и развития концепции устойчивого развития, как новой парадигмы международных отношений. Исследование начато с 1970-ых годов, с деятельности знаменитого Римского Клуба. Далее представлены международные Конференции 1992г. и 2002г., созванные под эгидой ООН и международные-правовые акты, принятые в рамках этих конференций.

SUMMARY

The concept of sustainable development in context of the international legal protection of the environment

Keywords: sustainable development, environmental protection, international environmental law.

This article presents the history of the formation and development of the concept of sustainable development as a new paradigm of international relations. The study began with the 1970s, with the work of the famous Club of Rome. Then it is researched the UN Conference, held in 1992 and 2002, as well as international legal acts, adopted in the framework of the conferences.

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ**ՆԱՐԻՆԵ ԴԱՎԹՅԱՆ**

Երևանի «Գլածոր» համալսարանի իրավագիտության
ամբիոնի հայցորդ

**ԻՐԱՎՈՒՔԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՈՐՊԵՍ
ԻՐԱՎՈՒՔԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՏՈՒԿ
ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ ԵՎ ԶԵՎԵՐԻ
ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀԻՄՆԱԿՆԵՐԸ**

Մինչ այժմ արված եզրակացություններին համապատասխան փորձենք տեսականորեն իմաստավորել իրավունքի կիրառման տեսակների և ձևերի հիմնախնդիրը:

Իրավունքի կիրառման կամ իրավակիրառման տեսակների և ձևերի վերաբերյալ զարդարեն առաջ են քաշվել դեռևս խորհրդային իրավունքի տեսության մեջ: Սակայն իրավակիրառման՝ որպես իրավունքի իրականացման հատուկ ձևի տեսակների վերաբերյալ խորհրդային իրավունքի տեսության մշակումները այսօրվա իրողությունների հետ համեմատած, հնացած մոտեցումներ են, քանի որ դրանք կառուցված են խորհրդային պետականական համակարգի վրա, որը չէր ընդունում իշխանությունների բաժանման տեսությունը և սկզբունքը: Նշանակում է՝ հիմնախնդիրը կարիք ունի լրացուցիչ հետազոտության՝ պետարակական արդի իրողությունների, պետականագիտության ու իրավունքի տեսության զարգացման արդի մակարդակի դիրքերից: Այդ հետազոտական խնդրի լուծման համար նախ փորձենք վեր հանել իրավունքի արդի տեսության մեջ առկա մոտեցումներն իրավակիրառ գործունեության տեսակների և ձևերի վերաբերյալ, այնուհետև համարենք դրանք պետականագիտության վերջին նվաճումների հետ և հանգել գիտականորեն ճշգրիտ եզրակացությունների:

Տեսաբանների տեսակետներն իրավակիրառ գործունեության տեսակների և ձևերի հարցում կարելի է քաֆանել երեք խմբի: Առաջին խմբի տեսաբաններն իրավունքի կիրառում՝ որպես իրավունքի իրականացման ձև, բաժանում են երկու ձևերի՝ օպերատիվ-գործադիր և իրավապահպան իրավակիրառում: Օպերատիվ-գործադիր իրավակիրառումը «ֆրավական նորմերի կարգադրագրերի կատարման կազմակերպումն է՝ դրական կարգավորումն անհատական իրավական ակտերի մի-

ջոցով: Ընդ որում, այս դեպքում կիրառվում է նորմի այն դիսպոզիցիան, որն ունի ոչ թե արգելող, այլ դրական բովանդակություն»: Իրավակիրառման իրավապահպան ձևն ուղղված է «ֆրավունքի նորմերը ցանկացած խախտումից պահպանելուն, պետական հարկադրանքն իրավախսութերի նկատմամբ կիրառելուն, նշանակված պատասխանատվության միջոցների կատարման ապահովմանը»¹: Ինչպես տեսնում ենք, այս երկու ձևերի առանձնացման չափանիշը կարգավորիչ նորմի բնույթը և համապատասխանաբար կարգավորվող վարքագծի բնույթն է՝ դրական, թե բացասական (իրավախսություն): Այս չափանիշով իրավունքի կիրառումը երկու տեսակի է բաժանում նաև Վ. Ն. Պրոտասյովը, միակ տարբերությամբ, որ նա դրանք անվանում է իրավակիրառման դրական և յուրիսդիկցիոն տեսակներ²: Ըստ նրա՝ «դրական իրավակիրառումը տեղի ունի միշտ, սակայն ոչ բոլոր նորմերի վերաբերմամբ, իսկ յուրիսդիկցիոն իրավակիրառումը կարող է վերաբերել ցանկացած նորմի, սակայն միայն դրա խախտման դեպքում»:

Հեղինակների երկրորդ խումբն իրավակիրառման մեջ առանձնացնում է երեք ձև՝

- 1) օպերատիվ-գործադիր իրավակիրառում,
- 2) իրավապահպան իրավակիրառում,
- 3) արդարադատություն (դատական իրավակիրառում):

Այս բաժանման կողմնակիցների դասակարգման չափանիշը և մոտեցման մեթոդաբանական հիմքերը սկզբունքորեն համընկնում են իրավակիրառման երկու բաժանման կողմնակիցների հետ, միակ տարբերությամբ, որ եռաձև դասակարգման կողմնակիցներն իրավակիրառման իրավապահպան ձևից իր հերթին առանձնացնում են արդարադատությունը (դատական իրավակիրառումը՝ իիմք ընդունելով դրա առանձնահատկությունները՝ իրականացնող հատուկ սուբյեկտ՝ դա-

տարան, և իրավակիրառման հատուկ ձև՝ դատավարական:

Ինչպես տեսնում ենք, այսպիսի դասակարգման մեջ կա դասակարգման չափանիշների շիլաշփոք: Իրավակիրառումը գործադիր-օպերատիվ և իրավապահպան ձևերի դասակարգման հիմքում դրվում են իրավունքի իրավաբանական գործառույթները և համապատասխանաբար իրավունքի նորմերի տեսակները՝ կարգավորիչ և իրավապահպան իրավական նորմեր: Սակայն երրորդ տեսակի առանձնացման չափանիշը համարվում է իրավակիրառման սուբյեկտը և իրավակիրառման դատավարական ձևը: Այսպիսի դասակարգումը մերժաբանական տեսանկյունից սխալ է, որովհետև միևնույն դասակարգման ընթացքում որոշ ձևերի առանձնացման չափանիշը փոխվում է: Հետևաբար, այդ դասակարգումն անընդունելի է:

Այսպիսով իրավակիրառումը ձևերի դասակարգելու չափանիշը պետք է համարել իրավունքի նորմի տեսակը՝ ըստ իրավունքի իրավաբանական գործառույթների և դրան համապատասխան առանձնացնել իրավակիրառման երկու ձև՝ օպերատիվ-գործադիր (դրական) և իրավապահպան (յուրիսդիկցիոն):

Իրավակիրառման ձևերի դասակարգման այս չափանիշի հետ միասին գրականության մեջ առաջ են քաշում նաև իրավակիրառման դասակարգման այլ չափանիշներ՝ ըստ իրավունքի ճյուղերի, իրավունքի նյութական և վարույթային նորմերի կիրառում՝ ըստ իրավակիրառում իրականացնող մարմինների⁴: Այս չափանիշներով դասակարգումները չենք դարձնի առանձին քնննարկման առարկա, քանի որ դրանք պարզաբանված են գրականության մեջ, որտեղ, սակայն, երեսն հանդիպում են առանց հստակ չափանիշների դասակարգումներ: Դրանց օրինակներից է իրավակիրառման իրավապահպան ձևի բաժանումը՝

ա) վերահսկիչ-հսկիչ գործունեություն,

բ) իրավապահովող գործունեություն (իրավունքի նորմերի կատարումն ապահովող գործունեություն),

գ) իրավական վեճերի լուծման և իրավախստումների վերաբերյալ գործերի քննություն,

դ) պետական հարկադրանքի կատարման գործունեություն⁵:

Այս դասակարգման մեջ հեղինակը նույնիսկ առաջ չի քաշել դասակարգման չափանիշը, այլ կատարել է հասարակ թվարկում:

Իրավակիրառական գործունեությունը, բացի ձևերի դասակարգելուց գրականության մեջ կա դրա բաժանումը տիպերի՝ ելնելով իրավակիրառումն իրականացնող սուբյեկտից, իրավակիրառման ձևերից և նպատակներից⁶: Անշուշտ, նման դասակարգումն ունի ուսցիունալ հատիկներ, սակայն, եթե նկատում ենք, դասակարգման մեջ չափանիշում դրված է երեք չափորոշիչներ՝ սուբյեկտ, ձև, նպատակ:

Իրավակիրառման տեսակները ձևերի ու տիպերի բաժանելուց բացի՝ գրականության մեջ երբեմն հանդիպում են նաև իրավակիրառման նոր տեսակների առաջադրման հիմնավորումներ՝ առանց այդ տեսակը դասակարգման որևէ խմբում ներառելու: Օրինակ, Մ. Ա. Ռաստլովն իրավունքի իրականացման յուրօրինակ ձև է համարում համապատասխան սուբյեկտների կողմից նորմատիվ ակտերի մեջնարարումը⁷:

Իրավունքի կիրառումը տեսակների և ձևերի դասակարգելու վերը բերված մոտեցումների քննարկումը ցույց է տալիս, որ այս հիմնահարցը կարիք ունի համակարգային և ամբողջական հետազոտության, ինչը հնարավորություն կտա կազմելու իրավունքի կիրառման տեսակների ամբողջական պատկերը: Այդ պատկերը կազմելու համար շատ կարևոր է չափանիշի ընտրությունը, որով կատարվելու է դասակարգումը, ինչպես նաև առաջադրված դասակարգման համապատասխանությունն ավելի լայն տեսական հայեցակարգերին: Որպես այդպիսի լայն տեսական հայեցակարգ, որ կարող է ուղղորդիչ դառնալ մեր այս հետազոտական խնդրի իրագործման համար, համարվում է «պետական իշխանության իրականացման իրավական ձևերի» կամ «պետության գործառույթների իրականացման ձևերի տեսությունը»: Այն, լինելով ավելի վերացարկված տեսական մոտեցում, քան իրավունքի կիրառման տեսությունը, ուղղորդիչ նշանակություն ունի մեր հետազոտության համար:

Պետական իշխանության կամ գործառույթների իրականացման իրավական ձևը պետության մարմինների միասեռ գործունեությունն է, որի միջոցով պետությունն իրականացնում է իր գործառույթները: Պետական իշխանության իրականացման իրավական ձևն ընթանում է իրավաբանորեն նշանակալի գործողությունների կատարմանը և հանգեցնում է իրավական հետևանքների: Ավանդաբար ընդունված է պետության գործունեության տեսակ համարել իրավաստեղծագործությունը,

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

իրավագործադրումը, իրավապահպանությունը: Օրինակ՝ Մ. Ի. Բայտինը պետական իշխանության սուբյեկտների գործունեության մեջ առանձնացնում է դրա իրավական և կազմակերպական ձևերը: Պետաշխանական գործունեության իրականացման ձևերը նա բաժանում է իրավական և կազմակերպական ձևերի: Դրանք նա բնորոշում է որպես պետական մարմինների արտաքին հատկանիշներով միասեռ գործունեություն, որի միջոցով իրականացվում են նրա գործառույթները: Իրավական ձևերն իրենց հերթին բաժանվում են իրավաստեղծ գործունեության (նորմատիվ ակտերի իրատարակում, իրավական նորմերի սահմանում կամ սանկցիափորում, փոփոխում կամ վերացում), իրավակիրառական գործունեության, որն ուղղված է օրենքների և ենթաօրենսդրական ակտերի կատարմանն իրավունքի կիրառման ակտերի իրապարակման ճանապարհով: Իրավակիրառ գործունեությունը Մ. Ի. Բայտինը բաժանում է օպերատիվ-գործադիր գործունեության (ամենօրյա գործադիր-կարգադրիչ գործունեություն իրավունքի կիրառման ակտերի ընդունման ճանապարհով), իրավապահպան գործունեություն (օպերատիվ աշխատանքն ուղղված իրավունքի նորմերը խախտումներից պաշտպանելուն, իրավունքի սուբյեկտներին տրված իրավունքների պաշտպանությունը, նրանց վրա դրված պարտականությունների կատարման ապահովմանը):⁸

Սակայն Մ. Ի. Բայտինը պետության գործառույթների իրականացման ձևերը դասակարգում է նաև որպես պետական գործունեության յուրահատուկ տեսակներ (ի տարբերություն ոչ պետական կազմակերպությունների): Որպես պետության կառուցակարգի հիմնական օղակների գործունեություն: Ըստ այդ հատկանիշի՝ նա պետության գործառույթների իրականացման հիմնական ձևեր է համարում օրենսդիր գործունեությունը, կառավարչական (վարչական) գործունեությունը, դատական գործունեությունը, վերահսկիչ-հսկիչ գործունեությունը:⁹ Վերջինիս տակ նա հասկանում է պետության գործառույթների իրականացում՝ օրինականության նկատմամբ պետական հսկողության և վերահսկողության բոլոր տարատեսակների գործողության միջոցով:

Իրավակիրառական գործունեությունը հանրային իշխանության մարմինների ու պաշտոնատար անձանց գործունեությունն է՝ ուղղված անհատական իրավաբանական գործերի քննությանը:

և լուծմանը, նորմատիվ ակտերի դրույթների (օրենքների) կենսագործմանը, որն ավարտվում է անհատական իրավական ակտի ընդունմամբ: Այդ գործունեության մեջ ամենապարզ տեսակն իրավագործադրումն է: Իրավագործադրումը՝ որպես իրավունքի կիրառման ձև, իրավապահպանական գործունեությունից (ներառյալ արդարադատությունից) տարբերվում է նրանով, որ կապված չէ ոչ իրավական վեճի հետ, ոչ ոչ իրավախսախտման հետ: Այդպիսի իրավակիրառական գործունեությունն ունի իրավապահությունը նշանակություն: Իրավակիրառման իրավապահպան ձևի խնդիրն է պահպանել իրավունքի նորմերը ցանկացած խախտումից, կիրառել պետական հարկադրանքն իրավախսախտների նկատմամբ, ապահովել նշանակված պատասխանատվության միջոցների կատարումը:

Արդի ժամանակաշրջանում մեկնարանողական իրավական գործունեության օրենսդրական կարգավորման առանձնահատկությունները հնարակորություն են տախս առաջ քաշելու տեսական դրույթ այն մասին, որ իրավակիրառման տեսակներից մեկն էլ մեկնարանողական իրավական գործունեությունն է: Խոսքը գնում է պաշտոնական մեկնարանման նորմատիվ տեսակի մասին: Ի տարբերություն դեպքային (կազուալ) մեկնարանման՝ նորմատիվ մեկնարանումն ունի ընդհանուր բնույթ և պարտադիր է տվյալ տեսակի բոլոր գործերի քննության և լուծման ժամանակ, եթե որ կիրառում են մեկնարանվող նորմը¹⁰: Պաշտոնական մեկնարանումն իրականացնում են օրենքով սահմանված պետական մարմինները՝ համապատասխան շահագրգիռ սուբյեկտների դիմումի հիման վրա՝ կոնկրետացնելով սահմանադրության կամ այլ ակտերի դրույթների պարզաբանում-մեկնարանում՝ առանց իրավագործադրման:

Պաշտոնական մեկնարանման տեսակներից մեկը լեզաւ մեկնարանումն է, եթե օրենքը որևէ պետական մարմնի օժողում է իրավունքով՝ մեկնարանելու այլ պետական մարմինների ընդունած նորմատիվ ակտերը: «Իրավական ակտերի» մասին ՀՀ օրենքը սահմանում է իրավական ակտերի դրույթների պարզաբանման ընթացակարգը (հոդվ. 87): Համաձայն այդ ընթացակարգի իրավական ակտի դրույթների ոչ հստակ կամ տարաբնույթ ընկալման՝ իրավական ակտն ավելի բարձր կամ նույն իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտին կամ նույն իրավական ակտի տարբեր

դրույթների հակասության կամ օրենքով նախատեսված այլ դեպքերում, իրավական ակտի ուժի մեջ մտնելու ժամկետի որոշման, իրավաբանական ուժ ունենալու հարցերի պարզաբանման, ինչպես նաև իրավական ակտի կիրառման բնագավառում ծագած այլ հարցերի ճշտման նպատակով տրվում է իրավական ակտի պարզաբանում¹¹:

«Իրավական ակտերի» նախն ՀՀ օրենքով սահմանված իրավական ակտերի դրույթների պարզաբանման ընթացակարգն ըստ Էության իրավակիրառում է:

Լեզաւ պաշտոնական նորմատիվ մեկնաբանման տարատեսակ է սահմանադրական նորմատիվ մեկնաբանումը, որը կարևոր նշանակություն ունի Սահմանադրության իմաստի միատեսակ ըմբռնման և կիրառման համար: Շատ երկրներում սահմանադրական կամ նման գործառույթ իրականացնող դատարաններն ունեն սահմանադրության դրույթների մեկնաբանման լիազորություն: Այդ մեկնաբանման արդյունքները պարտադիր են մնացած սուբյեկտների համար և ունեն նորմատիվ բնույթ ու նշանակություն¹²:

Այս իրավակարգավորումների առանձնահատկությունները հիմք են տալիս պնդելու, որ օրենքով սահմանված պաշտոնական մեկնաբանման այդ մոդելներն իրենց իրավական բնույթով իրավակիրառ գործունեություն են, որովհետև համապատասխանում են դրա բոլոր հատկանիշներին և ավարտվում են անհատական իրավական ակտերի ընդունմամբ: Հետևաբար, իրավակիրառման տեսակներից մեկը պաշտոնական իրավական մեկնաբանության գործունեությունն է, որի խնդիրը իրավական կարգավորման գործեթացում իրավապահովող, կոնկրետացնող նշանակությունն է: Պաշտոնական նորմատիվ մեկնաբանմամբ ապահովվում է իրավական նորմի կարգադրագրերի միօրինակ և ճշգրիտ կենսագործումը, որովհետև այն բացահայտում է մեկնաբանվող նորմի կամ ակտի իմաստը, գործողության ոլորտը, կիրառման պայմանները, իրավունքի սուբյեկտների շրջանակները, իրավունքների իրականացումը և դրանց պայմանները: Իր բնույթով այն կոնկրետացնող նշանակություն ունի՝ ինչպես ենթաօրենսդրական իրավաստեղծագործությունը:

Պետական իշխանության կամ պետության գործառույթների իրականացման իրավական ձևերից է վերահսկողական-հսկողական գործունեությունը: Կառավարման տեսությունը կառավար-

ման գործառույթների համակարգում հիմնական տեղ է հատկացնում վերահսկողության գործառույթին՝ միաժամանակ այն դիտարկելով որպես կառավարման վերջնափուլ¹³: Իրավական կարգավորման համակարգում վերահսկողությունը և հսկողությունն իրավական օրինականության ապահովման գլխավոր եղանակներից են:

Վերահսկողությունը տարրերվում է իրավական օրինականության ապահովման այլ ձևերից՝ ստուգումից և հսկողությունից¹⁴: Ի տարրերություն վերահսկողության՝ հսկողության դեպքում հսկողը չի միջամտում հսկվող օրյեկտի գործունեությանը, այլ միայն գնահատում է նրա գործունեությունն իրավական օրինականության դիրքերից: Կատարման ստուգումը վերահսկողությունից տարրերվում է իր նեղ բովանդակությամբ: Այն օբյեկտի փաստական գնահատումն է միայն: Վերահսկողության դեպքում վերահսկվող օրյեկտի գործունեությունը գնահատվում է և՝ իրավաօրինականության դիրքերից, և նպատակահարմարության դիրքերից: Ընդ որում, վերահսկողը միջամտում է վերահսկվողի գործունեությանը և կայացնում նրա կողմից կատարման համար պարտադիր որոշումներ: Ասվածը հիմք է տալիս պնդելու, որ իրավունքի իրականացման բոլոր ձևերի (անմիջական և միջնորդավորված) նկատմամբ իրականացվում է հսկողություն և վերահսկողություն, որոնք հանրային իրավական մարմինների գործունեություն են, այսինքն՝ իրավակիրառում: Իրավակիրառման այս տեսակի խնդիրը իրավունքի իրականացման այլ ձևերի գնահատումն է իրավական օրինականության դիրքերից: Իրավունքի կիրառման ձևով իրավունքի իրականացումը տեղի է ունեցել իրավագործադրմամբ կամ իրավապահպանությամբ: Վերահսկողությունը և հսկողությունը՝ որպես իրավակիրառման տեսակ, զուգորդում կամ հաջորդում են դրանց, կոչված են պարզել հսկվող-վերահսկվող օբյեկտում իրավունքի և դրա նորմերի իրականացման փաստական կացությունն իրավական օրինականության դիրքերից¹⁵: Այդպիսի գործունեությունն իր հատկանիշներով համապատասխանում է իրավակիրառմանը՝ միակ տարրերությամբ, որ այս դեպքում կատարվում է արդեն տեղի ունեցած իրավակիրառման ստուգում:

Այսպիսով, իրավակիրառ գործունեությունը տեսակների բաժանելու հարցում անհրաժեշտ է հաշվի առնել պետության գործառույթների իրականացման իրավական ձևերի վերաբերյալ տեսա-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

կան պատկերացումները, որոնք ավելի հարուսան քան իրավակիրառումը ձևերի ու տեսակների դասակարգելու վերը բերված մոտեցումները: Մյուս կողմից դասակարգման համար անհրաժեշտ է հիմք դարձնել իրավակիրառման առջև կանգնած խնդիրները, որոնք բխում են իրավական կարգավորման կառուցակարգի ամեն մի փուլի և ենթափուլի առջև դրված խնդիրներից: Իրավակիրառական գործունեությունը հանրային իշխանության մարմինների ու պաշտոնատար անձանց գործունեությունն է՝ ուղղված անհատական իրավաբանական գործերի քննությանը և լուծմանը, նորմատիվ ակտերի դրույթների (օրենքների) կենսագործմանը, որն ավարտվում է անհատական իրավական ակտի ընդունմամբ: Իրավակիրառման տեսակներն են գործադիր իրավակիրառումը (իրավագործադրումը), իրավապահպանությունը (ներառյալ՝ դատա-

կան), վերահսկողական-հսկողական իրավակիրառական գործունեությունը, մեկնարանողական իրավակիրառական գործունեությունը: Իրավագործադրումը՝ որպես իրավունքի կիրառման ձև, ունի իրավապահովող նշանակություն: Իրավակիրառման իրավապահպան ձևը (ներառյալ՝ արդարադատությունը) կապված է իրավական վեճի կամ իրավախախտման հետ: Պաշտոնական նորմատիվ մեկնարանումն իրականացնում են օրենքով սահմանված պետական մարմինները՝ համապատասխան շահագրգիռ սուբյեկտների դիմումի հիման վրա՝ կոնկրետացնելով իրավական ակտերի դրույթները, պարզաբանելով-մեկնարանելով դրանք առանց իրավագործադրման:

¹ Տե՛ս Գоловистикова А.Н., Дмитриев Ю.А. Проблемы теории государства и права.— М., Изд-во ЭКСМО, 2005, С. 552-553. Իրավակիրառական գործունեությունը երկու ձևերի բաժանման կողմնակիցներ են նաև այլ հեղինակներ, որոնք գրեթե նոյն կերպ են բնուրագրում դրանց բովանդակությունը (տե՛ս Մухаев Р.Т. Теория государства и права, М., “Издательство ПРИОР” 2001, С. 391; Марченко М.Н. Проблемы теории государства и права.— М., 2005, С. 686; Сорокина Ю.В.

Государство и право: Философские проблемы. Курс лекций, М., ОАО “Издательский дом городец”, 2004, С. 169; Комаров С.А. Общая теория государства и права (энциклопедический курс):— М., Юрайт, 1997, С. 306; Վաղարշյան Ա. Պետության և իրավունքի տեսություն-2: Դասախոսություն, ԵՊՀ, Եր., հեղինակային իրատարակություն, 2011, էջ 294):

² Տե՛ս Протасов В.Н. Теория государства и права. Проблемы теории права и государства, М., 2001, С. 206.

³ Տե՛ս Ծակун О.Ф. Теория государства и права (энциклопедический курс): Учебник. Харьков, Эспада, 2005, С. 649.

⁴ Տե՛ս Լазарев В.В., Липень С.В., Теория государства и права: М., Спарк, 2004, С. 365-366; Проблемы теории государства и права / Под ред. Сырых В.М. М., 2008, С. 314-315.

⁵ Տե՛ս Проблемы теории государства и права / Под ред. Сырых В.М. М., 2008, С. 315.

⁶ Տե՛ս Черданцев А.Ф. Теория государства и права. М., Юрайт-М, 2001, С. 259; Проблемы теории государства и права / Под ред. Сырых В.М. М., 2008, С. 315.

⁷ Տե՛ս Рассолов М.М. Актуальные проблемы теории государства и права: М., ЮНИТИ-ДАНА, Закон и право, 2011, С. 269.

⁸ Տե՛ս Теория государства и права. Курс лекций / Под ред. Матузова Н.И. и Малко А.Б. С. 74-77.

⁹ Տե՛ս Общая теория государства и права: Академический курс в трех томах / Отв. ред. Марченко М.Н. М., НОРМА, 2007, С. 400.

¹⁰ Իրավական նորմի մեկնարանում-պարզաբնումը նորմի իրական բովանդակության բացահայտմանն ուղղված ցուցումներն ու խորհրդատվություններն են: Կախված իրավական նորմը պարզաբնող սուբյեկտներից, ինչպես նաև այն իրավական հետևանքներից, որն ունի իրավական նորմի պարզաբնումը, մեկնարանումը կարող է լինել պաշտոնական և ոչ պաշտոնական: Պաշտոնական մեկնարանումն իրավունքի նորմի այնպիսի պարզաբնումն է, որը կատարում են օրենքով լիազորված պետական մարմինները և պաշտոնատար անձինք: Նման մեկնարանումն ունի իրավական հետևանքներ (այն պարտադիր է բոլորի համար, ովքեր կիրառում են տվյալ նորմը): Պաշտոնական մեկնարանումն ըստ ծավալի բաժանվում է նորմատիվի և կազուալի (տե՛ս Վաղարշյան Ա., Պետության և իրավունքի տեսություն-2, Դասախոսություններ, ԵՊՀ, Եր., հեղինակային իրատարակություն, 2011, էջ 321-322):

¹¹ Իրավական ակտերի պաշտոնական պարզաբնումներ կարող են տալ՝ ա) ՀՀ կառավարության լիազորած իրավական ակտը կիրառող գործադիրի իշխանության մարմնը՝ ըստ որում մեկ բնագավառի վերաբերյալ պարզաբնումներ տալու իրավունք ունի միայն մեկ մարմին, բ) ՀՀ կենտրոնական բանկը՝ իր կողմից կիրառվող կամ ընդունված իրավական ակտերի վերաբերյալ, գ) կարգավորող հանձնաժողովները՝ իրենց կողմից կիրառվող կամ ընդունված իրավական ակտերի վերաբերյալ, դ) ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովը՝ իր կողմից կիրառվող

կամ ընդունված իրավական ակտերի վերաբերյալ, ե) համայնքի ղեկավարը՝ համայնքի ավագանու և իր կողմից կիրառվող կամ ընդունված իրավական ակտերի վերաբերյալ:

¹² Օրինակ, Ռուսաստանի Դաշնության Սահմանադրության 125-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ ՌԴ սահմանադրական դատարանը տալիս է Սահմանադրության պարտադիր մեկնարանություն: Ցավոք, ՀՀ սահմանադրական դատարանը չունի ՀՀ Սահմանադրության մեկնարաննան լիազորությունը:

